

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ»
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ
(1887-1920թթ.)

809.198.1 8030

ՀՀ ԳԱՍ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ»
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

(1887-1920թթ.)

A 95910

Երևան
«Նաիրի» հրատարակչություն
2010



ՀՏԴ 809.198.1:050(091)

ԳՄԴ 81.2Հ+ 76.1

Ս 555

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան

Տ. Ղ. Սիրունյան

Ս 555 «Հանդես ամսօրեայի» լեզվաբանական տերմինները (1887-1920թթ.).–
Եր., Նաիրի, 2010, 148 էջ:

Աշխատանքը նվիրված է Վիեննայի Սլափարյան միաբանության
պաշտոնաթերթ «Հանդես ամսօրեայի» լեզվաբանական տերմինների ու-
սումնասիրությանը: Հանդեսի հոդվածների դասակարգման միջոցով ցույց
են տրված տերմինների կազմության բովանդակային ազդակները, կա-
տարված է նորակազմ տերմինների բառակազմական վերլուծություն,
տերմինագործածության բնույթը ներկայացված է ըստ ձևափոխության
խմբերի և ռճական առաձևահատկությունների: Տերմինների ցանկում ամ-
փովված է հիմնական փաստական նյութը՝ կից բացատրություններով:

Նախատեսված է բանասերների, լեզվի պատմություն ուսումնասիրող-
ների համար:

ՀՏԴ 809.198.1:050(091)

ԳՄԴ 81.2Հ+ 76.1

ISBN 978-5-550-01615-2

© Սիրունյան Տիգրան, 2010

Առաջաբան

Սույն աշխատանքը նվիրված է Վլեննայի Մխիթարյան միաբանության պաշտոնաթերթի՝ «Հանդես ամսօրենայի» էջերում տեղ գտած լեզվաբանական տերմինների ուսումնասիրությանը, 1887-1920 թթ. տպագրված լեզվաբանական 250 հոդվածների և հոդվածաշարերի տվյալների հիման վրա:

Աշխատանքի հիմնական խնդիրը հանդեսում գործածված նորակազմ տերմինների առանձնացումն է, կազմության սկզբունքների որոշումը, և ընդհանուր տեսանկյունով՝ նորակազմ և գործածական տերմինների գործածության հատկանիշների պարզաբանումը: Լեզվաբանական հոդվածների բովանդակային ամփոփումով, թեմատիկ տարանջատման միջոցով նախ ներկայացված է լեզվաբանական տերմիններ ստեղծելու հասկացական հիմքը, և ապա կից տրված են այդ հիմքով ստեղծված տերմինները, ուսումնասիրության ուղղությունների հարաբերակցությամբ նշված են տերմինակազմության հիմնական սզղակները: Նորակազմ տերմինների բառակազմական վերլուծությամբ ցույց է տրված դրանց բաղադրիչների իրացման կենսունակությունը, կաղապարման միջոցով ընդհանրացված է բաղադրությունների ձևաբանական, տերմինային կազմն ու տերմինատարբերի հարաբերակցությունը: Տերմինագործածության առանձնահատկությունները պարզաբանված են նախ ըստ տերմինի տեսական ելակետի, ապա ձևախմաստային խմբերի և ոճական հատկանիշների ուսումնասիրությամբ:

Լեզվաբանական նորակազմ այն տերմինները, որոնք գործածված են համեմատական լեզվաբանությանն առնչվող հոդվածներում, գիտության և ըստ այդմ հասկացական նորությամբ պայմանավորված՝ նոր են բովանդակությամբ: Հիմնականում այս տերմիններն են կազմում հանդեսի տերմինային բառապաշարի նորակազմ շերտը, սակայն պայմանականորեն. որքանով որ հնարավոր է եղել ճշտել բառալուսնային տվյալների համեմատությամբ: Մյուս ուղղություններում նորությունը հիմնականում արտահայտված է ձևով: Սա տերմին-բառ ոչ հմտակ տալուսնջատման հետևանք է, երբ տերմինը կարող է գործածվել բառային հատկանիշով և ձևով հակադրվել մույն հասկացության գործածական այլ տարբերակների: Այս տիպի տերմինների առանձնացումը առավելապես նպատակ ունի ցույց տալու տերմինագործածության մեջ բառային հատկանիշների ակտիվությունը և ըստ այդմ՝ զուգորդումների բազմազանությունը:

Ուսումնասիրության հիմնական նյութը՝ նորակազմ համարված լեզվաբանական տերմինները, ներկայացված է բառացանկով: Տերմիններին կից

տրված են դրանց բացատրությունները՝ լրացված մեջբերումներով, եթե համատեքստը պարզաբանում է տերմինի նշանակությունը: Անհրաժեշտության դեպքում, որպես համեմատության եզր, բառահոդվածներում ներառված են ԼԲ-ի տվյալները: Կազմված է մաս այդ տարիներին համդեսում տպագրված լեզվաբանական հոդվածների մատենագիտական ցանկը, որն, ի տարբերություն Վ. Բունկուցյանի մամատիպ աշխատանքի (1887-1911), ընդգրկում է նոր տվյալներ՝ ներառյալ 1920թ., ունի լեզվաբանական ուղղվածություն և գերծ է այն որոշ բացթողումներից և անճշտություններից, որ նկատվել են Վ. Բունկուցյանի հիշյալ ցանկում:

Ակնարկ Հանդեսի բնույթը, խմբագրակազմն ու թղթակիցները

Վիեննայի Մխիթարյան միաբանության լրագրային առաջին փորձը 1819-ին տպագրված թերթն էր՝ «Ծանոթութիւնք վաճառագիտութեան» վերնագրով: Թերթը տնտեսական բովանդակություն ու նպատակ ուներ, բայց պահանջարկը բավարար չեղավ հետագա տպագրության համար: 1847-ին հաջորդեց «Եւրոպայ» շաբաթաթերթը՝ հիմնականում քաղաքական լրատվությամբ, երկրորդաբար մաս բանասիրական ուղղվածությամբ: Տասը տարի անց շաբաթաթերթը, պահանջարկին հետամուտ, քաղաքական-բանասիրական ուղղվածությունը փոխեց տնտեսագիտական-ընտանեկանի և արդեն որպես երկշաբաթաթերթ՝ տպագրվեց մինչև 1863 թ. վերջը: Գրաբարի դասական մաքրությունը վերգտած Մխիթարյանները ձգտում էին մաս աշխարհաբարի գրականացմանը և այդ նպատակի զանգվածային միջոցն էր «Եւրոպան»: Թերթը նորմավորման միասնական ու համակարգված փորձ էր, որ «առաջին վայրկենէն իսկ ուշադրութիւն դարձուց մաքրել աշխարհաբարն օտարութիւններէ, ի բաց քեցել ռամկաբանութիւնները, յոկել, մշակել, բարձրացնել գրական լեզուի մը»¹: Աշխարհաբարի կանոնակարգման հիմնավոր շարունակողը դարձավ «Հանդես ամսօրեայն»:

Հանդեսի առաջին համարը հանձնվեց տպագրության 1886թ. նոյեմբերի 5-ին և փորձնական հրատարակվեց դեկտեմբերին, իսկ 1887-ից գրեթե առանց ընդհատումների մեկամսյա պարբերականությամբ շարունակվեց լույս տեսնել՝ դառնալով կայուն ամուն մամուլի հարափոփոխ պատմության մեջ:

Հանդեսի բնույթն ու նշանակությունը: Հանդեսի նպատակներն ամփոփված են ենթավերնագրերում՝ *բարոյական*. «Կը վերաբերի բնականապէս

¹ «Յուշարձան գրական ժողովածոյ առթիւ 100 ամեայ յոբելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911)», Վիեննա, 1911, էջ 51:

ման Դաստիարակական (pédagogique), որուն կից են Դպրոցական վարչութեան կամ մեթոդներու ընտրութիւնն ու բարեփոխութիւնները», *ուսումնական*։ «գիտնական աշխարհի ճշդագոյն հետազոտութեանց եւ նորագոյն տեսութեանց ալոյիւնքն եւ ազգային կամ օտարազգի գիտնական եւ բանասիրական երկասիրութիւնները հաղորդել, կամ ո՛րեւ գրաւոր գործոյ յարգն ու արժէքը ծանօթացնել», *արվեստագիտական*։ «գլխաւորաբար մարդկային ճարտարութեան վերջին (նորագոյն) կատարելագործութեանց գիտերը կամ փորձերը»¹։ 1911թ. հանդէսի բովանդակային ուղղվածությունն ստանում է մեկ հիմնական շեշտադրում, որոշարկվում է գիտական նպատակադրումը և ենթավերնագրերը վերանվանվում են մեկ անունով՝ *հայագիտական*։

«Հանդէս ամսօրեայն» «Հայոց առաջին բանասիրական լուրջ քերթն եղավ»², որի հիմքում նախ նպատակների լրջությունն էր։ Միաբանությունը, լինելով եվրոպական լեզվաբանության նորանոր նվաճումների ժամանակակիցը, «չէր կրնար գտնուիլ՝ անտարբեր»³։ Հանդեսը դարձավ եվրոպական գիտության ոչ միայն սփռող, այլև ինքնուրույն քննական կողմ։ «Հայերէն լեզուի քննական ուսումնասիրութեան դրոյիչն եղաւ»⁴։ Այն նաև ամրապնդեց միաբանության նվաճումը՝ դասական գրաբարի գյուտը՝ շարունակելով մատենագրական բառերի դասականության հաստատումը և գրչագրությամբ գրաբար մուտք գործած ոչ դասական ձևերի տարանջատումը։ Հին գրական լեզվի մաքրությանը զուգահեռ հանդեսը ձգտեց նաև նոր գրական լեզվի՝ աշխարհաբարի կանոնակարգմանը՝ փորձելով քննադատությամբ զսպել լեզվական օրինաչափություններն անտեսող ինքնագործունեությունը։ Հայերէնի ուսումնասիրությունը հանդեսում ընթացավ նաև նկարագրական եղանակով, հատկապէս առանձին բարբառների քերականական նկարագրությամբ։

Հանդեսականները։ «Հանդէս ամսօրեայի» հիմնադրումը ուղղակիորեն առնչվում է Ա. Այտընյանի անվան հետ։ Նա միաբանության ընդհանրական աբբահայր դառնալու հաջորդ տարին ձեռնամուխ եղավ այդ գործին և ի տարբերություն միաբանության նախորդ պարբերականների՝ հիմնեց ամսագիր, որ համահունչ էր միաբանության գիտական գործունեությանն ու նպատակներին։ «քնական էր՝ որ Հանդէսն յառաջադիմէր, ունենալով իբրեւ իւր հիմնիչ ու առաջին դաստիարակը գիշակաւոր անձն Գերապայծառ Այտըն-

¹ Ա. Այտընյան, Յայտարարութիւն, ՀԱ, 1887, ք. 1, էջ 2-3։

² Տե՛ս Ա. Զօյսանեան, Մեծ գիտունը, «Անահիտ», արտատպված ՀԱ-ում, 1902, ք. 10, էջ 315։

³ «Յուշարձան», էջ 51։

⁴ Հ. Արք. Բունկոյան, Ընդհանուր ցանկ «Հանդէս ամսօրեայ» ուսումնասիրքի 25 տարիներուն (1887-1911), ՀԱ, 1912, ք. 6, էջ 370։ Տե՛ս նաև Հ. Ա. Պոտուրեան, Հանդէս Ամսօրեայի 25 ամեակը, ՀԱ, 1911, ք. 10, էջ 635-638։

յան»¹: Ավելին՝ Գ. Մենևիշյանը հանդեսը գնահատում է որպես Այտրնյանի ստեղծագործություն՝ համարելով այն «խր գլուխ-գործոցների ամենավառաորը»²:

Ա. Այտրնյանը հանդեսում տպագրել է անատուրագիւր մի քանի հոդված: Վերջին հոդվածը թվագրված է 1895, սակայն Այտրնյանը հետևել է հանդեսի ընթացքին մինչև կյանքի վերջին օրը. մահացել է 1902թ. հուլիսի 20-ի գիշերը, իսկ օրվա ընթացքում «գրադած էր իւր սիրած գործերով, յատկապէս Հանդէսիս տպուելու յօդուածներն աչքէ անցնելով- բան մը՝ զոր ամենայն սիրով կը կատարէր թելթխ հիմնուելն ի վեր»³:

1887-1920թթ. «Հանդէս ամսօրեայի» խմբագրապետի պաշտոնը հաջորդաբար ստանձնել են նշանավոր մխիթարյաններ Վ. Բ. Հովնանյանը (1887-90), Հ. Հ. Տաշյանը (1890-95), Հ. Գր. Գալեմբյարյանը և Հ. Գ. Մենևիշյանը (1895-98), Հ. Վ. Մելքիսեդեկյանը (1898-1901), Հ. Թ. Կետիկյանը (1901-06), Հ. Հ. Համբարյանը (1906-09), Հ. Ն. Ալիմյանը (1909-63): Պատասխանատու խմբագիրն էր Ռ. Պարոնչը (1887-1912), որ հայտնի էր ոչ միայն հանդեսի էջերում⁴, այլև «գրաւած էր սեպիական համեստ դիրք մը աւստրիական ալպի բանաստեղծ-փիլիսոփաներուն կաճառին մէջ»⁵:

Նշված ժամանակահատվածում հանդեսում լույս են տեսել 69 հեղինակի լեզվաբանական, բանասիրական բնույթի հոդվածներ, որոնք ներկայացված են *լեզվաբանական և լեզվագիտական* բաժիններում, ինչպես նաև բաշխված *բառաբանական, սեպագրական, հնախոսական, հնագիտական, հնագրական, բանասիրական, գրական, մատենագրական, պատմական, աշխարհագրական, թղթակցություն, քնդյոյմախոսություն, գրախոսականները՝ մատենախոսական, ծանուցումները՝ այլևայլք, քնդիանուր վերնագրերի ներքո՝*

Տպագրված հոդվածների պարբերականությամբ աչքի են ընկել մխիթարյան հայրեր Բ. Հովնանյանը, Ս. Տերվիշյանը, Հ. Տաշյանը, Գ. Մենևիշյանը, Թ. Կետիկյանը, Ա. Վարդանյանը: Գործում դեր են ունեցել նաև Գր. Գա-

¹ Տես Ծանոթություն Հանդէս ամսօրեայի 21 ամեայն, սկսեալ 1887-1907, ՀԱ, 1906, ք. 11, էջ 384:

² Հ. Գ. Մենևիշեան. Գերապ. Արսէն վ. Այտրնեան. ընդհ. արքայ Մխիթարեանց Վիեննայ, ՀԱ, 1895, ք. 11, էջ 335:

³ Հ. Թ. Կետիկեան, Հանգիստ գերապայծառ ամենապատիւ տեառն Հ. Արսէն վարդապետի Այտրնեան, ՀԱ, 1902, ք. 7, էջ 4:

⁴ Տես Լեզուաբանական առածք, Կրօն եւ գիտություն, Մանուկ եւ բիբեռնիկ, ՀԱ, 1887թ., Լրագրական առածք եւ խորհրդածությունք, ՀԱ, 1888 թ., Յիւրուցան խորհուրդք, ՀԱ, 1894-1895թթ., Խորհուրդք խորհրդոց վրայ, ՀԱ, 1895թ. և այլն:

⁵ Խմբագր., Մահագոյծ, Հ. Ռափայէլ Վ. Պարոնչ, ՀԱ, 1913, ք. 2, էջ 106:

* Բաշխումն ըստ հոդվածների տես մատնագիտական ցանկում:

լեմբյարյանը, Ն. Ակինյանը, Մ. Հաճյանը, Ա. Ավետիսյանը, Պ. Չաքարյանը, Հ. Թուխիկյանը, Հ. Թումանյանը և ուրիշներ:

Հանդեսում լեզվաբանական նյութի գիտականությունը մեծապես պայմանավորված է քարգմանական հողվածներով: Միևիպարյանները, քարգմաններով օտարազգի, հիմնականում եվրոպացի լեզվաբանների ուսումնասիրություններ, գրելով հայազգիտական օտարալեզու աշխատությունների գրախոսական ակնարկներ ու վերլուծականներ, հանդեսում էջեր հատկացրին ժամանակի նշանավոր ու անվանի լեզվաբաններին՝ Հ. Հյուբշմանին, Ա. Մեյեին, Ն. Մառին, Ֆր. Մյուլլերին, Յ. Կաբստին, Ս. Բուգեին, Հ. Պեդերսենին, Պ. Եմսենին, Կ. Բյուքելմանին, Յ. Մարկվարտին, Ֆ. Ֆինկին և այլոց:

«Հանդես ամսօրեայն» տարիներ շարունակ եղավ «մարգարսն հայ բանասերներուն»¹, ընդ որում ձգտեց լինել տեսակետների չեզոք ասպարեզ: Միաբանները չէին մերժում խմբագրության համար անընդունելի տեսակետների կամ ստուգաբանությունների տպագրությունը՝ իրենց անհամաձայնությունը հայտնելով խմբագրական ծանուցումներում կամ հերքող պատասխան հողվածներում²: Հողվածների փոխկապակցվածության մի կարևոր օղակ էր բանավեճը, որ հաճախ ծավալվում էր որևէ բառի խնդրահարույց նշանակության, ստուգաբանության շուրջ: Ըստ այդմ հանդեսի լեզվաբանական նյութը լրացվում էր մաս թրթակցությամբ, հատկապես Հ. Աճառյանի, Ղ. Բաղրուպանյանի, Մ. Ս. Դավիթ-Բեկի: Հայաստանից ու հայկական գաղթօջախներից հանդեսին թրթակցում էին մաս Ն. Արմցը, Մ. Գաբրիելյանը, Կ. Բասմաճյանը, Հ. Գազանճյանը, Հ. Թիրյաքյանը, Բ. Խալաթյանը, Մ. Սաքսուդյանը, Ն. Բյուզանդացին, Տ. Պալյանը, Ս. Պարոնյանը, Հ. Սանտալճյանը, Հ. Սազգյանը, Գր. Վանցյանը և ուրիշներ:

Հանդեսի գիտական ուսումնասիրություններում կրոնական մեկնաբանությունները ոչ խոչընդոտ էին, և ոչ էլ անտեսված. միաբանները, լինելով կրոնավորներ, կարողանում էին անքննելի կրոնն ու քննական գիտությունը համատեղել սրաի վերլուծությամբ: Նրանք համեմատական գիտության երկկետային այնպիսի հարց քննելիս, ինչպիսին լեզուների ծագումն է, հաշվի էին առնում աստվածաշնչյան մեկնաբանությունը և փորձելով այն հաշտեցնել գիտությանը՝ ընդունում էին ինչպես հնդեվրոպական նախալեզվի, այնպես էլ աստվածային պարզ նախամայր լեզվի գոյությունը³: Ընդ որում Գ. Մենկիշյանը նախաաշտարակաշինության շրջանում մեկ ընդհանուր լեզ-

¹ «Յուշարձան», էջ 53:

² Խմբագրության անհամաձայնությունը հողվածին կից կամ տողատակում տե՛ս 1894, ք. 2, էջ 34-35, 1895, ք. 8, էջ 227, 1901, ք. 8, էջ 18, 26-27 և այլն:

³ Տե՛ս *Էդ. Աղայան*, Հայ լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1958, էջ 247-248:

վի գոյությունը քննում էր գիտականորեն՝ հետամուտ այն դրույթին, թե աստվածաշնչյան ճշմարտությանը հանգել է նաև գիտությունը՝ լեզվաբնույթների հեռավոր ցեղակցության տեսությամբ¹։ Իսկ այն խնդրին, որ կրոնական լուծում չունեն, բայց մեկնաբանվում էր կրոնական պատկերացումով, միաբանները հակադրվում էին ժամանակակից գիտության դիրքերից. այսպես, եթե լեզվի ծագման դեպքում նրանց համար կողմնորոշող էր նաև կրոնը, ապա «հրաշապատում» էր գրերի ստեղծման աստվածային պարզևի տարբերակը. Գ. Մենեկիշյանը հայ պատմագիրների մեկնաբանությունների մասին գրում է. «...խստապահանջ ըլլալ հարկ չէ. համոզուած ենք, թէ ըրած են իրենց կարելին, եւ աւելին ընել ձեռնհաս չէին, քանի որ չունէին իրենց ձեռքն այն միջոցները, զոր իննետասներորդ դարը մատակարարած է մեր ձեռքը, այսինքն համեմատական գիտութիւն»²։ Իսկ Թ. Թոռնյանը այն քննադատությանն է պատասխան, թե Մխիթարյանները «ըստ պիտոյից ժամանակին կրնային քանի մը գիտութեանց պակասը լեցընել. սակայն ասոր արգելք եղաւ իրենց եկեղեցական վիճակը», գրում է. «Հանդէպ այդպիսի՝ անկշիռ իրաց լռութիւնն ունի տեղ»³։

¹ Տե՛ս Հ. Գ. Մենեկիշեան, Արդի լեզուագիտութիւնը, ՀԱ, 1901, ք. 5-6, էջ 177-180։

² Հ. Գ. Մենեկիշեան, Ճագումն հայ տառից, ՀԱ, 1896, ք. 7, էջ 213։

³ Հ. Թ. Թոռնեան, Գրութեանց վրայ դիտողութիւն, ՀԱ, 1901, ք. 12, էջ 381։

ԳԼՈՒԽ I

Լեզվաբանական ուսումնասիրության ուղղությունները

1. Պատմահամեմատական լեզվաբանության հարցերը հանդեսում

Ցեղակցության սկզբունքով լեզուների խմբավորման առաջին իսկ փուլ-ծերում հայերենը եղել է դասակարգման միավոր: Հ. Պետերմանի «Հայերենի քերականությունը» գրքի գրախոս Լ. Դիֆենբախը հայերենը նախ դասեց Հնդիրանական լեզուների շարքում, ապա Հ. Հյուբշմանն ապացուցեց նրա ինքնուրույնությունը, որին զուգահեռ առժամանակ պահպանվեց հայերենի իրանական ծագման տեսակետը¹: Այս հարցում Ա. Այտընյանի կողմնորոշումը Է. Ադայանը հստակեցրել է կողմնակի փաստերից դատելով, ըստ այդմ եզրակացնելով՝ «վստահորեն ասել, թե նա Հյուբշմանի կողմը պետք է կանգնած լինեք»²: Նույնը կարելի է «վստահորեն ասել»՝ որպես կողմնակի փաստ նշելով Այտընյանի գլխավորած հանդեսում հայերենի ինքնուրույնության դրույթն ամրապնդելու միտումը:

Հայերենի ցեղակցային կապերը հանդեսում ներկայացված են՝ ա. այլ լեզուների հետ ընդհանրական համեմատությամբ³, բ. քերականական ձևերի ծագման համեմատական վերլուծությամբ, գ. բառերի ստուգաբանությամբ, փոխառությունների աղբյուրների հստակեցմամբ, դ. հնչյունական օրինաչափությունների համեմատությամբ, ե. գրերի համեմատական ուսումնասիրությամբ: Անդրադարձ կա նաև համեմատական լեզվաբանության ընդհանուր հարցերին: Այս ուղղություններով հանդեսում տպագրված հոդվածները Մխիթարյան հայագետների ուսումնասիրություններ են, ծանուցումներ, հայ և օտարազգի հայագետների թղթակցություններ, այլև եվրոպացի լեզվաբանների հոդվածների թարգմանություններ, աշխատությունների գրախոսություններ:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. I, Երևան, 1960, էջ 448:

² Էդ. Ադայան, Հայ լեզվաբանության պատմություն, էջ 287:

³ Գ. Ջահուկյանը համեմատական լեզվաբանության զարգացման կարևոր նախապայման է համարել լեզվական նոր նյութերի, հատկապես՝ խեթական ու փոխարական լեզուների հայտնաբերումը (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի տեսության ու պատմության հարցերը, էջ 389): Դրանց անդրադարձը հանդեսում տե՛ս ստորև:

1.1. Հայերենի ցեղակցությանը վերաբերող ուսումնասիրություններ

Գ. Մենկիշյանը 1891 թ. անդրադառնում է Ս. Բուզեի՝ էտրուսկերենի և հայերենի («Etruskisch und Armenisch») համեմատական ուսումնասիրությանը¹: Հայերենը, Ս. Բուզեի ուսումնասիրությամբ, նաև փոխատու լեզու է. ըստ նորվեգացի գիտնականի՝ գոթերենում կա հայկական տարր՝ պայմանավորված գոթերի՝ Կապադովկիա տեղափոխությամբ և տեղացի հայերի հետ շփումով: Այս դրույթը Ա. Վայստրովյանի թարգմանությամբ 1895 թ. տպագրվում է հանդեսում²:

1904թ. տպագրվում է Պ. Ենսենի «Հատերեն եւ հայերեն» հոդվածը, որտեղ համեմատական տվյալներով փորձ է արվում ցույց տալ նշված լեզուների ցեղակցային համարժեքները³: Նույն թվականին Թ. Կետիկյանը նախ ծանուցում է Հ. Պեդերսենի «Հայերեն եւ դրացի լեզուները» աշխատության մասին⁴, ապա 1905-06 թթ. թարգմանաբար ներկայացնում «Հայերենի ծայնական դրութեան մասին նախակարգ դիտողութիւններ» հատվածը⁵:

1907 թ. Ն. Մառի հաբեթական տեսության ու ըստ այդմ հայերեն-աղվաներեն առնչությունների վերաբերյալ տպագրվում է Վ. Գաբինյանցի հոդվածը⁶: 1911 թ. Ստ. Լիսիցյանը ամփոփում է Մառի նոր ուսումնասիրությունները⁷, իսկ 1912 թ. Լ. Լիսիցյանի թարգմանությամբ տպագրվում է նույն հեղինակի լազերենի ուսումնասիրությունը⁸:

1912 թ. տպագրվում է նաև Հր. Աճառյանի «Թոխարերեն եւ հայերեն» հոդվածը⁹, որտեղ լեզվաբանն ամփոփում և լրացնում է հայերեն-թոխարերեն համեմատական ուսումնասիրությունները: Մինչ այդ 1909 թ. տպագրվել էր Հովհ. Սազգյանի «Աքքադեան լեզու» հոդվածը, ըստ որի աքքադացիները

¹ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, «Նոր հայագիտին» երկրորդ երկասիրութիւնը, ՀԱ, 1891, ք. 3, էջ 70-71:

² Տե՛ս Հ. Ա. Վոյստրովեան, Սոփոս Պուկկե եւ հայերեն լեզուին գոթարենի վրայ ըրած ազդեցութիւնը, ՀԱ, 1895, ք. 8, էջ 227-231, ք. 9, էջ 259-261:

³ Տե՛ս Պ. Ենսեն, Հատերեն եւ հայերեն, ՀԱ, 1904, ք. 6, էջ 180-184, ք. 9, էջ 271-276:

⁴ Տե՛ս Հ. Թ. Կետիկեան, Հայերեն եւ դրացի լեզուները, ՀԱ, 1904, ք. 12, էջ 380:

⁵ Տե՛ս Հ. Պեդերսըն, Հայերեն եւ դրացի լեզուները, ՀԱ, 1905, ք. 1, էջ 1-5, ք. 2, էջ 37-41, ք. 5, էջ 150-158, ք. 9, էջ 276-281, ք. 11, էջ 339-346, 1906, ք. 1, էջ 20-23, ք. 3, էջ 68-71, ք. 4, էջ 105-113, ք. 5, էջ 130-135, ք. 7, էջ 193-199, ք. 8, էջ 235-239, ք. 9, էջ 279-287:

⁶ Տե՛ս Վ. Գաբինեանց, Albaniaca (Ադուանք), ՀԱ, 1907, ք. 6, էջ 187-189:

⁷ Տե՛ս Ստ. Լիսիցեան, Ն. Մառի նոր ուսումնասիրութիւնները, ՀԱ, 1911, ք. 11, էջ 696-700, ք. 12, էջ 749-759:

⁸ Տե՛ս Ն. Միւն, Դաներեն (լազերեն) լեզուի քերականութիւն, ՀԱ, 1912, ք. 10, էջ 598-616:

⁹ Տե՛ս Հ. Աճառեան, Թոխարերեն եւ հայերեն, ՀԱ, 1912, ք. 1, էջ 37-40:

հայկական լեռնաշխարհի հավանական բնիկներն են. ի հավաստումն դրա մեջբերված է արքադերեն-հայերեն համեմատական բառացանկ¹:

1.2. Հայերենի հնչյունական, բառային և քերականական ուսումնասիրություններ

1903թ. տպագրվում է Հ. Աճառյանի գրախոսականը Ա. Մեյեի ուսումնասիրության վերաբերյալ՝ առնչվալ հիմնականում հայերենի հնչյունական օրենքներին, քերականական կազմությանը («Esquisse d'une grammaire comparée de l' Arménien classique»): Շեշտելով աշխատության «կատարեալ արժանաւորութիւնը»՝ Աճառյանը համառոտ վերաշարադրանքին կցում է որոշ դիտողություններ, ինչպես օրինակ՝ հայերենի նախավանկ շեշտակրության և գրաբարի բարբառային հիմքի տեղանքի վերաբերյալ²: Նույն թվականին տպագրվում է Հ. Աճառյանի մեկ այլ գրախոսական Հ. Պեդերսենի «Նպաստ մը հայ լեզուի պատմութեան» աշխատության մասին. «Պեդերսենի գործը Հիբլմանի կամ Մէյեի քերականութեանց նման դասական ամբողջական աշխատութիւն մը չէ, այլ այն նախապատրաստական ու մասնական ուսումնասիրութիւններէն մէկը, որոնց վրայ պիտի հիմնուի օր մը հայերէնի լիակատար քերականութիւնը»³:

ա. Հնչյունական ուսումնասիրություններ: 1903 թ. տպագրվում է Հ. Աճառյանի «Ժալդերեն ic եւ e եւ հայերեն ե եւ է ձայները» հոդվածն առ այն, որ հայերենի e-ն իր հնչյունական երկակիությամբ (ե և ե) խաղաղական ծագում ունի⁴: 1905 թ. «Նոր ձայնական օրենք մը նձ=զ» հոդվածում Աճառյանը *կո-րիզ* և բարբառային *կողինձ* բառերի համեմատությամբ սահմանում է գ-նձ լծորդությունը՝ արտահայտված նաև *անձն-ազն*, *սինձն-սեզ*, *ինձ-մեզ*, *ինձ-զիս* և այլ օրինակներում⁵: Նույն թվականին տպագրված «Քմականներու կոկորդական մնալը» հոդվածում լեզվաբանը Մեյեի հնչյունական օրենքի կիրառմամբ, ըստ որի «նախատառ քմական մը կը փոխանակուի կոկորդականով, եթէ բառին մէջ կայ որեւիցէ շչաձայն մը», *քաղաշք* բարբառային բառը

¹ Տե՛ս *Յովհ. Մազրզեան*, Արքադերեն լեզու, ՀԱ, 1909, ք. 11, էջ 333-336:

² Տե՛ս Հ. *Աճառեան*, Esquisse d'une grammaire comparée de l' arménien classique, Meillet A., 1903, ք. 4, էջ 105-110:

³ Տե՛ս Հ. *Աճառեան*, Նպաստ մը հայ լեզուի պատմութեան, Հ. Պեդերսեն, ՀԱ, 1904, ք. 10-11, էջ 335-336:

⁴ Տե՛ս Հ. *Աճառեան*, Ժալդերեն ic եւ e եւ հայերեն ե եւ է ձայները, ՀԱ, 1903, ք. 3, էջ 67-69:

⁵ Տե՛ս Հ. *Աճառեան*, Նոր ձայնական օրենք մը նձ=զ, ՀԱ, 1905, ք. 11, էջ 346:

բխեցնում է *ջաղացք* ձևից¹։ Նշված հնչյունական օրենքի միջոցով Աճառյանը բացատրում է մաս *չորեքշաբթի* բառի՝ Վանի *քյտօրթօքյըշպէաթ, քյտօրթօշպէաթ* բայբառային տարբերակների հնչյունական անցումները²։

1907 թ. վերստին անդրադառնալով խաղիներնի հնչյունական համակարգին՝ Հ. Աճառյանը «Խաղիներնը օ ունէ՞ր»³ հոդվածի հարցադրմանն ի պատասխան քննում է սեպագրերի օրինակներ և եզրակացնում, որ «խաղիներնը օ ձայնէն զուրկ էր»⁴։ Խաղիներնը չուներ մաս երկար ձայնավորներ. սա էլ հաջորդ եզրակացությունը՝ ներկայացված «Խաղիներնը երկար ձայնավորներ ունէ՞ր» հոդվածում⁵։ Հնչյունական մեկ այլ՝ խ/կ լծորդության մասին 1909 թ. տպագրվում է Աճառյանի «Խ եւ Կ ձայներուն լծորդութիւնը» հոդվածը՝ *կաղաղանալ-խաղաղանալ, տխեղծ-տկեղծ* և այլ բառերի զուգակցությամբ⁶։ Հետագայում ևս Աճառյանը կիրառում է խ/կ լծորդության սկզբունքը՝ հիմնավորելով *մկրտել-մխրճել* անցումը⁷։

բ. Զերականական ուսումնասիրություններ։ 1893թ. տպագրված Ա. Մեյեի «Դիտողություններ հայերենի վերաբերյալ» (*Notes Armeniennes*) ուսումնասիրության «Դիտողություններ հայերենի հոլովման վերաբերյալ» և «Ստուգաբանություններ» մասերի վերլուծությունը տեղ է գտել Հ. Տաշյանի «Քանի մը հրատարակութիւնք» գրախոսական շարքում⁸։ Հոդվածը տեղեկատվական է՝ ձևաբանական տարբեր միավորների ծագման, ստուգաբանական սկզբունքների մասին շարադրանքով։ Ա. Մեյեի «Հետազոտություններ հայերենի համեմատական շարահյուսության» հիմնգ մասից բաղկացած հոդվածաշարի առաջին՝ «Ցուցականներ» մասի («*Recherches sur la syntaxe comparée de l'arménien, Les démonstratifs*») տպագրության վերջին թվականին՝ 1898-ին, հանդեսում տպագրվում է դրա արձագանքը՝ անստորագիր գրախոսական, որում գնահատված են հայերենի հոդերի ուսումնասիրության գիտականությունը և դրա արդյունքը՝ հոդերի՝ համեմատական ուսումնասիրությամբ հաստատված հնությունը⁹։

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Զնականներու կոկորդական մնալը, ՀԱ, 1905, ք. 8, էջ 254։

² Տե՛ս Հ. Աճառյան, Չորեքշաբթի, ՀԱ, 1906, ք. 5, էջ 129-130։

³ Տե՛ս Հ. Աճառյան, Խաղիներնը օ ունէ՞ր, ՀԱ, 1907, ք. 3, էջ 93-94։

⁴ Ն. տ., էջ 94։

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Խաղիներնը երկար ձայնավորներ ունէ՞ր, ՀԱ, 1913, ք. 8, էջ 491-496։

⁶ Տե՛ս Հ. Աճառյան, Խ եւ Կ ձայներուն լծորդութիւնը, ՀԱ, 1909, ք. 5, էջ 159-160։

⁷ Տե՛ս Հ. Աճառյան, Հայկականք, ՀԱ, 1914, ք. 9, էջ 564-565։

⁸ Տե՛ս Հ. Յ. Տաշյան, Երոյական հրատարակութիւնք, ՀԱ, 1893, ք. 11, էջ 338-339։

⁹ Տե՛ս Ա. Այտընեան, Հետազոտութիւնք ի վերայ Համեմատական համաձայնութեան հայերէն լեզուի, ՀԱ, 1898, ք. 12, էջ 377-379։

1904թ. տպագրված Հ. Պեդերսենի «Հին հայերեն լեզուի շեշտը» հոդվածում հին հայերենին բնորոշ է համարված երաժշտական շեշտը¹: Ընդ որում հոդվածը քարգմանված չէ. Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր Պեդերսենը այն գրել է հայերեն²:

1906-07թթ. Հ. Տաշյանի քարգմանությամբ տպագրվում է Հ. Պեդերսենի «Հին հայերենի ցուցական դերանունները» հոդվածաշարը³, բաժանված չորս մասի. ներածականում քննված են դերանունների հնդեվր. նախաձևերը, երկրորդ և երրորդ մասերում հայերենի դերանունները ներկայացված են նախ Ա. Մեյեի մեկնաբանությամբ, ապա հեղինակի ուսումնասիրությամբ, իսկ վերջին մասը «հնդիկեր. ձայնաորաց փոխանակութեան մասին»⁴ է:

1912թ. Ա. Վարդանյանի քարգմանությամբ տպագրվում է Կ. Օշտիրի «Հայ. յոգնակի սեռ., տր. և բցո.» հոդվածն⁵, ըստ որի «հայ. ց հոլովին սեռ., տր. և բցո. մտքով գործածութիւնը միակ հոլով է մը զարգացած է՝ ըլլայ այն սեռ., տր., ըլլայ բցո.»⁶, ապա «Յ-կատարեալը եւ իւր վերջաւորութիւնները» հոդվածը՝ ցոյցական հիմքի ց և նախորդող ա, ե, ի, ոյ, եւս հնչյունների ստուգաբանական ուսումնասիրության մասին⁷:

1914թ. տպագրվում է Կ. Տրայմերի «Անուանական գործիականի, եւ յոգն. ա եւ բ դեմքի ք.ի մասին» հոդվածը, որտեղ քննված են -ք հոգնակերտի անվանական ու բայական կազմությունները⁸:

գ. Ստուգաբանական ուսումնասիրություններ: «Հայերեն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը» հոդվածում (տպագրված 1887թ.) Մենկիշյանը, «Մ.» ստորագրությամբ*, նախ լեզվի ճշտության էական հատկանիշն է համարում բառի նշանակության «ճիշդ եւ որոշ» լինելը, այնուհետև «ըմբան, կոկոր, որկոր» բառերի իմաստային թյուրմբռնումը ուղղելու նպատակով

¹ Տե՛ս Հ. Պեդերսեն, Հին հայերեն լեզուի շեշտը, ՀԱ, 1904, ք. 5, էջ 131-133:

² Տե՛ս Հ. Թ. Կեփիկեան, Հայերենագետ ուսուցչապետն դոկտ. Հոլգեր Պեդերսեն, ՀԱ, 1904, ք. 4, էջ 129:

³ Տե՛ս Հ. Պեդերսեն, Հին հայերենի ցուցական դերանունները, 1906, ք. 10, էջ 289-297, ք. 11, էջ 337-341, ք. 12, էջ 368-373, 1907, ք. 3, էջ 90-93, ք. 4, էջ 117-121:

⁴ Ն. տ., էջ 289:

⁵ Տե՛ս Կ. Օշտիր, Հայ. յոգնակի սեռ., տր. և բցո., ՀԱ, 1912, ք. 3, էջ 170-176:

⁶ Ն. տ., էջ 170:

⁷ Տե՛ս Կ. Օշտիր, Յ-կատարեալը եւ իւր վերջաւորութիւնները, ՀԱ, 1912, ք. 6, էջ 356-366:

⁸ Տե՛ս Կ. Տրայմեր, Անուանական գործիականի, եւ յոգն. ա եւ բ դեմքի ք.ի մասին, ՀԱ, 1914, ք. 9, էջ 507-518:

* «Մ»-ն «Մենկիշեան» ազգանվան համառոտագրումն է. հմմտ. «(=Մ)». Յ. Տաշեան, Բառախօսական դիտողութիւններ հայերեն գիտական լեզուի, 1926, Վիեննա, էջ 46:

ստուգաբանում է դրանք¹: Նույն թվականին տպագրված ««Հերիսայ, կասկ եւ ձէք» բառերն» հոդվածում Գ. Մենկիշյանը վերլուծում է Պ. դը Լագարդի ստուգաբանությունները: Վերլուծության նյութը երեք բառ է, բայց հագեցած համեմատական տվյալներով²:

1888թ. տպագրված «Պր. Ամանտ Շվայկեր-Լերխենֆելտ եւ երկիր հայոց» հոդվածաշարը պատմագիտական է, բայց ունի նաև հնագույն անձնանունների և տեղանունների ստուգաբանության հատված, որին կից ներկայացված են Հ. Թուխիկյանի դիտողությունները³:

«Հնչյունաբանական դիտողություններ» ուսումնասիրության «Հայերեն ստուգաբանությունների մասին» (Notes de phonétique. III, Etymologies arméniennes) հոդվածի տպագրության հաջորդ թվականին՝ 1891-ին, «Քանի մը հայերեն բառերու ստուգաբանութիւն» հոդվածով⁴ Հ. Տաշյանը վերաշարադրում է Ա. Մեյեի տեսակետները հայերենի բաղաձայնական տեղաշարժի բնույթի և թվով յոթ բառերի ծագման վերաբերյալ:

1892թ. լույս տեսան Հ. Հյուբշմանի «Die semitischen Lehnwörter im Altarmenischen» և «Armeniaca» հայագիտական հոդվածները: Նույն թվականին հանդեսում տպագրվում է «Armeniaca»-ն «Հայկականք» վերնագրով, իսկ 1893թ. Հ. Տաշյանի քարգմանությամբ տպագրվում է նաև յոթ մասից բաղկացած մյուս ծավալուն հոդվածը «Մեմական փոխառեալ բառեր հին հայերենի մէջ» վերնագրով⁵: «Հայկականք» հոդվածում ներկայացված է յոթ բառի ստուգաբանություն, հաջորդ հոդվածում՝ հայերենում ասորական և արաբական փոխառյալ բառերը՝ օտար համարժեքներով, այլև դրանց հնչյունական վերլուծությունը՝ վերստին համեմատական սկզբունքով: Հաջորդ տարի հանդեսում Հ. Տաշյանի քարգմանությամբ տպագրվում է Հ. Հյուբշմանի «Հայկական յատուկ անուանք» (Die altarmenischen Personennamen) հոդվածը երկու մասով⁶: Հոդվածը հայկական անվանումների հնդեվրոպական առնչությունները բացահայտելու փորձ է՝ բարոյության հնդեվրոպական եղա-

¹ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Հայերեն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը, ՀԱ, 1887, ք. 3, էջ 40-43:

² Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, «Հերիսայ, կասկ եւ ձէք» բառերն, ՀԱ, 1889, ք. 8, էջ 158-159:

³ Տե՛ս, Հ. Զ. Թուխիկեան, Պր. Ամանտ Շվայկեր-Լերխենֆելտ եւ երկիր հայոց, ՀԱ, 1888, ք. 1, էջ 8-11:

⁴ Տե՛ս Հ. Զ. Տաշեան, Քանի մը հայերեն բառերու ստուգաբանութիւն, ՀԱ, 1891, ք. 2, էջ 44:

⁵ Տե՛ս Հ. Հյուշման, Հայկականք, ՀԱ, 1892, ք. 12, էջ 353-356, Մեմական փոխառեալ բառեր հին հայերենի մէջ, 1893, ք. 1, էջ 14-18, ք. 3, էջ 81-84, ք. 5, էջ 148-150, ք. 6, էջ 187-189, ք. 7, էջ 213-215, ք. 8, էջ 253-255, ք. 9, էջ 262-266:

⁶ Տե՛ս Հ. Հյուշման, Հայկական յատուկ անուանք, ՀԱ, 1894, ք. 6, էջ 175-178, ք. 7, էջ 208-211:

նակի կիրառելիության ուսումնասիրությամբ: 1896թ. տպագրվում է Գ. Մենկիշյանի գրախոսությունը Հ. Հյուբշմանի «Հայերեն քերականություն» գրքի «Հայերենի ստուգաբանություն» կոչվող առաջին մասի (Armenische Grammatik. 1. Teil, Armenische Etymologie) վերաբերյալ¹:

Հ. Հյուբշմանի ուսումնասիրություններն այլ լեզվաբանների կողմից լրացվեցին պատմահամեմատական նոր տվյալներով: «Մեմական փոխառնալ բառեր հին հայերենի մեջ» հոդվածի տպագրության հաջորդ տարին՝ 1894 թ., որպես դրա բովանդակային շարունակություն, Հ. Տաշյանի կողմից թարգմանվում ու չորս մասով տպագրվում է Հ. Հյուբշմանի աշակերտ Կ. Բարեկմանի «Յունական փոխառնալ բառեր հայերենին մեջ» հոդվածը (Die griechischen Fremdwörter im Armenischen)²: Մինչ այդ հանդեսում թարգմանաբար «Հայկականք Ջ.» վերնագրով տպագրվել էին Ֆր. Մյուլլերի 69 բառերի ստուգաբանությունները՝ որպես Հյուբշմանի ուսումնասիրած 299 բառերի լրացում³: 1894 թ. նորից «Հայկականք» վերնագրով հանդեսում տպագրվում է նույն գիտնականի այլ ստուգաբանություններ (Pahlavi, neupersische und armenische Etymologien etc.)⁴, որոնք, ըստ թարգմանիչ Հ. Տաշյանի, «...յառնում կամ սրբագրություն են Հիւսշման հայագիտին «Մեմական փոխառնալ բառեր հին հայերենի մեջ» գրութեան»⁵:

Ս. Բուզեն հանդեսի տեսադաշտում հայտնվեց, երբ հրատարակվեց նրա հայագիտական առաջին աշխատությունը՝ «Նպաստ հայոց լեզվի ստուգաբանական լուսաբանության» վերնագրով (Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache): Այս գրքույկի գիտականության մասին «Նոր հայագետ մը» վերնագրով հոդված⁶ է տպագրում (1890թ.) Գ. Մենկիշյանը՝ գիտնականի ստուգաբանական հմտությանը զուգահեռ նկատելով նաև թերություններ: Ս. Բուզեն հաջորդ տարիներին ևս շարունակում է մնալ հանդեսի էջերում. վերստին Գ. Մենկիշյանի վերլուծությամբ տպագրվում է «Պոկկե հայերենագիտին նոր մեկ երկասիրութիւնը» վերնագրով հոդվածը⁷: Նյութը գիտնականի նոր ստուգաբանություններն են, փոխառյալ համարված բառացանկը, ստուգաբանական շտկումները: Ս. Բուզեի մահից հետո հանդեսի խմբագրությունը դիմում է Հ. Պեդերսենին՝ մահախոսական գրելու

¹ Տե՛ս Հ. Գ. Մենկիշյան, Հայերեն քերականություն ի Հիւբշմանէ, մասն Ա, Հայերեն ստուգաբանութիւն, հատում Ա, Հին հայերենի մեջ պարսկերէն և արաբերէն փոխառնալ բառեր, ՀԱ, 1896, ք. 6, էջ 182-184:

² Տե՛ս Կ. Պրոքերման, Յունական փոխառնալ բառեր հայերենին մեջ, ՀԱ, 1894, ք. 1, էջ 25-29, ք. 2, էջ 47-49, ք. 3, էջ 83-87, ք. 5, էջ 155-157:

³ Տե՛ս Փ. Միլլեր, Հայկականք Ջ., ՀԱ, 1890, ք. 12, էջ 283-285:

⁴ Տե՛ս Փ. Միլլեր, Հայկականք, ՀԱ, 1894, ք. 10, էջ 293-295:

⁵ Ն. տ., էջ 293:

⁶ Տե՛ս Հ. Գ. Մենկիշյան, Նոր հայագետ մը, ՀԱ, 1890, ք. 3, էջ 53-54:

⁷ Տե՛ս Հ. Գ. Մենկիշյան, Պոկկե հայերենագիտին նոր մը երկասիրութիւնը, ՀԱ, 1892, ք. 1, էջ 20-21:

խնդրանքով: «Հայ լեզուին համար Բուզգե մեծ ծառայություն մատուցած է, սակայն... ինչ ինչ բաներ հայերենի հետ կապել կ'ուզեր, մինչ հայերենի հետ ամենեւին կապակցություն չունէին», - գրում է Հ. Պեդերսենը՝ համոզիչ ստուգաբանությունները համարելով Բուզգեի հիմնական ներդրումը հայագիտության մեջ:

1892թ. թարգմանաբար տպագրվում է Ն. Մառի «Հայոց «սեպուխ» եւ վրացոց «սեփե» բառերի ստուգաբանությունը» հոդվածը, որտեղ «սեպուխի» իմաստային առնչակիցն է ներկայացված «տան որդին»¹:

«Թղթակցություն» վերնագրով 1894 թ. թարգմանաբար տպագրվում է մահ Ա. Գրենի՝ «կովկաս» բառի՝ իրանական ծագումը հաստատող ստուգաբանությունը: Թարգմանությանը կցված է խմբագրության ստուգաբանական հերքումը²:

1896թ. հանդեսում ստուգաբանական անհամաձայնության առիթ է դառնում «գինի» բառի ծագման հարցը: Հ. Արշեզը «Հայերենի «գինի» եւ Բաբելաստանի նուիրական ծառը» հոդվածում «գինին» ստուգաբանում է բաբելական սուրբ ծառի «գ»-ի անվամբ³: Սկսվում է բանավեճ՝ պատմահամեմատական տվյալների երկկողմ հակադրությամբ: Հաջորդ համարում տպագրվում է Գ. Մենկիշյանի հերքում-հոդվածը «Հայերենի «գինի» բառին ծագումը» վերնագրով⁴: Պատասխան հոդվածում Արշեզը հակադրվում է հավելյալ օրինակներով⁵:

1899թ. տպագրվում է Հ. Աճառյանի «Հայերենի բնածայն եւ կրկնաւոր բառերը (630 բառի քննություն)» հոդվածը⁶: Այստեղ լեզվաբանն առանձնացրել է բնածայն և կրկնավոր բառերի վեց կադասյար, անդրադարձել է դրանց ծագման հարցերին՝ ճշտելով համապատասխանությունը մախաձների հետ:

1901թ. Թ. Կետիկյանը «Հայկականը» հոդվածում ներկայացնում է Հյուբշմանի ստուգաբանությունները՝ տարակուսական համարելով *ուստր. շէն, սկունդ, դեմեսլիկու, Նախճուան* բառերի մեկնաբանությունները⁸: Հա-

¹ Տես Հ. Պեդերսեն, Կենսագրական. Սոֆուս Բուզգե, ՀԱ, 1907, ք. 10, էջ 308:

² Տես Ն. Մառ, Հայոց «սեպուխ» եւ վրացոց «սեփե» բառերի ստուգաբանությունը, ՀԱ, 1892, ք. 6, էջ 164-165:

³ Տես Խմբագրական, Թղթակցություն, ՀԱ, 1894, ք. 2, էջ 33-35:

⁴ Տես Զ. Արշեզ, Հայերենի «գինի» եւ Բաբելաստանի նուիրական ծառը, ՀԱ, 1896, ք. 9, էջ 267-270:

⁵ Տես Հ. Գ. Մենկիշյան, Հայերենի «գինի» բառին ծագումը, ՀԱ, 1896, ք. 10, էջ 289-292:

⁶ Տես Զ. Արշեզ, «Գինի»-ի ծագման խնդիրը, ՀԱ, 1899, ք. 3, էջ 83:

⁷ Տես Հ. Աճառյան, Հայերենի բնածայն եւ կրկնաւոր բառերը (630 բառի քննություն), ՀԱ, 1899, ք. 7, էջ 202-207, ք. 8, էջ 232-236:

⁸ Տես Հ. Թ. Կետիկյան, Հիւբշմանն եւ իւր նոր «Հայկականը»-ը, ՀԱ, 1901, ք. 12, էջ 359-363:

մանուն մեկ այլ հողվածում ներկայացված են Հյուբշմանի այլ ստուգաբանություններ՝ հատկապես գ սկզբնահնչյունով 83 բառ՝ 38 հայտնի և 45 անհայտ բացատրությամբ, մաս հողվների ձգողության՝ հողվանմանության դեպքեր¹։ Հանդեսի 1904թ. թիվ 9 համարում Թ. Կետիկյանը ծանուցում է Հ. Հյուբշմանի հայկական տեղանունների ուսումնասիրության մասին՝ նշելով, որ խմբագրության նպատակն է տպագրել այն «թերեւս յաջողո՞թքով իսկ»²։ Եվ հաջորդ թիվ 10 համարից մինչև 1907թ. տպագրվում է Հ. Հյուբշմանի «Հին հայոց տեղոյ անունները» հողվածաշարը³։ Այն ծավալուն աշխատություն է, որում հաջորդաբար ներկայացված են մախ պատմական՝ ներառյալ էթնիկ կազմի մասին տվյալներ, ապա հին ու նոր աղբյուրների մեջբերումներով մահանգների, գավառների, գետերի ու լճերի անվանումները, դրանց կազմությունը և որպես ամփոփում՝ «այբուբենական ցանկ տեղոյ անունաց, որ ամբողջապէս կամ կիսով չափ մեկնելի են»⁴։

1903-04թթ. տպագրվում է Հ. Պեդեթսենի «Պատմութիւն հայերէն լեզուի» աշխատությունը⁵։ Գ. Գարանձիլյանի բարգմանությամբ ու ծանոթագրությամբ. «Հեղինակը կը փորձէ հայերէն շատ մը ոչ լատ ստուգուած բառեր ընդի. համեմատական-լեզուագիտութեան օրինօք լուսաբանել»⁶։

1903-07թթ. տպագրվում է Ղ. Բաղդուսյանյանի «Ստուգաբանական հետազոտութիւնք» հողվածաշարը։ Հեղինակը տարալեզու համեմատությամբ ստուգաբանել է բազմաթիվ բառեր, ներկայացրել օտար լեզվաբանների ստուգաբանություններ՝ որպես վերլուծությունների հիմք կամ համեմատության եզր⁷։ Հաջորդ տարի և ընդհատումներով մաս 1910-ին շարունակվում է

¹ Տես Հ. Հիւլշման, Հայկականը, 1907, ք. 6, էջ 183-187, ք. 8, էջ 248-252։

² Հ. Թ. Կետիկեան, Հին հայկական տեղոյ անունները, ՀԱ, 1904, ք. 9, էջ 286։

³ Տես Հ. Հիւլշման, Հին հայոց տեղոյ անունները, ՀԱ, 1904, ք. 10-11, էջ 289-304. ք. 12, էջ 372-379, 1905, ք. 1, էջ 27-28, ք. 2, էջ 53-63, ք. 3, էջ 79-92, ք. 4, էջ 122-127, ք. 6, էջ 186-189, ք. 8, էջ 245-252, ք. 10, էջ 299-308, ք. 12, էջ 376-382, 1906, ք. 1, էջ 7-8, ք. 3, էջ 79-86, ք. 5, էջ 153-158, ք. 6, էջ 187-191, ք. 7, էջ 221-223, ք. 8, էջ 248-250, ք. 10, էջ 310-318, ք. 12, էջ 361-366, 1907, ք. 1, էջ 14-16, ք. 2, էջ 54-60, ք. 6, էջ 177-182, ք. 7, էջ 211-212։

⁴ Ն. տ., էջ 153։

⁵ Տես Հ. Պեդեթսըն, Պատմութիւն հայերէն լեզուի, ՀԱ, 1903, ք. 3, էջ 65-67, ք. 5, էջ 138-143, ք. 7, էջ 193-195, ք. 12, էջ 358-363, 1904, ք. 1, էջ 9-14։

⁶ Ն. տ., էջ 65։

⁷ Տես Ղ. Բաղդուսյանեան, Ստուգաբանական հետազոտութիւնք, ՀԱ, 1903, ք. 5, էջ 150-152, ք. 7, էջ 220-222, ք. 12, էջ 380-382, 1904, ք. 9, էջ 94, ք. 6, էջ 184-185, ք. 10-11, էջ 334, 1905, ք. 5, էջ 158-159, ք. 8, էջ 253-254, ք. 10, էջ 316-319, 1906, ք. 1, էջ 23-25, ք. 2, էջ 55-58, ք. 3, էջ 71-73, ք. 6, էջ 172-174, ք. 11, էջ 341-347, ք. 12, էջ 366-368, 1907, ք. 1, էջ 16-17, ք. 3, էջ 89-90, ք. 10, էջ 303-306, 1908, ք. 1, էջ 23-27, ք. 3, էջ 85-86, ք. 5, էջ 151-155, ք. 6, էջ 186-189, ք. 7, էջ 212-215, ք. 8, էջ 245-247, ք. 9, էջ 274-276։

հողվածաշարի տպագրությունը՝ վերանվանված «Լեզուաբանականը»¹: Իսկ 1907թ. տպագրվել էր նույն հեղինակի մեկ այլ հողվածաշար, որտեղ համառոտագրված է Ս. Բուգեի լիկիերեն լեզվի ուսումնասիրությունը («Lykische Studien II»)²:

1906-07թթ. տպագրվում են նաև հողվածներ՝ մեկ բառի ստուգաբանությամբ: 1906թ. «Օ՛ն» վերնագրով հողվածում Հ. Աճառյանը «օն» բառի համար նշում է հունական աղբյուր³: 1907թ. Ա. Ավետիսյանը «Հայերեն Աստուած բառը» հողվածում⁴ հետևյալ ստուգաբանությունն է առաջարկում. «սա- հնդեկլ.՝ համարժեք լատ. sum od. բային, տ- դերանվանական մասնիկ՝ հնդեկլ. ti նախածնից, ու- «ով»ի հնչյունափոխությամբ առաջացած, «-ած, զոր շատ մեծ են հնդեկ. -vant չ. ընդ. ներկայեն մեկնելու...»⁵: Նույն թվականին թարգմանաբար տպագրվում է Ն. Մառի *մխիթար* բառի ստուգաբանությունը, ըստ որի՝ ինչպես *քաջալերել* բառը բաղադրված է «քաջ» ձևությից և «լեր» հրամայականից, այնպես էլ *մխիթարել* բառը՝ «մի խիթար» (խիթալ=վախենալ) կապակցությունից, որ նաև վրացական գուգահեռ ունի⁶:

1906-08թթ. տպագրվում են Ե. Լիդենի ստուգաբանությունները լուսաբանող հողվածներ՝ Բ. Խալաթյանցի մեկնաբանությամբ⁷, ապա Հ. Պեդերսենի գլախոսությամբ⁸:

1908թ. Հ. Աճառյանը «Հայերեն ստուգաբանություններ» վերնագրով անդրադառնում է բուսաբանական բառերի ստուգաբանությանը՝ քաղված Հայբուսակից և Առձեռն բառարանից⁹: Նույն թվականին Հ. Աճառյանը գլախոսում է Հովհ. Արքիմյանի բուսաբանական բառացանկը՝ գլխական համագործերով: Աճառյանի նկատառումները կաղննորոշիչ բնույթի են. հավաքագրել ժողովրդի գործածած բուսաբանական բառերը, որոշել դրանց գլխական համարժեքները՝ համեմատելով մատենագրական օրինակների հետ¹⁰:

¹ Տես Ղ. *Բաղրուպանես*, Լեզուաբանականը, ՀԱ, 1908, ք. 10, էջ 312-315, ք. 11, էջ 341-344, 1910, ք. 3, էջ 93-94, ք. 4, էջ 118-119:

² Տես Ղ. *Բաղրուպանես*, Լիկերենն եւ հայերենը ըստ Sophus Bugge-ի, ՀԱ, 1907, ք. 4, էջ 115-117, ք. 6, էջ 182:

³ Տես Հ. *Աճառեան*, Օ՛ն, ՀԱ, 1906, ք. 5, էջ 129:

⁴ Տես Հ. Ա. *Ավետիսեան*, Հայերեն Աստուած բառը, ՀԱ, 1907, ք. 9, էջ 277-285:

⁵ Ն. տ., էջ 281:

⁶ Տես Ն. Մառ. *Մխիթար* անուան եւ մխիթարեալ բայի ստուգաբանութիւնը, ՀԱ, 1907, ք. 1, էջ 17-18:

⁷ Տես Բ. *Խալաթեանց*, Հայերեն ուսումը, Լիդեն Ե., ՀԱ, 1906, ք. 11, էջ 333-337, Հայերեն ուսումնասիրութիւնը, ՀԱ, 1908, ք. 3, էջ 86-87:

⁸ Տես Հ. *Պեդերսըն*, Եւայլղ Լիդենի հայկական ուսումնասիրութիւնը, ՀԱ, 1907, ք. 3, էջ 95:

⁹ Տես Հ. *Աճառեան*, Հայերեն ստուգաբանութիւններ, ՀԱ, 1908, ք. 4, էջ 120-124:

¹⁰ Տես Հ. *Աճառեան*, Տունկերը եւ անոնց հայերեն անունները, Արքիմեան Յովհ., ՀԱ, 1908, ք. 12, էջ 379-381:

1911թ. քարգմանաբար տպագրվում է Ֆր. Կրեկիցի աշխատությունը՝ նվիրված բուրբերենում հայերենից փոխառված բառերի ուսումնասիրությանը¹, որոնք «Պեդերսընի ուսումնասիրած փոխառեալ բառերու համեմատութեամբ՝ նոր են բոլորովին»²: Դրա արժեքը 1913թ. գնահատում է Ա. Վարդանյանը՝ համարելով, որ նաև այդ ուսումնասիրությանը «ի մերձուստ պէտք են ծանօթանալ հայերէն-բուրբերէնի աղբյւրը քննող ազգային բանասէրները»³:

1912թ. տպագրվում է Գ. Մենկիշյանի գրախոսականը⁴ Ա. Մեյիի ստուգաբանած իրանական փոխառությունների մասին. «...ո՛չ թէ նոր համեմատություններ կու տայ մեզի Մէյէ, այլ համեմատութիւններն աւելի գիտնական հիման վր վրայ կը ջանայ դնել...»⁵:

1914թ. տպագրվում է Ա. Մեյիի երկու հոդվածները՝ հայերենում իրանյան լեզվի հյուսիսային բարբառի հնչյունական արտահայտության և մի քանի այլ բառերի իրանական ծագման մասին⁶, և ապա լատիներենից արված փոխառությունների վերաբերյալ⁷:

Ստուգաբանությունները նաև քննադատվում են. Հ. Թիրյաքյանը Կ. Բասմաջյանի ճակատին «դափնե պսակ» է դնում՝ համամուն վերնագրով հոդվածում ցույց տալով նրա մի շարք ուսումնասիրությունների թերությունները⁸:

1.3. Հնագրության ուսումնասիրություններ

ա. Սեպագրերի ուսումնասիրություններ: Գ. Ջահուկյանը, նկարագրելով ժամանակաշրջանը, առանձնացնում է պատմահամեմատական լեզվաբանության ուսումնասիրության միտումները, որոնցից մեկը խնդրո առարկա է դարձնում սեպագրությունը. հնդեվրոպական լեզուների իրական փոխհարա-

¹ Տե՛ս Ֆր. Կրեկից-Գրայֆենհորստ, Հայերէնէ փոխառեալ բառեր բուրբերէնի մէջ, ՀԱ, 1911, ք. 5, էջ 258-267:

² Ն. տ., էջ 258:

³ Տե՛ս Հ. Ա. Վարդանեան, Հայերէն-բուրբերէն ստուգաբանութիւններ, ՀԱ, 1913, ք. 7, էջ 446:

⁴ Տե՛ս Գ. Մենկիշեան, Sur les mots iraniens empruntés par l'arménien, Meillet A., ՀԱ, 1912, ք. 2, էջ 180-182:

⁵ Ն. տ. էջ 181:

⁶ Տե՛ս Ա. Մէյէ, Հայերէնի մէջ փոխառեալ իրանեան բառերու վրայ, ՀԱ, 1914, ք. 6, էջ 339-350:

⁷ Տե՛ս Ա. Մէյէ, Հին հայերէնի լատիներէնէ ըրած քանի մը փոխառութիւններու վրայ ենթադրութիւններ, ՀԱ, 1914, ք. 4, էջ 228-232:

⁸ Տե՛ս Զ. Թիրեաքեան, Մի դափնեայ պսակ Պ. Կ. Բասմաջեանի ճակատին, ՀԱ, 1902, ք. 12, էջ 396-399:

քերության ճշգրտման պահանջը գիտնականներին ուղղում է հնագույն ժամանակաշրջանի լեզվական փաստերի ուսումնասիրությանը. «Հին պարսկական բեռնագիր (սեպագիր) արձանագրությունների լեզվի վերծանումը XIX դ. գործն է»¹, կամ հանդեսի բնորոշմամբ. «Եւ իմնետասներորդ դարուս կարծես մասնաւոր գործն եղած է՝ քաղութան ու հնացածը վերստին ժամանակալուսովն նկատել...»²:

1887-1889 թթ. տպագրվում է Ս. Տերվիշյանի «Պերսեպոլսոյ սեպագիրք» վերնագրով հոդվածաշարը³: Լեզվաբանը ներկայացնում է արձանագրությունների վերծանման պատմությունը՝ տարբերություններից մինչև վերջնական բացահայտում, այնուհետև բացատրում սեպագրերի նշանակությունները՝ համեմատության եզր դարձնելով իրաներենի հնչյունները: Ս. Տերվիշյանը, ուղղակիորեն չնշելով հայերենը իրանական ճյուղից զատելու նպատակ, այդուհանդերձ շարադրանքը հանգեցնում է այդ խնդրին՝ առանձնացնելով հայերենի և իրաներենի ծագումնաբանական տարբերություններ⁴: Ավարտելով պարսկական սեպագրերի հնչյունաբանական նկարագիրը՝ մեկ տառի անց Տերվիշյանն անդրադառնում է սեպագրությունների ձևաբանական առանձնահատկություններին. «Հին պարսկերեն լեզու. հոլովում» հոդվածում հեղինակը ներկայացնում է այդ լեզվի հոլովների կազմության եղանակները⁵, «Հին պարսկերեն» հոդվածում՝ դերամվան, թվականի և բայի խոնարհման պատկերը⁶:

Կ. Բասմաճյանի «Ետրուսկացիք եւ իրենց նորագիտ յիշատակագիրն» վերնագրով հոդվածում (1892թ.) ներկայացված է վարկած, ըստ որի մումիայի նորահայտ պատյանի երիզներում պահպանված էտրուսկերեն գրությունը այդ լեզուն կրողների՝ դեպի Եգիպտոս գաղթի հետքերից է: Հոդվածում համառոտագրված է մահ հայերեն-էտրուսկերեն ծագումնաբանական ընդհանրության ուսումնասիրությունների պատմությունը⁷:

Ն. Ավգերյանը «Ալաճալուի սեպածեւ արձանագրութիւնը» հոդվածում (1894թ.) ներկայացնում է համանուն արձանագրության վերծանման գյուտը

¹ Գ. Ջախուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. I, էջ 361:

² Տե՛ս Հ. Գ. Մենելիշեան, Ճաշակ ոսկեղեն դպրութեան, ՀԱ, 1888, ք. 9, էջ 158:

³ Տե՛ս Հ. Ս. Տերվիշեան, Պերսեպոլսոյ սեպագիրք, ՀԱ, 1887, ք. 1, էջ 8-9, ք. 2, էջ 20-22, ք. 4, էջ 52-54, ք. 6, էջ 81-82, ք. 10, էջ 145-146, ք. 11, էջ 185-186, 1888, ք. 11, էջ 185-186, ք. 12, էջ 220-222, 1889, ք. 3, էջ 46-47:

⁴ Տե՛ս ն. տ., 1887, ք. 4, էջ 53:

⁵ Տե՛ս Հ. Ս. Տերվիշեան, Հին պարսկերեն լեզու. հոլովում, ՀԱ, 1890, ք. 5, էջ 100-101:

⁶ Տե՛ս Հ. Ս. Տերվիշեան, Հին պարսկերեն, ՀԱ, 1890, ք. 7, էջ 150-152:

⁷ Տե՛ս Կ. Պասմաճեան, Ետրուսկացիք եւ իրենց նորագիտ յիշատակագիրն, ՀԱ, 1892, ք. 4, էջ 101-102:

և դրա պատմական կարևորությունը ուրարտական գահակալության թվագրումը ճշտելու հարցում¹:

1895թ. Ն. Ադոնցի թարգմանությամբ տպագրվում է Ն. Մառի «Մի տապանաքար Եօթնգետից հայերեն-ասորերեն արձանագրութեամբ» հոդվածը, որտեղ մեկնաբանված է Յոթնգետում գտնված արձանագրության տեքստը, ներկայացված են տառատեսակները և դրանց զմագրությունը²:

Արձանագրությունների ուսումնասիրության հայագիտական տեսանկյունը նորանոր նյութերի հրապարակումով լրացնում է Հ. Տաշյանը: Նրա հետաքրքրությունը խեթերենի և հայերենի նույնության՝ միայն փոխյին տարբերության վարկածն էր, որ առաջ էր քաշել գերմանացի գիտնական Պ. Եմսենը: Այդ ուսումնասիրությունն ամփոփելով «Նախակիլիկեան-հաթեան արձանագրութիւնը» հոդվածում (1894թ.)՝ Հ. Տաշյանը, որպես փաստական նյութի ծավալի ծանոթագրություն, շարադրանքն ավարտում է հայտնաբերված արձանագրությունների թվարկումով³: Հանդեսի հաջորդ համարում գերմանացի գիտնականը պատասխան է գրում խմբագրությանը և ներկայացնում խնդրի ուսումնասիրության ընթացիկ իր ծրագիրը⁴:

Գիտնականի որոշ ուսումնասիրությունների հավաստիությունը կասկածի տակ է առնված Հ. Տաշյանի մյուս հոդվածում՝ «Հաթեան արձանագրութեանց մասին դիտողութիւնը»⁵ վերնագրով: Դիտողությունների առիթը գերմանացու անհամաձայնությունն էր ուրարտական և քաղդեական լեզուների ցեղակցության հարցի առնչությամբ:

Պ. Եմսենի վարկածը շարունակում է մնալ հանդեսի էջերում: «Հետևյալներն ու հայերը» վերնագրով հոդվածը Պ. Եմսենի համանուն գրքի համառոտ թարգմանությունն է, որում շարադրված է հայերի ու խեթերի էթնիկ ծագման, անվանումների նույնության մասին տեսակետներ: Հոդվածում տրված է մաս խեթական արձանագրությունների ցուցակը, կատարված է բնագրերի թարգմանությունն ու տառադարձություն՝ տառերի նշանակությունների պարզաբանումով⁶:

¹ Տե՛ս Հ. Ն. *Ազգերեան*, Ալանալոի սեպածեւ արձանագրութիւնը, ՀԱ, 1894., թ. 3, էջ 69-71:

² Տե՛ս Ն. Մառ, Մի տապանաքար Եօթնգետից հայերեն-ասորերեն արձանագրութեամբ, ՀԱ, 1895, թ. 2, էջ 33-36:

³ Տե՛ս Հ. Յ. *Տաշեան*, Նախակիլիկեան-հաթեան արձանագրութիւնը, ՀԱ, 1894, թ. 10, էջ 317-320:

⁴ Տե՛ս Պ. *Եմսեն*, Նորագիտ հաթեան արձանագրութեան աղբիւ, ՀԱ, 1894, թ. 11, էջ 335:

⁵ Տե՛ս Հ. Յ. *Տաշեան*, Հաթեան արձանագրութեանց մասին դիտողութիւնը, ՀԱ, 1894, թ. 12, էջ 383-384:

⁶ Տե՛ս Պ. *Եմսեն*, Հետիտներն ու հայերը, ՀԱ, 1898, թ. 8-9, էջ 225-239, թ. 10-11, էջ 327-328:

1899 թ. տպագրված Հ. Տաշյանի «Փորձ մը լեզուի վանեան քեռագրութեանց»¹ հոդվածը նվիրված է ուրարտերեն արձանագրությունների լեզվական առնչության հարցին: Նախ ներկայացված է հարցի ուսումնասիրության պատմությունը, ապա Հ. Սանտալճյանի «Լեզու ուրարտեան քեռագրի արձանագրութեանց» գրքույկի նորությունը՝ ուրարտերենի և հայերենի ցեղակցության մասին: Ուսումնասիրության գիտականությունը որոշելու նկատառումով քննված է գրքույկում տեղ գտած ստուգաբանությունների հավաստիությունը: Ուրարտերենի ցեղակցության ստուգաբանական հիմնավորումը շարունակվում է Հ. Սանտալճյանի «Նորագիտ ուրարտեան սեպագիր արձանագրութիւնը» հոդվածի տպագրությամբ (1913թ.), որտեղ ուսումնասիրված են յոթ արձանագրությունների անձանոթ բառերը՝ քաղված եվրոպական հրատարակություններից²:

Հանդեսում պարբերաբար ծանուցվում է նաև նորահայտ արձանագրությունների մասին: Այդ շարքում ներկայացված են ոչ միայն հայտնաբերված արձանագրությունները, այլև գտածո անընթեռնելի կամ անհայտ նշանների տպագրական ընդօրինակումները³:

բ. Հայկական տառերի ծագման խնդիրը և գրատեսակների ուսումնասիրությունը: Հայկական տառերի ծագման խնդիրը հանդեսում բանավեճի պատճառ է դառնում. հակադրվում են սեմական ու հունական ծագման տեսակետները:

«Հայ նշանագրաց մասին» հոդվածում (1889թ.) Ֆր. Մյուլլերը հայկական գրերին հատկացնում է սեմական նախատիպ⁴: Տպագրվում է նաև այդ տեսակետի հետագա լրացումը⁵: Եթե այդ հոդվածներում ձայնավորների հունական աղբյուրի հավանականությունը Մյուլլերը չէր մերժում, ապա 1894թ. հրատարակած հաջորդ հոդվածում փորձում է հաստատել հայերեն ձայնավորների ավեստական ծագումը⁶:

«Գիր եւ գրութիւն» հոդվածում հայկական գրերի հունական ծագման օգտին է գրում Հ. Թուխիկյանը՝ տեսակետը ներկայացնելով մարդկության գրե-

¹ Տես Հ. Յ. Տաշյան, Փորձ մը լեզուի վանեան քեռագրութեանց, ՀԱ, 1899, ք. 1, էջ 16-20:

² Տես Յ. Սանտալճյան, Նորագիտ ուրարտեան սեպագիր արձանագրութիւնը, ՀԱ, 1913, ք. 7, էջ 393-409:

³ Տես Տ. Պալեան, Ա. Նախակիլիկեան-հաբեան արձանագրութեամբ երկու կնիք, ՀԱ, 1898, ք. 5, էջ 139, Բ. Յունարեն եւ լատիներեն երկու արձանագրութիւն, էջ 139-140: Իս. Սրապեան, Հին նշանածեք, ՀԱ, 1902, ք. 7, էջ 201-202:

⁴ Տես Փ. Մյուլլեր, Հայ նշանագրաց մասին, ՀԱ, 1889, ք. 5, էջ 86-87:

⁵ Տես Փ. Մյուլլեր, Հայերեն նշանագրաց վրայ, ՀԱ, 1891, ք. 3, էջ 68-70:

⁶ Տես Փ. Մյուլլեր, Հայերեն այբուբենի ձայնաւորաց ծագումը, ՀԱ, 1894, ք. 8, էջ 244-246:

րի տեսակ-տեսակ զարգացման պատմության համատեքստում¹: Հաջորդ տարի Հ. Տաշյանը, վերլուծելով Ի. Հարությունյանցի «Հայոց գիրը» (Թիֆլիս, 1892թ.) գիրքը, հակադրվում է հայկական տառերին սեմական մախատիպ վերագրելու փորձին՝ պնդելով տառերի ծագման հունական աղբյուրի հավաստիությունը²:

Հայկական տառերի սեմական բնույթը պաշտպանել էր մահ Ն. Տաղավարյանը «Ծագումն հայ տառից» գրքում (Վիեննա, 1896թ.): Դրան հենց տպագրության քվականին արձագանքում է Գ. Մենկիշյանը՝ վերահաստատելով Հ. Տաշյանի տեսակետը³: Նույն 1896 թ. Տաղավարյանի գրքի ընդդիմախոսությունը հավելյալ փաստելով լրացնում է Ս. Պարոնյանը «Հայերեն այբուբենի ծագման պատմութեան պատկանեալ լուսաբանութիւնը» հոդվածում⁴:

1910-14թթ. տպագրված հոդվածաշարում Հ. Աճառյանը ներկայացնում է հայերի գործածած տառերի պատմությունը՝ օտարագիր այբուբեններից մինչև մեսրոպյան գրեր⁵:

1911-12թթ. Յ. Մարկվարտը «Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի» հոդվածաշարում⁶ դանիելյան գրերին հատկացնում է հայոց այբուբենի մախատիպի նշանակություն, իսկ Ս. Մաշտոցին՝ միայն բարեփոխիչի դեր. «...կրնանք մեծ հաւանականութեամբ ընդունիլ թէ Մաշտոց հայերէն գրերն ձեռած միջոցին ալ ընդհանրապէս չչեղեցաւ Դանիէլ եպիսկոպոսի հնարած աղփաբեւոյթին...»⁷:

1914թ. տպագրվում է Ս. Եղիայանի հոդվածը՝ «Ակնարկ մը ընդհանուր գրերու պատմութեան վրայ» վերնագրով⁸: Նպատակ ունենալով հայոց այբուբենի ստեղծումը ներկայացնել գրերի զարգացման ընդհանուր տեսանկյունից՝ հեղինակը ակնարկի ձևով նկարագրում է գաղափարագրից մինչև հնչյունական գիր անցումը՝ անդրադառնալով տարբեր ժողովուրդներ

¹ Տե՛ս Հ. Յ. Թովսիկեան, Գիր եւ գրութիւն, ՀԱ, 1892, ք. 1, էջ 6-10:

² Տե՛ս Հ. Յ. Տաշեան, Հայոց գիրը, Յարութիւնեանց Իս., ՀԱ, 1893, ք. 3, էջ 88-92:

³ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Ծագումն հայ տառից, ՀԱ, 1896, ք. 7, էջ 213-217:

⁴ Տե՛ս Ս. Պարոնեան, Հայերէն այբուբենի ծագման պատմութեան պատկանեալ լուսաբանութիւնը, ՀԱ, 1896, ք. 3, էջ 72-76:

⁵ Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց գրերը, ՀԱ, 1910, ք. 2, էջ 46-52, ք. 6, էջ 171-176, ք. 7, էջ 212-216, ք. 10, էջ 311-315, 1911, ք. 4, էջ 231-242, ք. 6, էջ 348-365, 1912, ք. 3, էջ 134-147, 1913, ք. 3, էջ 137-158, 1914, ք. 5, էջ 299-319, 1915, ք. 1-12, էջ 135-172:

⁶ Յ. Մարկուարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի, ՀԱ, 1911, ք. 10, էջ 530-544, ք. 11, էջ 673-684, 1912, ք. 4, էջ 200-216, ք. 11, էջ 657-666, ք. 12, էջ 742-750:

⁷ Ն. տ., էջ 212:

⁸ Տե՛ս Հ. Ս. Եղիայեան, Ակնարկ մը ընդհանուր գրերու պատմութեան վրայ, ՀԱ, 1914, ք. 1, էջ 21-41:

րի կիրառած գրատեսակներին, դրանց ձևային տարբերություններին: Պատմական հիմնավորումից հետո Եղիայանը հայկական տառերի ծագման երկու աղբյուր է նշում. «յունական եւ ըստ փոքրամասնութեան սեմական»¹:

Հանդեսում 1897-1898 թթ. ծավալուն հոդված է տպագրվում հայկական գրատեսակների վերաբերյալ: Հ. Շուխարդը գրատեսակների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով դիմում է Հ. Տաշյանին: Վերջինիս պատասխանը՝ «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» վերնագրով, հրատարակվում է հանդեսում: Խնդրի վերաբերյալ տվյալները սփռված էին մատենագրության մեջ, բայց դրանց համեմատական հավաքագրումը կատարված չէր: Տաշյանը, վերնագրում նշելով «ակնարկ», այդուհանդերձ, արժեքավոր դիտողություններ է անում գլխագիր երկաթագիր, բուրդգիր, շղագիր, կրկնագիր տեսակների գործածության տարածական ու ժամանակային ընդգրկման, անվանումների պատճառաբանվածության վերաբերյալ, այնուհետև ուսումնասիրությունը կոնկրետացնելով՝ քննում է արձանագրությունների գրատեսակները, մաս անդրադառնում է կետադրական նշանների տեսակներին²: Հոդվածաշարը հետաքրքրություն է առաջացնում. դրա տպագրության թվականին ու հաջորդող 1899-ին տպագրվում են հնագրության մասին նորահայտ ու ճշգրտող տեղեկություններ³:

Համակարգման առաջին քայլը, որոշարկելով ուսումնասիրության նյութը, ապահովում է շարունակականությունը: 1907թ. տպագրվում է Ֆր. Ֆինկի՝ հայ հնագրության ուսումնասիրության գրախոսականը: Հեղինակ Ա. Վարդանյանի մեկնաբանությամբ, Ֆինկը ուսումնասիրել է հայերեն նշանագրերի դարեդար կրած փոփոխությունները, յուրաքանչյուր տեսակի կիրառության շրջանը՝ «առաջնորդ առած Յ. Տաշեանի գեղեցիկ գործը «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ»⁴:

1903թ. Ֆր. Մուրատի «Նշանագիրք իմաստնոց» հոդվածում ներկայացված է պատմական, վարքագրական, կրոնական բովանդակությամբ և կից

¹ Ն. տ., էջ 39:

² Տես Հ. Յ. *Տաշեան*, Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ, ՀԱ, 1897, թ. 3, էջ 65-69, թ. 4, էջ 106-110, թ. 6, էջ 177-183, թ. 8, էջ 225-229, թ. 10, էջ 295-302, թ. 11, էջ 325-331, 1898, թ. 1, էջ 1-5, թ. 2, էջ 44-46, թ. 3, էջ 65-70, թ. 4, էջ 106-109, թ. 5, էջ 133-139, թ. 6, էջ 163-169:

³ Տես Ռ. *Սամուէլեան*, Քանի մը խօսք սաղմնական հայ հնագրութեանց մասին, ՀԱ, 1898, թ. 6, էջ 161-162, Տ. *Պաշեան*, Աւետարան մը կրկնագիր, ՀԱ, 1898, թ. 5, էջ 140, Հաւաքածոյ ձեռագիր մը՝ կրկնագիր, ՀԱ, 1899, թ. 1, էջ 14-15:

⁴ Հ. Ն. *Մկիմեան*, Atlas zum Katalog der armenischen Handschriften, Fink Fr. N., ՀԱ, 1907, թ. 5, էջ 143-145:

գաղափարագրերի ցուցակով մի գրչագիր, որն ընդօրինակված է հանդեսում¹:

1906թ. տպագրվում է «Ասորատառ հայերեն արձանագրություն մը» հոդվածը, որտեղ Հ. Տաշյանը ներկայացնում ու քննում է ասորագիր հայերեն արձանագրության մի օրինակ՝ քվականի ստուգությամբ զուգահեռ անդրադառնալով նաև տառադարձության հարցերին²:

1.4. Լեզվաբանության ընդհանուր հարցեր

Ժամանակին համընթաց լինելու խնդրով Գ. Մենկիշյանը 1896-1901 թթ. որոշ դադարներով տպագրում է «Արդի լեզուագիտություն» հոդվածաշարը՝ ասելիքը բաշխելով հանդեսի 20 համարներում³: Հոդվածաշարում ներկայացված ու քննված են լեզուների մասնության ակնարկներից մինչև պատմահամեմատական լեզվաբանության ձևավորման պատմությունը, տարակարծությունները լեզուների նախահիմքի մեկ կամ ավելին լինելու մասին, լեզուների ձևաբանական դասակարգումը, դրանց տեսակների առաձնահատկությունները, ձևաբանական տարբերությունները՝ որպես լեզուների զարգացման տարբեր աստիճաններ, ցեղակցային դասակարգումը, լեզվաբնօրինակները՝ ցեղակից լեզուների մանրամասն քվարկումով, լեզուների նոստրատիկ ընդհանրությունը, հնդեվրոպական լեզվի հնչյունափոխությունը և այլն:

Մինչ այդ՝ 1887 թ., լեզվաբանը «Վոլափիւր կամ աշխարհալեզու» վերնագրի ներքո պարզաբանել էր միջազգային արհեստական լեզվի հնչյունաբանական և ձևաբանական առաձնահատկությունները⁴:

Եվրոպական հայագիտությունը հանդեսի էջերում ներկայացված է նաև հակիրճ տեղեկատվական հոդվածներով: Գլխական անցուղարձի ծանուցման օրինակ է 1892 թ. տպագրված «Հայերէնի դիրքն ու կարեւորութիւնը համեմատական լեզուագիտութեան մէջ» հոդված-լուրը՝ Լոնդոնի բանասիրա-

¹ Տե՛ս *Ֆր. Մուրատ*, Նշանագիրք իմաստոց, ՀԱ, 1903, ք. 1, էջ 5-9, ք. 5, 144-146, ք. 11, էջ 333-335:

² Տե՛ս Հ. Յ. Տաշեան, Ասորատառ հայերեն արձանագրություն մը, ՀԱ, 1906, ք. 3, էջ 65-67:

³ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Արդի լեզուագիտությունը, ՀԱ, 1896, ք. 1, էջ 1-4, ք. 2, էջ 45-47, ք. 3, էջ 76-77, ք. 5, էջ 150-152, ք. 6, էջ 165-158, ք. 8, էջ 225-229, ք. 10, էջ 292-294, ք. 11, էջ 321-323, 1897, ք. 1, էջ 21-24, ք. 3, էջ 69-72, ք. 5, էջ 153-155, ք. 7, էջ 212-214, ք. 10, էջ 302-304, 1898, ք. 3, էջ 78-81, ք. 5, էջ 144-146, ք. 8-9, էջ 252-255, ք. 10-11, էջ 294-298, 1900, ք. 1, էջ 12-16, ք. 3, էջ 68-72, 1901, ք. 5-6, էջ 177-180:

⁴ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Վոլափիւր կամ աշխարհալեզու, ՀԱ, 1887, ք. 12, էջ 187-190:

կան ընկերությունում Ա. Շումապֆի հայազխտական զեկույցի մասին¹: Հետագայում հողված-լուրերը համակարգվում են ենթավերնագրերի ներքո. 1896թ. տպագրվում է *ազգային թերթերէ ծաղկեփումը* շարքը, որ ներկայացնում էր տարաբնույթ, այդ թվում լեզվաբանական քաղվածքների մամուլից²: 1903-1905թթ. Թ. Կետիկյանը կազմում է լեզվաբանական տեղեկությունների շարք, որի աղբյուրը հիմնականում եվրոպական թերթերն էին: Այն պարբերաբար լրացվող ամփոփագիր էր՝ նոր հրատարակված հայազխտական հողվածների, գտածո սեպագրությունների, եվրոպացի հայագետների գործունեության մասին³: 1906թ. նմանատիպ երկու հողված տպագրվում է մասնատրագիր⁴:

1.5. Լեզվաբանական նորակազմ տերմինները

Նշված հողվածների բովանդակային դասակարգումը նախանշում է նորակազմ համարված տերմինների բնույթը, դրանց բաշխումը լեզվի բաժինների միջև: Այդ տերմինների կազմության հասկացական հիմքերը տարբեր են:

ա. Լեզվի նախալիճակյին, հեռավոր ցեղակցությամբ ընդհանուր լեզվին, լեզվաընտանիքներին, ցեղակից լեզուներին հաճախակի անդրադարձները հանգեցրել են հիմնականում ձևային հակադրությամբ գործածությունների,

¹ Խմբագր., Հայերենի դիրքն ու կարեւորութիւնը համեմատական լեզուագիտութեան մէջ, ՀԱ, 1892, ք. 7, էջ 215:

² Տես Հ. Գ. Մենելիշեան, Պրոֆ. Հիւրշմանի հայերէն քերականութեան երկրորդ մասը, ՀԱ, 1897, ք. 2, էջ 59, Պրոֆ. Մառ, ք. 6, էջ 187, Յատուկ անուններու ստուգաբանութիւն, ք. 10, էջ 283, Վանայ արծանագրութիւններու լեզուն, ք. 11, էջ 350, Համեմատական հետազոտութիւն, 1898, ք. 1, էջ 26, Գրութիւններու զիրը, ք. 1, էջ 29, Ըսփոռէ՞լ, թէ սըփոռէ՞լ, ք. 5, էջ 156, «Բիւրական» լրագիր եւ Ա. Մէյի Հետազոտութիւնը, ք. 12, էջ 382 և այլն:

³ Տես Հ. Թ. Կետիկեան, Պրոֆ. Ա. Մէյե-հայերենի ուսուցիչ, ՀԱ, 1903, ք. 2, էջ 63, Գրական նորութիւնը, 1903, ք. 7, էջ 223-224, Հայերէն փոխառեալ բառեր, 1903, ք. 11, էջ 350-351, Հատեան-հայկական նորագիտ արծանագրութիւն մը, 1904, ք. 2, էջ 62-63, Գրական նորութիւններ, 1904, ք. 6, էջ 192, Հին հայկական տեղւոյ անունները, 1904, ք. 9, էջ 285-286, Հայերէն եւ դրացի լեզուները, 1904, ք. 12, էջ 380, Հին հայերենի ձայնագիտութեան մասին, 1904, ք. 12, էջ 384, Մէյի «Ուրուագծին» եւ Թովչեանի «Սկզբնաւորութիւն հայ վանականութեան» վրայ գերմ. գրութիւններ, 1905, ք. 2, էջ 63, Հին հայերենի «ընդ» նախադրութիւնը, 1905, ք. 3, էջ 96, Հայ. «սայ» բառը, 1905, ք. 6, էջ 191:

⁴ 1. Պրոֆ. Հ. Պեդերսընի պատասխանները, 2. Դոկտ. Կարստ-ուսուցիչ հայագիտութեան, ՀԱ, 1906, ք. 4, էջ 128:

իսկ լեզուների կառուցվածքային հիմքով համեմատությունները՝ տիպարանական անվանումների գործածության:

ա) Նախալեզվի, լեզվական ցեղակցության վերանվանումներ. *նախատոր լեզու* (1906,7,198), *արմատ լեզու* (1907,10,306), *Հնդերոտական լեզուացեղ* (1896,11,323), *նախնական-քամեան-սեմական լեզու* (1896,2,46), *լեզուաց ցեղաբանական ընտանիք* (1897,7,213), *լեզուներու դասախումբ* (1896,10,292), *նախաբուն նախալեզու* (1901,5-6,178), *լեզուացեղերու նախնական տիպար* (urtypus) (1901,5-6,179) և այլն, ալոպիսին են մահ նախահայերենին տրված անվանումները. *նախարիական հայկական լեզու* (1907,6,188), *նախ-հայկական լեզու* (1907,6,188) և այլն:

բ) Ցեղակից լեզուների վերանվանումներ. *նոյնացեղ լեզուներ* (1897,3,69), *մերձատոր լեզուներ* (1897,3,69), *խնամի լեզուներ* (1897,3,69), *համարմատ լեզուներ* (1901,5-6,178), *համացեղ, համագգի լեզուներ* (1890,5,151), *հնդերոպատոհմ լեզուներ* (1890,5,151) և այլն:

գ) Լեզուների կառուցվածքային տիպեր. *վերջադիր-կցող լեզուներ* (1897,5,154), *գործարանատոր լեզուներ* (1896,3,76), *կէս-հոլովական լեզուներ* (1896,11,322), *քազմական կազմութեամբ լեզուներ* (1896,3,76), *անգործարան լեզուներ* (1896,3,76), *առանց քերականական կազմութեան լեզուներ* (1896,3,76) և այլն:

բ. Լեզուների համեմատության ելակետը հաճախ հնչյունաբանությունն է իր տարատեսակ միավորներով, որը ևս նորակազմության բովանդակային հիմքերից է՝ հետևյալ հիմնական դրսևորումներով:

ա) Հնչյունների տեսակներ ըստ արտաբերման հատկանիշների. *սկզբնափակ քաղածայններ* (affricatae) (1905,1,1), *լեզուածայր ծայնատոր* (1905,11,345), *յառաջընթաց հնչիւն* (1906,1,20), *սրողեալ* (velar) *քաղածայն* (1903,5,141), *խաղողկային* (uvulaire) *քաղածայն* (1907,3,92), *համարափակ նշանագիրք* (les occlusives sourdes) (1891,2,44), *անհնչական քաղածայն* (1893,1,16), *չհնչող գիր* (1900,1,15), *դուրդողատառ* (1894,3,87), *նուրբ ծայնատոր* (1896,11,322) *կառավական ծայն* (1897,5,154), *շրջական, ներդարձիկ քաղածայն* (1897,7,214) և այլն:

բ) Հնչյունների դիրքային տարբերակներ նշույ տերմիններ. *նախատոր հնչիւն* (1906,5,130), *նախաքաղածայն* (1906,5,133), *սկզբնատառ* (1906,5,133), *սկզբնագիր ծայն* (1889,3,47), *միջնատառ* (1896,11,322), *միջնածայն* (1896,3,77), *միջնածայնատոր* (1914,8,514), *միջածայնատորակա* (intervocalique) *հնչիւն* (1914,6,347), *արմատալերջ հնչիւն* (1908,7,213) և այլն:

գ) Վանկի տեսակներ. *կրկնափակ փանկ* (1894,5,156), *համադրական փանկ* (1903,3,67), *կրկնափանկ գրութիւն* (1913,8,492) և այլն:

* Այս և մյուս տերմինների բացատրությունը տե՛ս տերմինների ցանկում:

դ) Վանկային հնչյունի շեշտակյություն կամ անշեշտության, շեշտի հնչե-
րանգային հատկանիշով տարբերակված անվանումներ. *արմատավանկ*
(1906,4,108), *լիավանկ* (1906,4,108), *նուադած վանկ* (1906,11,341), *վանկա-
կան* և *անվանկ ծայնաոր*, *բաղածայն* (1905,1,1), *վանկական գուգադիրներ*
(1907,4,118), *տկար շեշտ* (1895,8,231), *ուժի շեշտ* (1903,4,106) և այլն:

ե) Վանկի և վանկային հնչյունի դիրքային անվանումներ. *վանկեզր*
(1905,11,340), *առաջընթեր վանկ* (1892,6,164), *վանկասկզբան հնչյուն*
(1894,5,157), *վանկավերջի հնչյուն* (1894,5,157) և այլն:

զ) Հնչյունական փոփոխություններ. *րեակամություն* (1896,8,226-227),
ծայնական-գուգադրություն (1896,11,322), *համածայնություն* (1894,1,29), *ծայ-
նաորաց նմանածայնություն* (1906,4,107), *տարածայնություն* (dissimilation)
(1894,1,29), *նմանագրություն* (par assimilation) (1895,12,371), *նմաներանգու-
թյուն* (umlaut) (1906,1,21), *նմանափոխություն* (1905,1,4), *ծայնաորաց հան-
դիսյումն* (hiatus) (1894,5,156), *տառատեղափոխություն* (1906,5,130), *միջամ-
խություն* (1906,3,70), *ծայնաորներու նուագում* (1904,5,131), *զրափոխություն*
(1907,4,120), *տառայաւերում* (1907,3,91), *մակարոյժ տառեր* (parasitische
laute) (1894,5,157) և այլն:

է) Հնչյունական օրենքներ. *ծայնաօրենք* (1907,8,249), *ծայնաորաօրենք*
(1907,8,250), *վերջավանկի օրենք* (auslautgesetz) (1903,7,193), *ծայնա-սլատ-
մական օրենք* (1904,1,10), *այլանմանութեան օրենք* (1915,1-12,165), *ծայ-
նաորներու ներքին փոխանակութեան* (ablaut) *օրենք* (1903,4,107) և այլն:

զ. Համեմատության եզր են մաս բառային միավորները՝ ձևայինները, ո-
րոնք նորակազմ են հիմնականում ձևային տարբերությամբ:

ա) Նախածկի վերանվանումներ. *շուտածե* (1907,10,303), *սկզբնածե*
(1905,5,150), *սկզբնական բառ* (1889,8,159), *նախաոր կազմություն* (1906,9,283),
անդրագոյն կազմություն (1903,12,359), *նախարմատ* (1906,11,346) և այլն:

բ) Նախածկի հիմքով տարբերակված բառեր. *համարմատ բառ* (1911,12,
759), *խառնումած բառ* (1905,8,253) և այլն:

գ) Բառի ձևաիմաստային տեսակներ. *նմանանշանակող բառեր*
(1907,8,251), *մերձաոր բառեր* (1900,3,68), *նոյնիմաստ բառեր* (1887,4,53),
նմանայանգ բառեր (1906,1,20), *նոյնածայն բառեր* (1897,5,154), *նոյնատառ
բառեր* (1910,7,212) և այլն:

դ) Բառի կազմության տեսակներ, միջոցներ. *կրկնակազմ բառ*
(1906,1,20), *կրկնածեակցություն* (1907,6,184), *կրկնաորածե կազմություն*
(1905,5,158), *արմատակրկնություն* (1906,11,343), *արմատնդարժ* (1907,10,304),
արմատափոխություն (1906,11,343) և այլն:

ե) Բառի նշանակություններ, իմաստային արտահայտություններ. *նա-
խաոր նշանակություն* (1906,5,132), *նախանշանակություն* (1904,10-11,335),

նախիմաստ (1908,5,153), բառի ընկերական նշանակություն (1911,12,757), սաստկակրկնություն (1907,8,251) և այլն:

զ) Արմատական, բառակազմական, հարաբերական ձևայիններ, մասնիկներ. *խարխախ* (1904,3,94), *արդիւնաբեր վերջաւորութիւն* (1906,4,109), *արդիւնատուր* (productiv) *մասնիկ* (1903, 12,359), *արգասաբեր ձեակերտ* (1906,9,282), *աւրնչական, յարաբերական մասնիկ* (1896,9,268), *կրկնավերջաւորութիւն* (1905,10,318) և այլն:

դ. Քերականական ձևերի ու միավորների համեմատությունը և նորակազմության ազդակ է՝ հետևյալ հիմնական գործածություններով:

ա) Խոսքի մասերի ներքին խմբավորման տեսակներ. *եռարմատեան բայեր* (1896,10,292), *միջնական բայ* (medial) (1904,1,12), *յեմական դերանուն* (1890,5,150), *կրկնական դերանուն* (1906,10,289), *յատկապէս ցուցական դերանուն* (1906,10,289), *նոյնութեան դերանուն* (1906,10,289), *նախադիր-դերանուն* (1897,7,212), *ձայնաօրինակող բառ* (1908,8,246) և այլն:

բ) Քերականական միավորների կազմության տեսակներ, քերականական կազմիչներ. *գոյականներու յայտարար նշան* (1903,12,360), *նշանատառ* (1904,1,9), *ձեւացուցիչ* (formans) (1906,2,56), *ձեակցուցիչ* (1908,5,154), *միջնադիր* (1896,5,150), *անփոփոխական ձայներ* (1896,3,76), *աւելադրական գրեր* (1896,3,76), *կերպական տարր* (1896,5,150), *անյօդատուր ձայն* (1896,3,76), *վերակցական դերանուն* (1906,10,290), *անձնորոշ վերջաւորութիւն* (1896,8,227) և այլն:

ե. Հնագրության ուսումնասիրությունը հանգեցրել է հատկապէս բովանդակային նորակազմության, զուգահեռ գործածվում են նաև ձևային նորությամբ բնորոշվող տերմիններ:

ա) Արձանագրային համակարգեր, ուսումնասիրության անվանումներ. *բեւեռածեւ ալբոմեն* (1887,1,9), *արձանագիտութիւն* (1899,1,16), *բեւեռաքննութիւն* (1887,2,21), *բեւեռագիտութիւն* (1899,1,19) և այլն:

բ) Սեպագրի վերանվանումներ. *բեւեռ* (1887,1,8), *բեւեռագարդ տառ* (1887,1,9), *բեւեռատառ* (1887,4,52), *բեւեռանման գիր* (1892,1,8), *բեւեռածեւ տառ* (1887,4,52), *բեւեռածեւ նշան* (1887,1,8), *սեպածեւ տառ* (1887,11,164) և այլն:

գ) Սեպագրի դիրքային տարբերակներ. *միածեւ բաղաձայն* (1887,4,52), *կրկնածեւ բաղաձայն* (1887,4,52), *եռածեւ տառ* (1887,4,52), *նոյնաձայն ալլածեւ բաղաձայններ* (1887,4,52), *երկրորդական բաղաձայններ* (1887,2,21), *նախնական բաղաձայններ* (1887,2,21) և այլն:

դ) Սեպագրերի հնչյունային նշաններ, տեսակներ. *ձայնամիջ նշանք* (1887,4,52), *ձայնանշան* (1910,2,47), *միածայն բաղաձայն* (1887,4,52), *եռատառ վանկ* (1910,2,50), *բաղաձայններում անձայնատուր շարք* (1887,2,21) և այլն:

ե) Սեպագիր քերականական, կետադրական նշաններ. *բառանշան* (1910,2,47), *ծայնանիշ* (1910,2,47), *բառագուտ* (1888,11,186), *բառանշատ* (1910,10,313) և այլն:

զ) Հնագրության տեսակներ. *նուիրագրություն* (1914,1,26), *դերձանագրություն* (1914,1,40), *վիմագրություն* (1893,3,88), *քանդակագրություն* (1898,5,137), *նկարահանուկ* (rebus) *գիր* (1914,1,24), *քառակուսի գիր* (1914,1,36), *դեագիր* (1914,1,36), *չուանագիր* (1914,1,36), *քրմագիր* (1892,1,7-8), *ժողովրդագիր* (1892,1,7-8), *կտաուագիր* (1892,2,55), *պատկերածեղ դամբանագիր* (1892,1,7), *նշանադրոշմ* (1903,1,7), *նշանածեղ* (1902,7,201), *բառապատկեր* (1897,11,324), *խորհրդագիր* (1892,1,7), *տառանկար* (1894,10,320), *թուանշան* (1910,2,52) և այլն:

է) Այբուբենի տեսակներ՝ ըստ հնչյունական կազմի. *բաղաձայն այբուբեն* (1891,3,70), *բաղաձայնագիր*, *բաղաձայնատառ այբուբեն* (1894,8,245), *ծայնատառ այբուբեն* (1891,3,70), *տառագիր այբուբեն* (1894,8,244) և այլն:

ը) Կետադրական նշաններ. *անջատանիշ* (1898,5,137), *առարտանիշ* (1898,5,138), *կրկնակետ* (1898,5,133), *ստոր* (1898,5, 133), *չորեքկետան* (1898,5,138), *տառաբաժանման նշան* (1898,5, 133) և այլն:

թ) Սղագրական նշաններ. *գրահաշուական նշան* (1897,3,69), *համառոտանիշ* (1898,5,134), *երագագրական նշան* (1903,1,7), *վերադիր երկշեշտ*, *վերադիր փուշ* (1910,6,173) և այլն:

2. Հայերենի նորմավորման խնդիրները հանդեսում

Պատմահամեմատական լեզվաբանության հարցերին Վիեննայի միաբանությունը՝ որպես քննական կողմ, ըստ Ադայանի, նշանակալի մասնակցություն չունեցավ¹, մինչդեռ զգալի էր նրա ներլեզվական դերը: Այստեղ ուսումնասիրությունների ու ճշգրտումների կարիք կար, քանի որ գրաբարը 19-րդ դար էր ավանդվել աղճատված, մյուս կողմից՝ գրական լինելու հայտ ներկայացրած աշխարհաբարը չունեի գրության հստակ նորմա, իսկ գրաբարը հենց նորմավորման առավելությամբ, նաև պահպանողականության գործունով դեռ գրական էր: Այս հիմնական ու էական խնդիրների լուծման գործում վիեննացի հայագետների ուսումնասիրությունները որոշիչ եղան: Նրանք հին լեզուն սրբագրեցին տարաբնույթ. անհարկի միջամտություններից և վերականգնեցին նրա դասականությունը՝ դառնալով դասական գրաբարի գյու-

¹ Տե՛ս էդ. Ադայան, նշվ. աշխ., էջ 245:

տի հեղինակ¹, իսկ գրապայքարում Ա. Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» գրքով հիմնավորվեց արևմտահայ աշխարհաբարի գրական հնարավորությունն ու կիրառելիությունը:

Հայերենի գրական երկու տարբերակների մաքրության համար հետագա պայքարը հանդեսում ընթացավ հետևյալ հիմնական դրսևորումներով. ա. դասական գրաբարի գյուտի հետևողական ամրապնդում՝ նորանոր բառերի դասականության հաստատումով կամ հերքումով, բ. աշխարհաբարի կանոնավոր գործածման ուղղորդումներ և անհարկի գործածությունների՝ հատկապես բառաստեղծության քննադատություններ: Մխիթարյանները պաշտպանեցին նաև մեսրոպյան ուղղագրության իրավունքները, հանդես եկան ուղղագրության պատմականության դիրքերից՝ հակադրվելով Մալխասյանի, և ապա Աբեղյանի նորամուծություններին:

2.1. Դասական գրաբարի և մատենագրական բառերի ուսումնասիրություններ

1902թ. տպագրվում է Թ. Կետիկյանի «Լեզուական խնդիրներ» հոդվածն ի պատասխան Դ. Խաչկոնցու «Հայերեն լեզուի քանի մը խնդիրներ» հոդվածի («Բիզանդիոն» ուսումնաթերթ, ե. տարի, 1901, ք. 1316-1322): Քննադատության նյութ է դառնում Խաչկոնցու այն պնդումը, թե «զուտ հայերեն ոճ, ասացուածք, բառ, մասնիկ եւ այլն չկայ»: Կետիկյանը ոչ միայն հերքում է, այլև նշում գրագողության աղբյուրներ Խաչկոնցու շարադրանքում²:

1903թ. տպագրվում է Թ. Վանանդացու (Գ. Մենկիշյան) «Ոսկեդարեան հայերենի խնդիրը» հոդվածը³. նպատակը՝ «քանի մը խօսքով ջրել «Բազմավեպի» մէկ յօդուածագրին - nomina sunt odiosa- այս նիւթիս մասին գրածները»⁴: Ըստ այդ հոդվածագրի՝ Թ. Վանանդեցու նշած մի շարք բառերի դասական լինելը համոզիչ չէ: Ի պատասխան հավելյալ օրինակներով հաստատվում է վիճարկված բառերի դասականությունը, ընդ որում քննադատության սխալների ուղղումով. «անտիպար ըստ քիմս (փոխանակ ի քմաց)»⁵:

¹ Տե՛ս Վ. Համբարձումեան, Մխիթարեանների լեզուամշակման սկզբունքները եւ գրական հայերենի կանոնարկման արդի խնդիրները, «Բազմավեպ», 1-4, էջ 198:

² Տե՛ս Հ. Թ. Կետիկեան, Լեզուական խնդիրներ, ՀԱ, 1902, ք. 7, էջ 199-201:

³ Տե՛ս Թ. Վանանդացի [Հ. Գ. Մենկիշեան], Ոսկեդարեան հայերենի խնդիրը, ՀԱ, 1903, ք. 9, էջ 225-234:

⁴ Ն. տ., էջ 225:

⁵ Ն. տ., էջ 232:

Հանդեսի նույն համարում դասական գրաքարի հարցին առավել ընդգրկուն անդրադառնում է Գր. Գալենքյարյանը «Ոսկեդարեան եւ ոչ ոսկեդարեան հայերէններ» հոդվածում¹: Սա, ինչպես և նախորդ հոդվածը, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանների բանավեճի դրվագներից է, որի հիմքում դասական գրաքարի ժամանակային սահմանազատման հարցն էր:

1905-14թթ. տպագրվում են հոդվածներ՝ նվիրված դասական բառապաշարն անհարազատ ձևերից մաքրելու խնդրին, ինչպես ընդգրկուն բառակազմով, այնպես էլ որևէ բառի կամ մասնիկի դասական լինել-չլինելու ճշգրտումներով՝ ըստ անհրաժեշտության, ստուգաբանությամբ զուգակցված: Ուսումնասիրության նյութ են դառնում նաև մատենագրական այն բառերը, որոնք հայագիտության համար կարող են արժեքավոր լինել: Այսպես՝ Թ. Կետիկյանը ածուխ-ածուղ տարբերակներից հնագույնը և հետևաբար կիրառելի համարում է վերջինը², Ա. Վարդանյանը ցույց է տալիս, որ «-ային» մասնիկը դասական նկարագիր չունի³, այլ հոդվածում նույնն է հաստատում նաև «ամեն» բառի համար⁴, մեկ այլ տեղ քննում է ասորատառ «խոստովանութիւն» բառը, որին կցում է տառադարձության ստուգության վերաբերյալ դիտողություններ⁵, Հ. Թիրյաքյանը «Մեսրոպ» անունը ստուգաբանում է «մե(ծ)-սրովպ=բարեհամբալ»⁶, Ա. Մատիկյանը հայ մատենագրության մեջ հիշատակված ուրարտական երկու անուն է ներկայացնում. «Շարիթուր» անձնանունը և սկյութների «խադտիք» անվանումը⁷ և այլն:

Հանդեսում բառերն ուսումնասիրվում են նաև հակադիր տեսանկյուններից: Ն. Բյուզանդացու բառաքննության որոշ օրինակներ 1908թ. տպագրված հոդվածում ուղղում է Տ. Չիթճյանը⁸: Հերքող պատասխանը տպագրվում է նույն թվականին: Հակընդդեմ հատվածը երկրորդաբար հաջորդում էր բուն շարադրանքին, որ բառային այլևայլ ճշտումների մասին էր՝ ուղղված Ն. Ալկինյանին⁹:

¹ Տե՛ս Հ. Գր. Գալենքյարեան, Ոսկեդարեան եւ ոչ ոսկեդարեան հայերէններ, ՀԱ, 1903, ք. 9, էջ 257-272:

² Տե՛ս Հ. Թ. Կետիկեան, Ածու՞խ քէ ածուղ, ՀԱ, 1905, ք. 11, էջ 346-348:

³ Տե՛ս Հ. Ա. Վարդանեան, Հայերէն -ային մասնիկը դասական հայերէնի մէջ, ՀԱ, 1910, ք. 8, էջ 242-244:

⁴ Տե՛ս Հ. Ա. Վարդանեան, Ամեն (=ամենայն) բառը դասական հայերէնի մէջ, ՀԱ, 1913, ք. 3, էջ 158-160:

⁵ Տե՛ս Հ. Ա. Վարդանեան, Ասորատառ հայերէն բառ մը, ՀԱ, 1913, ք. 2, էջ 127-128:

⁶ Տե՛ս Յ. Թիրեաքեան, «Մեսրոպ» անուան շուրջը, ՀԱ, 1914, ք. 4, էջ 245-246:

⁷ Տե՛ս Հ. Ա. Մատիկեան, Ուրարտական երկու անուններ հայ մատենագրութեան մէջ, ՀԱ, 1914, ք. 12, էջ 706-708:

⁸ Տե՛ս Տ. Չիթճեան, Հայ լեզուի խնդիրներ, ՀԱ, 1908, ք. 2, էջ 33-37:

⁹ Տե՛ս Ն. Բիւզանդացի, Նորայր Ն. Բիւզանդացի առ մեծարգոյ Հ. Ներսէս Ալկինեան, ՀԱ, 1908, ք. 5, էջ 155-156:

1910-14թթ. բառաքնության շարք է տպագրում Ա. Վարդանյանը՝ ճշտելով մատենագրական բառերի դասականությունը, մեկնաբանելով կամ հատակեցնելով դրանց նշանակությունները, ուղղելով սխալագրությունները¹։ Որոշ օրինակների հավաստիությանը 1914թ. անդրադառնում է Հ. Թխլյաքյանը՝ «առելի ի հաստատութիւն քան ի ցրումն նշանակեալ ցուցմանց մեծ մասին»²։

1913թ. «Ասորական փոխառութիւններ եւ բառաքնութիւն» հոդվածում³ Ա. Վարդանյանը ուսումնասիրում է ասորական մի շարք փոխառություններ, որոնք «կա՛մ անծանօթ մնացած են ցայժմ նշանակութեամբ եւ կա՛մ սխալ մեկնուած»⁴, իսկ 1920թ. «Ասորերէնի միջնորոյութեամբ յունարենէ փոխ առնուած բառեր» հոդվածում շտկում է հունական փոխառությունների ուղղագրական վրիպակները⁵։

2.2. Գրական ինքնագործունեության քննադատություններ և գրական ուղղորդումներ

1887 թ. տպագրված «Նորագոյն հայերէն լեզուն» հոդվածում Ա. Այտընյանը մեղակայացնում է գրաբարն ու աշխարհաբարը համատեղելու, մեկը մյուսով լրացնելու փորձի հետևանքները, երբ աշխարհաբարը՝ որպէս «անտէր միութ», անհատական զանազան փոփոխությունների ենթարկվեց ու կանոնավորվելու փոխարեն՝ կեղծվեց։ Ելքն, ըստ հեղինակի, գրական համաձայնեցված գործողությունն է⁶։

1880-ական թթ. հայկական մամուլում, հատկապէս «Մշակի» և «Արևելքի» միջև, բանավեճ ծավալվեց արտասանության արևելյան և արևմտյան տարբերակների մախընտրելիության խնդրով, թե ո՛րն է ճիշտը՝ քնիկը, և

¹ Տե՛ս Հ. Ա. Վարդանյան, Բառաքնական դիտողություններ, ՀԱ, 1910, ք. 12, էջ 368-370, 1911, ք. 1, էջ 47-50, ք. 2, էջ 97-103, ք. 3, էջ 172-178, ք. 5, էջ 297-304, ք. 8, էջ 498-504, ք. 11, էջ 688-693, ք. 12, էջ 746-749, Բառաքնական նոր դիտողություններ, 1913, ք. 5, էջ 293-302, ք. 6, էջ 343-349, ք. 8, էջ 488-491, ք. 9, էջ 555-563, ք. 10, էջ 623-627, 1914, ք. 2, էջ 117-124, ք. 6, էջ 319-334, ք. 10, էջ 636-647, ք. 12, էջ 740-744։

² Զ. Թխլյաքյան, Բառաքնական դիտողություններ, Վարդանյան Ա., ՀԱ, 1914, ք. 1, էջ 55-58։

³ Տե՛ս Հ. Ա. Վարդանյան, Ասորական փոխառություններ եւ բառաքնութիւն, ՀԱ, 1913, ք. 3, էջ 129-136։

⁴ Ն. տ., էջ 131։

⁵ Տե՛ս Հ. Ա. Վարդանյան, Ասորերէնի միջնորոյութեամբ յունարենէ փոխ առնուած բառեր, ՀԱ, 1920, ք. 10, էջ 322-339։

⁶ Տե՛ս Ա. Այտընյան, Նորագոյն հայերէն լեզուն, ՀԱ, 1887, ք. 9, էջ 133-135։

հետևաբար՝ ուրը պետք է գլխել արտասանական միասնության համար: Պարզաբանման խնդրանքով հանդեսի խմբագրությունը դիմում է Հ. Հյուբշմանին: Պատասխանը 1888 թ. տպագրվում է հանդեսում Գ. Մենկիշյանի քարգմանությամբ: Ըստ Հ. Հյուբշմանի՝ վեճն անօգուտ է. հնչյունափոխությունները ճիշտ ու սխալ չեն լինում, դրանք լեզվի զարգացման անխուսափելի հետևանքն են, առաջանում են խոսողի կամքից անկախ և նրա կամքով չեն կախող փոխվել¹: Հարցին լեզվաբանական լուծում է տալիս Ա. Այտընյանը: Նա, «Տառադարձության խնդիր» հոդվածաշարում (1888-1889թթ.) քննելով պայթական բաղաձայնների արևելյան և արևմտյան արտասանական տարբերակները և նկարագրելով կրած պատմական փոփոխությունները, ցույց է տալիս դրանց օրինաչափ և հետևաբար՝ ընդունելի լինելը²:

1887-1889թթ. Կ. Տուրյանը (Ա. Սարուխանյան) «Ռուսահայոց գրականությունը» հոդվածաշարում³ արևելահայ գրականության վերլուծության մի հատվածում քննադատում է կանոնավորման ռուսաբան ուղղությունը՝ օտար լեզվամտածողության ներթափանցումը, գրային տառադարձություններն ու անհարկի փոխառությունները⁴:

Անցյալի մատենագրությունից քաղված «Գոյներու բաղադրութեան եղանակ ըստ հնոց» հոդվածին (1895թ.) կցված է Ա. Այտընյանի խմբագրական հավելվածը⁵: Անձանոթ մի շարք փոխառյալ բառեր բացատրելուց հետո Այտընյանն ընդհանրացնում է նյութի ուղղագրական շեղումների քննադատությունը՝ հանգելով ժամանակակից երկձևություններին: Նման անցում կա նաև 1898թ. «Հետազոտությունը ի վերայ համեմատական համաձայնութեան հայերէն լեզուի» վերնագրով հոդվածում: Ա. Այտընյանը, ներկայացնելով հայերենի հոդերի վերաբերյալ Մեյեի ուսումնասիրությունը, քննադատում է աշխարհաբարում հոդերի կիրառության կամայականությունները, մասնավորապես՝ դրանց չիմնավորված փոխարինելիությունը, արևելահայերենի

¹ Տես Հ. Գ. *Մենկիշյան*, Հիւպշման եւ Արեւմտեան հայ արտասանութիւն, ՀԱ, 1888, թ. 7, էջ 122:

² Տես Ա. *Այտընյան*, Տառադարձութեան խնդիր, ՀԱ, 1888, թ. 5, էջ 73-77, թ. 6, էջ 97-104, թ. 7, էջ 117-122, թ. 9, էջ 149-155, թ. 10, էջ 165-168, թ. 12, էջ 208-213, 1889, թ. 3, էջ 37-40:

³ Տես Կ. *Տուրյան*, Ռուսահայոց գրականութիւնը, ՀԱ, 1887, թ. 6, էջ 85-88, թ. 8, էջ 115-118, 1888, թ. 1, 11-12, թ. 2, էջ 21-22, թ. 7, 125-127, թ. 8, էջ 136-138, 1889, թ. 1, էջ 6-9, թ. 2, էջ 25-28, թ. 4, էջ 61-63:

⁴ Տես նվժ. հոդված, 1888, թ. 1, էջ 11-12, թ. 2, էջ 21-22, 1889, թ. 1, էջ 6-9, թ. 2, էջ 25-28:

⁵ Գոյներու բաղադրութեան եղանակ ըստ հնոց, Ա. *Այտընյան*, Յանւոյած, Տեղեկութիւնք հատուածիս այլեւայլ բառերուն վրայ, ՀԱ, 1895, թ. 12, էջ 370-371:

մանությունը անհող սեռականի կազմությունները¹: Զննադատության առիթ է դառնում Մեյի նշված աշխատության տպագրությունը՝ Դ. Խաչկունցի սխալաշատ բարգմանությամբ²:

Լեզվական այն նորամուծությունները, որոնք հեղինակի քնահաճույքի հետևանք են, և աշխարհաբար անմիաբան կանոնակարգելու փորձերը Գ. Մենկիշյանը քննադատում է «Աշխարհաբար լեզուին արդի վիճակը» հոդվածաշարում՝ տպագրված 1895թ.: Լեզվաբանը աշխարհաբարի բնականության համար վտանգ է համարում գրաբարյան ձևերի ինչպես անարգել գործածությունն, այնպես էլ անխտիր մերժումը, օտարաբան բարգմանություններն ու բառերի չհամաձայնեցված ընտրությամբ բառարանագրությունը³:

1901թ. «Բառաստեղծութիւն, թէ՞ բառագեղծութիւն» վերնագրով տպագրվում է Թ. Կետիկյանի հոդվածն՝ ընդդեմ կամայական նորակազմությունների⁴: Զննադատվում են նաև ուղղագրական անկանոնությունը⁵, ոճական ու խմաստային անճշտությունները⁶:

Բանավեճը հանդեսում նաև խրախուսվում էր «սեփական օրինակով» Թ. Կետիկյանը՝ «Կ.» ստորագրությամբ, տպագրում է հոդված «Արմատացեալ սխալ մը» վերնագրով, որում ճշտում է «բարդի» և «կաղամախի» անվանումների շփոթը⁷: Գ. Մենկիշյանը, թղթակցի ամունից, «Բնապատում» ստորագրությամբ, գրում է ընդդիմախոսական հոդված⁸, որ կից ուներ խմբագրական ծանուցում. «Յաջորդ յոդուածս ընդունեցանք ծանօթ հմուտ գրչէ մը, զոր՝ թպէտ մեր տեսութեան հակառակ, սակայն հարկ կը համարինք հյուստարակել, որպէս զի «Հանդիսի» խմբագրութիւնը աչառու չկարծուի. իսկ մեր պատասխանը՝ ըստ բաղձանաց Մեծ. Յօղումազքին, յաջորդ թուով կու

¹ Տե՛ս Ա. Այտընեան, Հետազոտութիւնք ի վերայ համեմատական համաձայնութեան հայերէն լեզուի, էջ 379-380:

² Տե՛ս Ա. Մէյէ, Հետազոտութիւններ հայերէնի բաղդատական համաձայնութեան վրայ, «Բիւրակն», 1898, ք. 37-38, էջ 662-664, ք. 41-42, էջ 724-726:

³ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Աշխարհաբար լեզուին արդի վիճակը, ՀԱ, 1895, ք. 9, էջ 262-264, ք. 10, էջ 291-293, ք. 12, էջ 357-360:

⁴ Տե՛ս Հ. Թ. Կետիկեան, Բառաստեղծութիւն, թէ՞ բառագեղծութիւն, ՀԱ, 1901, ք. 10-11, էջ 350-351:

⁵ Տե՛ս Թ. Վանանդացի [Հ. Գ. Մենկիշեան], ՀԱ, Գրական բողոքականութիւններ, ՀԱ, 1901, ք. 12, էջ 358:

⁶ Տե՛ս Թ. Վանանդացի [Հ. Գ. Մենկիշեան], ՀԱ, Գրական կեղծիք, 1902, ք. 4, էջ 122:

⁷ Տե՛ս Հ. Թ. Կետիկեան, Արմատացեալ սխալ մը, ՀԱ, 1905, ք. 2, էջ 51-53:

⁸ Տե՛ս Բնապատում [Հ. Գ. Մենկիշեան], Կաղամախի ու բարտին, ՀԱ, 1905, ք. 7, էջ 221-222:

տանք»¹: Խոստումը տպագրվում է. ծայր է առնում բանավեճ, որ շարունակվում է փոխադարձ երեք հոդվածներով²:

Հանդեսը, ստանձնելով «ուղղիչ և յառաջացուցիչ - բայց երբեմն մաեւ աւելոյլ» հրատարակութեանց համար՝ կասեցուցիչ»³ դեր, մաս ալարբերաբար արծագանքում էր բաշարամների. դասագրքերի տպագրություններին և քննադատելով⁴ կամ հավանություն տալով⁵ կողմնորոշում ընթերցողին:

2.3. Ուղղագրութեան խնդիրը

1908թ. տպագրվում է Ա. Ավետիսյանի «Ուղղագրութեան խնդրոյ առթիւ» հոդվածը⁶: Որպեսզի ուղղագրական օրենքը հիմնական լինի, հարկ է այն կազմվի «լեզուին ծայնական օրինաց քննութեամբ եւ անոր էութեան համապատասխան»⁷. այս նկատառումով և սկզբունքով հեղինակը քննում է վ. ւ, ու տառերը և վեր հանելով դրանց պատմական հիւնքը՝ հաստատում գործածութեան իրավունքը:

1910թ. տպագրվում է Գ. Մենկիշյանի «Հայերէնի դէմ յանդգնութիւն մը» հոդվածը⁸, ապա հաջորդ համարում մույն մտահոգութեամբ «Հայ լեզուի ուղ-

¹ Ն. տ. էջ 221:

² Տես Հ. Թ. *Կետիկեան*, Բարսիւն ու կաղամախին, 1905, ք. 9, էջ 285-286, Բնապատում Հ. Գ. *Մենկիշեան*], Կաղամախին ու Բարսիւն, 1905, ք. 11, էջ 319-320, Հ. Թ. *Կետիկեան*, Բարսիւն ու կաղամախի բառերու խնդիրը, 1905, ք. 11, էջ 350-352:

³ Տես «Յուշարծան», էջ 60:

⁴ Տես Հ. Գ. *Մենկիշեան*, Ճաշակ ոսկեղէն դպրութեան, ՀԱ, 1888, ք. 9, էջ 158-160, Հ. Ս. *Տէրվիշեան*, Երեքլեզուեան ընդարծակ բառարան, Արիկեան Մ, ՀԱ, 1890, ք. 9, էջ 218-19, Հ. Պ. Չաքարեան, Հիմնական մոր եղանակ ֆրանսերէն շարադրութեան, Հինդեան Յ. Թ., ՀԱ, 1890, ք. 9, էջ 219, Հ. Յ. *Տաշեան*, Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները, Մալխասեանց Ստ., ՀԱ, 1891, ք. 3, էջ 81-83, Հ. Յ. *Տաշեան*, Արուեստ հայ լեզուի ուսման. գործնական քերականութիւն հայերէն լեզուի, Զայնց Կ., ՀԱ, 1892, ք. 1, էջ 24-26, Հ. Յ. *Թովսիկեան*, Տեսական եւ գործնական քերականութիւն աշխարհիկ լեզուի, Պօզաճեան Բ., ՀԱ, 1892, ք. 5, 148-151, Հ. Յ. *Թովսիկեան*, Բառարան ֆրանսերէն հայ աշխարհիկ, Նուպարեան Մ., ՀԱ, 1892, ք. 6, էջ 179-183, Հ. Յ. *Թովսիկեան*, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Գաբամաճեան Ս., ՀԱ, 1892, ք. 9, էջ 277-280, Ն. *Արոնց*, Նոր բառգիրք հայերէն գրաբարէ՝ աշխարհաբար լեզուի, *Տէր Արրահամեան* Յ., ՀԱ, 1898, ք. 10-11, էջ 323-327:

⁵ Տես Հ. Մ. *Թորչայեան*, Յանձնելի դասագիրք, ՀԱ, 1887, ք. 9, էջ 138-139, Հ. Պ. Չաքարեան, Գաղղ. տաճկ. բառարան արուեստական եւն եւն բառերու, *Թընգրը Ա. Սինապեան* Գ., ՀԱ, 1896, ք. 9, էջ 280-281:

⁶ Տես Հ. Ա. *Աւետիսեան*, Ուղղագրութեան խնդրոյ առթիւ, ՀԱ, 1908, ք. 11, էջ 321-324, 1909, ք. 1, էջ 21-24:

⁷ Ն. տ., էջ 322:

⁸ Տես Հ. Գ. *Մենկիշեան*, Հայերէնի դէմ յանդգնութիւն մը, ՀԱ, 1910, ք. 4, էջ 113-114:

դագրութիւնը» հողվածը¹, որն, ինչպես նախորդները, հիմնականում «վեամոլութեան» դեմ էր. «Թող իւր տեղը մնայ ժայնատուր եւ քաղածայն լ-ը, թող մեծն ու պզտիկը սխալի այս գրին ուղղագրութեան մէջ- կը լսէ՞ք- հազարաւոր քառերու շէնքը անվթար մնայ»²: Այս հողվածին Ստ. Մալխասեանը պատասխանում է «Մշակում», հետևում է Մենկիշյանի «Ստ. Մալխասեան «Չախող լեզուայարդար» պատասխան հողվածը՝ այբբենական եզրակացութիւններով լեզվի հմնականութեան օգտին»³: Ի հաստատումն դրա՝ 1913թ. տպագրվում է Տ. Բաբամանյանի «Հայ լեզուի ուղղագրութեան խնդիրը» հողվածը⁴:

1913թ. Հայ տպագրութեան հոբելյանական տարեդարծի առթիվ Գ. Մենկիշյանը՝ վերստին անդրադառնում է ուղղագրութեան խնդրին՝ այն ընդհանրացնելով որպէս լեզվական խնդիր⁵:

2.4. Լեզվաբանական նորակազմ տերմինները

Այս հողվածներում գործածված նորակազմ տերմինները հիմնականում ստեղծվել են բառերի ծագման աղբյուրների հստակեցման, բառակազմութեան բնութիւնի և տառադարձութեան սկզբունքների ուսումնասիրութեան համատեքստում:

ա. Բառերի ծագմանն ու կազմութեանն առնչվող տերմիններ:

ա) Հին և հնագույն բառեր. *նախնի բառ* (1908,11,324), *նախատուր ձեւ* (1905,11,348), *հնաձեւութիւն* (archaïsme) (1902,6,169), *յետնագոյն ձեւ* (1905,11,348), *յետսամուտ բառ* (1898,10-11,325), *նախաբուն* (1914,1,57) և այլն:

բ) Նորակազմ բառեր. *նորերուկ բառ* (1895,12,359), *նորալուր անուն* (1888,7,119), *նորագիտ բառ* (1908,7,193), *նորագիտ տարր* (1909,8,252) և այլն:

գ) Տերմինի անվան տարբերակներ. *ուսումնական բացատրութիւն* (terme) (1889,2,27), *եզրներ* (termini) (1913,12,723), *գիտնական բառ* (1892,6,180), *գիտական բառ* (1896,9,280):

¹ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Հայ լեզուի ուղղագրութիւնը, ՀԱ, 1910, ք. 5, էջ 139-143, ք. 6, էջ 177-179:

² Ն. տ., էջ 179:

³ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Ստ. Մալխասեան «Չախող լեզուայարդար», ՀԱ, 1910, ք. 8, էջ 225-234:

⁴ Տե՛ս Տ. Բաբամանյան, Հայ լեզուի ուղղագրութեան խնդիրը, ՀԱ, 1910, ք. 9, էջ 279-281:

⁵ Տե՛ս Հ. Գ. Մենկիշեան, Ուղղագրութեան խնդիր կա՞յ հայուն համար, ՀԱ, 1913, ք. 12, էջ 724-736:

դ) Ծագման հիմքով և կազմության բնույթով տարբերակված բառեր. *նոյնածին բառեր* (1914,1,57), *ինքնաստեղծ բառեր* (1895,10,293), *նախորդին սխալ իմաստը փոխանակող* (substituer) *բառ* (1895,12,360) և այլն:

ե) Բառակազմիչ ձևայիններ. *բանձր վերջավորություն* (1889,1,9), *բանձրացնող նշան* (1889,1,9), *բառիկ* (1903,8,231) և այլն:

զ) Գլխի տեսակով տարբերակված բառեր. *նոտրադրոշմ բառ* (1913,10,626), *նոտրատիպ բառ* (1913,8,489):

բ. Հնչյունների արտասանական, դիրքային տեսակներին, տառադարձությանն առնչվող տերմիններ:

ա) Հնչյունների տեսակներ՝ ըստ արտաբերության և կազմության. *խստագոյն բաղաձայն, թուլագոյն բաղաձայն* (1888,12,209), *բաղադրեալ ու* (1908,11,324), *միատառ երկձայն* (1903,12,382) և այլն:

բ) Հնչյունական դրություն, հատկանիշ նշող տերմիններ. *ձայնարախուրին* (hyatus) (1910,8,230), *խառնաձայնություն* (1888,7,119) *ձայնաուղրական դրություն* (1910,5, 143), *միջաձայն* (1905.11,347) և այլն:

գ) Տառադարձության հիմնականում բառային անվանումներ. *անդրադարձում* (1888,5,74), *փոխաբերում* (1888,5,75), *ընդունելություն* (1889,2,26), *անուանառություն* (1888,5,77), *հնչմանց ալլալություն* (1889,3,40), որը, գործածվելով նաև «հնչյունափոխություն» նշանակությամբ (1900,3,69), իմաստային աղերս ունի *տարագիր* (1888,12,210) տերմինի հետ:

Այս ուղղության շատ հաղվածներ, գնահատողական բնույթով պայմանավորված, ոճական առումով տարասեռ են: Սա հասկացրել է բառային հատկանիշների ակտիվության. *բարբարոս բառեր* (1888,6,99), *խեղած բառ* (1888,6,99), *աղետալի տառադարձություն* (1888,6,101), *լեզուական ապստամբություն* (1887,9,134), *ուղղագրական ալլանդակություն* (1888,5,75) և այլն. մույն կերպ նորմավորման նախնական փուլում գտնվող աշխարհաբարի անհատական մշակումներից խոցելի լինելը ցույց տալու համար գործածվում են *դեռածին լեզու* (1895,12,358), *նորածին աշխարհաբար* (1895,12,359), *նորածին գրատոր* (1887,9,134) և այլ կապակցություններ:

3. Բարբառների և միջին հայերենի ուսումնասիրությունը հանդեսում

Լեզվի նախնական առանձնահատկությունների կրող բարբառներում ևս պատմահամեմատական լեզվաբանությունը որոնեց հնագույն ձևեր¹: Հանդեսում բարբառային հիմքով ընդհանրացումները գերակա չեն. հիմնակա-

¹ Տես Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 456:

նում ուսումնասիրված են առանձին բարբառների քերականություններն ու բառապաշարները:

Բարբառների հնագույն շերտը ցույց տալուց բացի՝ փորձ էր արվում նաև նորմավորվող աշխարհաբարին արտահայտման ձևերի ընտրության նյութ ապահովել: Այդ կրկնակի նպատակը հստակ նշել է Հ. Գալանճյանը. ա. «զաւառաբարբառներու մէջ շատ անգամ պահուած են բառեր, ոճեր, հնչման մասնատրութիւններ, որոնք անգին զանձեր են լեզուագիտական տեսակետով», բ. «հայ զաւառաբարբառներու ծանօթութիւնն եւ ուսումնասիրութիւնը մեծ օգնութիւն կրնայ ընծայել մեր գրականութեան ճոխացմանն ու զարգացմանը»¹:

Ա. Այտընյանը 7-րդ դարը դիտում էր լեզվի շրջանաբաժան՝ որպէս հայերենի որակական անցման ժամանակային սահման². «Միջնադարեան հայերէնի կամ նախնեաց ռամկօրէնի զանազանութիւնը գրեթէ բացառապէս Վիեննայի Մխիթարեանց գործն է: Յատկապէս «Քննական քերականութեան» արդիւնքն է այս, որ առաջին անգամ ոլորշ շեշտուած է նախնեաց ռամկօրէնին գոյութիւնն իբր ինքնակաց միջնադարեան հայ լեզու»³: Այդ տարբերակումը համակողմանի ուսումնասիրությամբ հաստատելու Ղ. Հովնանյանի փորձը՝ «Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ» աշխատությունը⁴, սկզբնապէս մաս առ մաս տպագրվել է հանդեսում: Ամսագիրը պարբերաբար ծանուցել է նաև միջին հայերենի ուսումնասիրության հետագա ընթացքի մասին:

3.1. Բարբառագիտական ուսումնասիրություններ

1886թ. լույս տեսած լեհ գիտնական Յ. Հանուշի և նրա «Sur la langue des arméniens polonais» գրքի մասին 1887թ. տպագրվում է Հ. Թուխիկյանի ծանոթագրությունը: Նշված «Լեզու լեհահայոց» գրքում Յ. Հանուշը հայերենի

¹ Տե՛ս Յ. Գալանճեան, Եդուկոյ Հայոց զաւառաբարբառը, ՀԱ, 1898, ք. 4, էջ 97:

² Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 121:

³ Հ. Յ. Տաշեան, Կիլիկեան հայերէնը, ՀԱ, 1901, ք. 1, էջ 12-13:

⁴ Հոդվածաշարը Վիեննայում 1897 թ. տպագրվել է առանձին գրքով՝ որպէս աշխատության 1-ին մաս, նույն րվականին լույս է տեսել նաև 2-րդ մասը: Հեղինակը նպատակ ուներ ուսումնասիրությունը շարունակել միջին հայերենի քերականության շարադրանքով, սակայն վախճանվում է, և գործն անավարտ է մնում: Այդուհանդերձ, ուսումնասիրության ընդգրկումը եզակի է, և հետագայում այն օգտագործվում է որպէս աղբյուր (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 232, 234, 236):

ընդհանուր հիմքով ուսումնասիրում է լեհահայ բարբառը¹, որն, ըստ գրախոսի. «Հայերենի գաւառալեզուաց մասնական գիտութեան, նաեւ հայերենի համեմատական լեզուագիտութեան համար մեծ արժէք ունի»²: Հանդեսում քարգմանաբար տպագրվում է նաև Հանուշի «Lautlehre der polnisch-armenischen Mundart von Kutý» աշխատության ներածությունը հայերեն բարբառների դասակարգման, ուսումնասիրության մեթոդի և նպատակի մասին³:

Ս. Մելիք Դավիթ-Բեկը, Ա. Մեյեի օգնությամբ և ղեկավարությամբ⁴, ուսումնասիրել էր Մարաշի բարբառի հնչյունական ու քերականական առանձնահատկությունները, որ 1896թ. չորս մասով տպագրվում է հանդեսում⁵:

1898-1899թթ. Հ. Գազանճյանը «Եսոյկիոյ հայոց գաւառաբարբառը» հոլովածաշարում ներկայացնում է բարբառի գործածական բառացանկը՝ կազմության ու ստուգաբանական ճշտումներով, զուգահեռ հնչյունաբանական, ձևաբանական և ոճական առանձնահատկությունները⁶: 1909թ. տպագրվում է աշխատության հավելված շարունակությունը. «100է աւելի հասարակ բառեր եւ նոյնչափ ալ առածներ, ոճեր, ասացուածներ, կրկնաւորներ եւ այլն»⁷:

1898թ. Գ. Մենկիշյանի քարգմանությամբ տպագրվում է Լ. Մսերյանցի «Հայերեն բարբառախօսութիւն» հոլովածը, որտեղ լեզվի գրական ու խոսակցական տարբերակների համեմատությունը ներկայացված է որպէս միջոց բարբառային տարբերություններ չունեցող, միասնական հմագույն հայերենը վերականգնելու համար⁸: Մենկիշյանը 1902թ. ևս, արդեն գրախոսությամբ⁹, անդրադառնում է Մսերյանցի մեկ այլ ուսումնասիրության՝ նվիրված Մուշի բարբառի ձևաբանությանը՝ գրաբարի և միջին հայերենի համե-

¹ Տես Հ. Յ. Թովսիկեան, Յ. Հանուշ լեհացի հայագետ եւ Կալիցոյ հայոց գաւառալեզուն, ՀԱ, 1887, ք. 2, էջ 22-24:

² Ն. տ., էջ 23:

³ Տես Հ. Յ. Տաշեան, Ձայնագիտութիւն լեհահայ բարբառոյն, ՀԱ, 1890, ք. 2, էջ 41-43:

⁴ Տես Ս. Մելիք-Դավիթ պէկ, Ձայնական ուսումնասիրութիւն Մարաշի բարբառին, ՀԱ, 1896, ք. 2, էջ 43: Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 801:

⁵ Տես Ս. Մելիք-Դավիթ պէկ, Ձայնական ուսումնասիրութիւն Մարաշի բարբառին, 1896, ք. 2, էջ 43-45, ք. 4, էջ 113-114, ք. 8, էջ 229-232, ք. 12, էջ 354-37:

⁶ Տես Յ. Գազանճեան, նշվ. հոդված, 1898, ք. 4, էջ 97-103, ք. 5, էջ 146-147, ք. 6, էջ 174-175, ք. 7, էջ 208-210, ք. 10-11, 298-306, 1899, ք. 1, էջ 11-14, ք. 2, էջ 46-49, ք. 5, էջ 145-147, ք. 6, 176-177, ք. 7, 207-210, 1909, ք. 11, էջ 336-341:

⁷ Ն. տ., էջ 336:

⁸ Տես Լ. Մսերեանց, Հայերեն բարբառախօսութիւն, ՀԱ, 1898, ք. 10-11, էջ 306-313:

⁹ Տես Հ. Գ. Մենկիշեան, Ուսումնասիրություններ վասն հայ բարբառախօսութեան, Մսերեանց Լ., ՀԱ, 1902, ք. 1, էջ 15-16:

մատությամբ. «այս երկասիրութեամբն ալ գեղեցիկ օղակ մը աւելցուց բարբառագիտութեան շրջանի վրայ»¹:

1899թ. տպագրված Գր. Վանցյանի «Նախահայերենի հետքեր զօկերենում»² հոդվածում առաջ է քաշված տեսակետ, ըստ որի՝ *այ* երկբարբառի՝ միայն Ագուլիսի բարբառում հանդիպող որոշ կիրառություններ գրաբարից վաղ ծագում ունեն:

1899 թ. Փարիզում հրատարակվել էր Հ. Աճառյանի «Les explosives de l'ancien Arménien étudiées dans les dialectes modernes» աշխատությունը հին հայերենի սլայթական բաղաձայնների բարբառային փոփոխությունների մասին: Գրքույկում ներկայացված են ինչպես հրատարակչի, այնպես էլ Ռուսլոյի և Մեյեի վերլուծություններն ու դիտողությունները, որոնք Տաշյանն ամփոփում է հանդեսում³:

1900-1903թթ. տպագրվում է Ս. Մելիք Դավիթ-Բեկի բարբառագիտական մեկ այլ աշխատություն՝ «Արաբկիրի գաւառաբարբառը»: Հոդվածում համակողմանի ուսումնասիրությամբ վեր են հանված բարբառի հնչյունական և քերականական հատկանիշները⁴:

1901թ. Հ. Քոսյանի ծանոթագրությամբ տպագրվում է Կ. Բասմաճյանի և Ե. Օտյանի հավաքագրած բառերի ցանկը՝ կից բացատրություններով⁵: Հաջորդիվ Բ. Հովնանյանը խմբագրում է այն՝ ուղղելով բացատրական սխալներն ու գրության անճշտությունները⁶:

1903թ. տպագրվում է Մ. Շվոտի «Բալուի գաւառաբարբառն» հոդվածը, որ բարբառային բառերի ցանկ է՝ քաղված հեղինակի աշխատությունից⁷:

1908-11թթ. Մ. Գաբրիելյանի «Ակնայ գաւառաբարբառը» հոդվածաշարում⁸ ներկայացված են բարբառի առավելապես բանահյուսական մոտիվներ,

¹ Ն. տ., էջ 16:

² Տե՛ս Գր. Վանցեան, Նախահայերենի հետքեր Ձօկերենում, ՀԱ, 1899, ք. 5, էջ 147:

³ Տե՛ս Հ. Յ. Տաշեան, Հայ տառերու հագագաբանութիւն, ՀԱ, 1899, ք. 10, էջ 289-295:

⁴ Տե՛ս Մելիք-Դավիթ սէկ Ս., Արաբկիրի գաւառաբարբառը, ՀԱ, 1900, ք. 8, էջ 248-252, ք. 9-10, էջ 295-303, ք. 11, էջ 328-335, ք. 12, էջ 362-367, 1901, ք. 2, էջ 36-42, ք. 5-6, էջ 173-177, ք. 7, էջ 213-217, ք. 8, էջ 235-238, ք. 10-11, էջ 338-342, 1902, ք. 1, էջ 19-24, ք. 2, էջ 48-53, ք. 6, էջ 177-179, ք. 7, էջ 219-224, ք. 8, էջ 268-271, ք. 10, էջ 326-330, ք. 11, էջ 359-363, ք. 12, էջ 393-39, 1903, ք. 2, էջ 47-49, ք. 4, էջ 125-127, ք. 7, էջ 218-220, ք. 11, էջ 335-338:

⁵ Տե՛ս Հ. Յ. Զօտիւն, Գաւառական բառեր, ՀԱ, 1901, ք. 3-4, էջ 114-119:

⁶ Տե՛ս Հ. Բ. Յովնանեան, Քանի մը դիտողութիւն գաւառական բառերու հրատարակութեանց վրայ, ՀԱ, 1901, ք. 8, էջ 238-240:

⁷ Տե՛ս Մ. Շուտ, Բալուի գաւառաբարբառն, ՀԱ, 1903, ք. 2, էջ 45-47:

⁸ Տե՛ս Մ. Գաբրիէլեան, Ակնայ գաւառաբարբառը, ՀԱ, 1908, ք. 6, էջ 181-186, ք. 7, էջ 207-212, ք. 8, էջ 248-252, ք. 9, էջ 279-288, ք. 10, էջ 315-319, ք. 11, էջ 344-350, 1909, ք. 2, էջ 54-61, ք. 3, էջ 91-96, ք. 4, էջ 120-124, ք. 5, էջ 155-159, ք. 6, էջ 190-192, ք. 7, էջ

ման քերականական բնութագիրը. «Ներկայ աշխատասիրութեան տիրական տեսակետը բանասիրական է, որուն ստորակարգեալ է լեզուաբանականը: Բարբառին աղաւաղումն եւ քերականութեան երեւոյթներն քննուած են հոս որքան հարկաւոր էր գայն ճանչցնելու համար իր էական մասնատրութեանց մէջ»¹: Այդ հոդվածաշարում գործածված մի շարք բարբառային բառերի դասական ձևերը 1912թ. վերականգնում է Ա. Վարդանյանը²:

1908թ. Ա. Ավետիսյանը, գրախոսելով Ֆ. Ֆինկլի հայ գնչուների լեզվի ուսումնասիրությունը, գնահատում է այն որպես առաջին հիմնավոր քայլ մասնակի ու ակնարկային ուսումնասիրություններից հետո. «գիտնական Ֆինք հայ գնչուներու լեզուին ուսումնասիրութեան առաջին եւ գլխաւոր հիմը կը դնէ»³:

1909թ. տպագրվում է Մ. Մաքսուդյանցի «Զօկերենի «ըման» շաղկապը», որն ըստ հեղինակի՝ փոխառված է թուրքերենից⁴: 1910թ. տպագրվում է հեղինակի հավաքագրած Ակնի բարբառի փոխառյալ բառերի ցանկը⁵: Նրա հաջորդ «Le parler arménien d'Akn» աշխատության մէջ, Հ. Աճառյանի 1912թ. գրախոսությամբ, գնահատելին հատկապես լեզվաբանական «վերջին ընդունուած ու կատարելագոյն» մեթոդի կիրառումն է⁶:

Հ. Աճառյանի ուսումնասիրությունները ևս գրախոսության նյութ են դառնում. 1909թ. Ա. Վարդանյանը պարզաբանում է բարբառների ձևաբանական դասակարգման բնույթը⁷, 1910թ. դասակարգման նյութը օրինակներով լրացնում է Հ. Գազանճյանը՝ քննելով սահմանական եղանակի ներկայի բարբառային մի քանի կիրառություններ⁸, 1912թ. Վ. Բունկուցյանը ներկայացնում է

221-224, ք. 8, էջ 252-256, ք. 9, էջ 267-273, ք. 12, էջ 376-379, 1910, ք. 3, էջ 91-93, ք. 4, էջ 114-118, ք. 8, էջ 234-238, ք. 10, էջ 298-301, ք. 11, էջ 343-347, ք. 12, էջ 365-368, 1911, ք. 2, էջ 103-109, ք. 7, էջ 410-419, ք. 10, էջ 585-596:

¹ Ն. տ., 1908, ք. 6, էջ 181:

² Տես Հ. Ա. Վարդանյան, Դասական հայերենը եւ Ակնայ գաւառաբարբառը, ՀԱ, 1912, ք. 10, էջ 634-637:

³ Տես Հ. Ա. Աւետիսյան, Die Sprache der armenischen Zigeuner, Finck Fr., ՀԱ, 1908, ք. 3, էջ 88:

⁴ Տես Մ. Մաքսուդյանց, Զօկերենի «ըման» շաղկապը, ՀԱ, 1909, ք. 9, էջ 273-274:

⁵ Տես Մ. Մաքսուդյանց, Ակնայ բարբառի փոխ առած բառերը օտար լեզուներից, ՀԱ, 1910, ք. 2, էջ 57-63:

⁶ Տես Հ. Աճառյան, Le parler arménien d'Akn, Maxudianz M., ՀԱ, 1912, ք. 4, էջ 248-253:

⁷ Տես Հ. Ա. Վարդանյան, Classification des Dialectes arméniens, Adjarian H., ՀԱ, 1909, ք. 10, էջ 314-315:

⁸ Տես Յ. Գազանճյան, Սահմանական ներկան հայ բարբառներու մէջ, ՀԱ, 1910, ք. 2, էջ 55-57:

«Հայ բարբառագիտություն» աշխատությունը որպես հայ բարբառների «հնարաւոր սահմաններու առաջին եւ ընդհանուր ոլորշումն»¹:

1912-13թթ. Ա. Վարդանյանի թարգմանությամբ² և գրախոսությամբ³ տպագրվում են Ֆր. ֆոն Կրեյլց-Գրայֆենհորստի ուսումնասիրությունները՝ լեհահայ գաղթականության թաքարախառն բարբառի, թրքախոս հայերի լեզվի, հայաստան թուրքերենի տառադարձության մասին:

1912թ. տպագրվում է Մ. Գաբրիելյանի «Հին դասական հայերենն եւ արդի գաւառաբարբառները» վերնագրով հոդվածը: Գրական լեզուն և բարբառներն, լատ հեղինակի, այդպիսով եւս կայտը են հարաբերակցվել բարբառային նյութն ընտրողաբար գրականացնելու միջոցով: Հոդվածում նաև քննված են մի քանի բառեր. մասնավորապես տնտեսման հետևանք է համարված մարի>մահ անցումը, սակայն սկզբնաձևի դասականության վերապահումով⁴: Բառի դասական լինելը հաստատում է Գ. Մենկիշյանը «Դիտողություն մը» հոդվածում⁵:

1915թ. «Տայոց աշխարհի Խոտորջրոյ գաւառաբարբառը» հոդվածում Մ. Հաճյանը բարբառի ուսումնասիրության բացը լրացնելու մտադրությամբ ներկայացնում է բարբառային բառաբաղի բացատրական ցանկ⁶:

Հանդեսի բարբառագիտական նյութը լրացվում է նաև թղթակցությամբ. երբեմն առանց ուսումնասիրության՝ խմբագրությանն էին հասցեագրվում բարբառների բառացանկեր⁷: Հանդեսի էջերում ծանուցվում կամ գրախոսությամբ քննվում են նաև բարբառային բառարանների հրատարակություններ⁸:

¹ Տե՛ս Հ. Վ. *Բունկոյցեան*, Էմինեան ազգագրական ժողովածու, Խո. Ը., Հայ բարբառագիտություն, Աճառեան Հ., ՀԱ, 1912, ք. 11, էջ 686-687:

² Տե՛ս Ֆր. ֆոն Գրեյլց-Գրայֆենհորստ, Հայ-թարսերերնը Լեհաստանի մէջ, ՀԱ, 1912, ք. 12, էջ 706-712:

³ Տե՛ս Հ. Ա. *Վարդանեան*, Studien zum Armenisch-Türkischen, *Kraclitz-Greifenhorst*, ՀԱ, 1913, ք. 3, էջ 183-185:

⁴ Տե՛ս Մ. Գաբրիելյան, Հին դասական հայերենն եւ արդի գաւառաբարբառները, ՀԱ, 1912, ք. 1, էջ 15-38:

⁵ Տե՛ս Հ. Գ. *Մենկիշեան*, Դիտողություն մը, ՀԱ, 1912, ք. 3, էջ 177-178:

⁶ Տե՛ս Հ. Մ. *Հաճեան*, Տայոց աշխարհի Խոտորջրոյ գաւառաբարբառը, ՀԱ, 1915, ք. 1-12, էջ 9-17:

⁷ Տե՛ս Ն. *Խոշեան*, Պոնտական գաւառաբարբառներն նշխարը, ՀԱ, 1895, ք. 6, էջ 183-186: Ա. *Վոյքեան*, Հաւաքածոյ Թրանսիլուանոյ հայոց գաւառական բառերուն, ՀԱ, 1897, ք. 6, էջ 186-187, 1898, ք. 2, էջ 46-51, ք. 4, էջ 105, *Սյծեանն*, Նմոյշ մը Արամօ զիւղին հայ լեզուն, ՀԱ, 1907, ք. 1, էջ 27:

⁸ Տե՛ս Հ. Թ. *Կեօկեան*, Արմատական բառերու բառարան, ՀԱ, 1901, ք. 10-11, էջ 347: Հ. *Աճառեան*, Բառագիրք Արարատեան բարբառի (մօտ 5000 բառ ու ոճ), Նաւասարդեանց Տ., ՀԱ, 1903, ք. 12, էջ 382-383, Հ. Ն. *Սկիինեան*, Հայերեն գաւառական

3.2. Միջին հայերենի ուսումնասիրություններ

1888-1890 թթ. տպագրվում է Ղ. Հովնանյանի քսանմեկ մասից բաղկացած հոդվածաշարը՝ «Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ» վերնագրով: Հեղինակն այդ աշխատությամբ միջին հայերենն ուսումնասիրելու առաջին ծավալուն փորձն է կատարել՝ ձգտելով բավարար տեղեկություն տալ միջին հայերենով ստեղծագործած կամ դրա տարրերը գրաբարին համատեղած մատենագիրների գործերի մասին և այդ ամբողջության մեջ երևան հանել հայերենի միջին շրջանի լեզվական հատկանիշները¹:

1900թ. Յ. Կարստի «Կիլիկյան հայերենի արտասանությունն ու ձայնավորները» դոկտորական ատենախոսության մասին ծանոթագրական հոդված է տպագրում Հ. Տաշյանը՝ հիմնականում ներկայացնելով հեղինակի ներածական տեսակետները հայոց լեզվի պատմության միջին շրջանի բնույթի վերաբերյալ²: Իսկ երբ ամբողջանում են Կարստի քերականական ուսումնասիրությունները «Կիլիկյան հայերենի պատմական քերականությունը» աշխատությամբ, Տաշյանը համառոտ ակնարկով ծանուցում է նաև դրա բովանդակությունը՝ հատկապես միջին հայերենի բարբառային հիմքի առնչությամբ³:

1903թ. թարգմանաբար տպագրվում է Յ. Կարստի «Հայերենի -եր, -նի, -ուի, -տի յոգնակերտները» հոդվածը: Հեղինակը նշված վերջավորությունները համարում է ստացվածքային փոխառություններ՝ ավանդված կովկասյան բնիկներից: Դրանց գրական մուտքը տեղի ունեցավ միջին հայերենի շրջանում, քանի որ ըստ Կարստի՝ գրաբարը, որի հիմնական հոգնակերտը հնդ. ծագման ք-ն էր, լինելով գործածական՝ կասեցնում էր ժողովրդական ձևերի գրականացումը⁴:

բառարան, Աճառեան Հ., ՀԱ, 1914, ք. 2, էջ 126-128, Հայոց բառ ու բան, Ամատունի Ս., ՀԱ, 1914, ք. 2, էջ 124-126:

¹ Տե՛ս Հ. Ղ. *Յովնանեան*, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ, ՀԱ, 1888, ք. 1, էջ 5-8, ք. 2, էջ 17-21, ք. 3, էջ 33-36, ք. 5, էջ 77-79, ք. 6, էջ 104-106, ք. 7, էջ 123-125, ք. 9, էջ 155-158, ք. 10, էջ 168-171, ք. 12, էջ 213-216, 1889, ք. 1, էջ 1-4, ք. 2, էջ 21-24, ք. 5, էջ 81-85, ք. 6, էջ 105-110, ք. 7, էջ 129-132, ք. 9, էջ 189-192, ք. 10, էջ 212-215, ք. 11, էջ 237-240, ք. 12, էջ 265-268, 1890, ք. 3, էջ 64-67, ք. 5, էջ 101-105, ք. 11, էջ 249-255:

² Տե՛ս Հ. Յ. *Տաշեան*, Կիլիկեան հայերէնը, ՀԱ, 1900, ք. 1, էջ 17-20:

³ Տե՛ս Հ. Յ. *Տաշեան*, Կիլիկեան հայերէնը, ՀԱ, 1901, ք. 1, էջ 12-16:

⁴ Տե՛ս Յ. *Կարստ*, Հայերենի -եր, -նի, -ուի, -տի յոգնակերտները, ՀԱ, 1903, ք. 1, էջ 10-14:

3.3. Լեզվաբանական նորակազմ տերմինները

Բարբառների հնչյունաբանական, բառագիտական և ձևաբանական ուսումնասիրություններում ձևավորվել է տերմինային հետևյալ միջավայրը:

ա. Առանձին բարբառներին նվիրված հոդվածներում գործածվել են այնպիսի տերմիններ, որոնք բնորոշում են որևէ բարբառի հնչյունական հատկանիշները: Դրանց հիմքում հիմնականում բովանդակային նորությունն է. գործածվում են նաև ձևային ինքնուրույնությամբ տերմիններ:

ա) Հնչյունի ձևային տարբերությամբ անվանումներ. *տառաձայն* (1899,10,291), *նշանաձայն* (1901,2,37) և այլն:

բ) Հնչյունների տեսակներ՝ ըստ արտաբերման հատկանիշների. *աղօտ բաղաձայններ* (1899,10,290), *անուշ ձայներ* (1899,10,294), *փքաձայն* (blählaut) (1899,10,293), *սաստկական հնչականք* (1899,10,291), *մրմնջաձայն* (1899,10,293), *բարդ, թաւ կամ թաւացած բաղաձայններ* (1901,2,36), *գորատոր, խիստ հազագային տառեր* (1901,2,40), *մեղմագոյն հազագային բաղաձայններ* (1901,2,40), *կոկորդային բացականք* (divergent) (1912,12,709), *հնչուն* (կակուղ), *հնչազուրկ* (խիստ) *բաղաձայններ* (1912,12,711) և այլն:

գ) Բաղաձայնների դասակարգման անվանումներ՝ ըստ արտաբերության տեղի. *գրերու անդամական բաժանում, գրերու արտասանական բաժանում, գրերու գործիական բաժանում* (1901,2,40) և այլն:

դ) Հնչյունական, արտասանական տարբերն ընդհանրացնող անվանումներ. *ձայնատիպ* (1899,10,292), *գաւառաբարբառի առոգանիշներ* (1899,10,290), *աղօտաձայնութիւն* (1899,10,292), *արտահնչում* (1899,10,291), *հնչականութիւն* (sonorité) (1899,10,290) և այլն:

ե) Հնչյունափոխությունը, բաղաձայնների տեղաշարժը նշող տերմիններ. *ձայնական կերպարանափոխութիւն* (1900,1,18), *ձայնանուաղութիւն* (1890,2,43), *բաղաձայններու շրջափոխութիւն* (1899,10,292) և այլն:

զ) Հնչյունների ֆիզիկական հատկությունների ուսումնասիրության անվանումներ. *հազագախօսութիւն, հազագաբանութիւն* (1899,10,289) և այլն:

է) Հնչյունի դիրքային անվանումներ. *սկզբնական տառ* (1901,7,217), *վանկամէջ* (1900,1,18) և այլն:

ը) Վանկի տեսակներ. *ձայնազուրկ վանկ* (1912,12,711), *լրովին վանկ* (1908,3,87) և այլն:

բ. Երբ ընդհանուր օրինաչափությունները բավարար չեն եղել բարբառի քերականական բազմազանությունը դասակարգելու համար, բարբառային նյութը խմբավորել, տեսակավորվել է ինքնուրույնաբար՝ հանգեցնելով նոր տերմինների գործածության: Զուգահեռաբար ձևային հակադրությունը շալունակել է մնալ նորակազմությունը տարբերակող հատկանիշ:

Բարբառների քերականական ուսումնասիրություններում բովանդակությամբ և ձևով նոր տերմիններն առավելապես խոսքի մասերի ընդհանուր և ներքին խմբավորման անվանումներ են. *անփոփոխ բառեր* (1903,11,335), *քեական եղանակ* (1901,7,214), *երկրայական* (potentiel) *եղանակ* (1902,12,395), *սաստկական բայեր* (1903,7,219), *ոճածե բայեր* (1903,7,219), *այլազան բայեր* (1903,7,220), *պատահական հոլովներ* (1902,7,220), *անհաստատ հոլովներ* (1902,7,220), *խսկական մակբայներ* (1903,11,336), *որպիսութիւնը ցուցնող մակբայներ* (1903,11,337), *խօսքի կերպը ցոյց տուող մակբայներ* (1903,11,337), *զարմացական մակբայներ* (1903,11,337) և այլն:

գ. Բարբառային բառերին անդրադարձ հիմնականում կատարվել է բառաքաղի միջոցով. տպագրվել են բառացանկեր՝ բարբառների բառապաշարը գրով կայունացնելու նպատակով: Այդ պատճառով նշված ուղղության հոլովածներում սակավ են նորակազմությունները և հիմնականում գործածվում են ձևով նոր տերմիններ:

ա) Նորակազմ, փոխառյալ բառեր. *նորընկալ տարր* (1909,8,252), *եկամոտ բառ* (1898,4,99), *նորանշան բառ* (1898,4,100), *նորածայնութիւն* (1908,6,185), *օտարածեութիւն* (1898,4,98) և այլն:

բ) Ձևով և իմաստով տարբերակված բառեր. *յարաբերական բառեր* (1902,6,177), *կրկնուած բառեր* (1902,1,19), *մերձածայն բառեր* (1908,10,316) և այլն:

դ. Այս խմբի հոլովածներում ևս ուսումնասիրությունները երբեմն կատարված են «համեմատական լեզուաքննութեան առաջնորդութեան տակ»¹, և կան տեսական հարցերի լեզվաբանական հայեցակետով ընդհանրացումներ՝ համապատասխան տերմինների կիրառությամբ, որոնցից նորակազմ են՝ *համեմատական լեզուախօսութիւն* (1887,2,23), *լեզուաց հոլովոյթ* (evolution) (1912,1,15), *հայրենի հայերէն (գրաբար)*, *մայրենի հայերէն (աշխարհաբար)* (1912,1,20):

ե. Լեզվի միջին շրջանի ուսումնասիրությամբ պայմանավորված՝ գործածվել են միջին հայերենի ընդհանուր և բարբառային տարրի հաշվառումով տեսակավորված անվանումներ:

ա) Միջին հայերենի վերանվանումներ. *ռամկալեզու* (1891,9,259), *ռամկազիր լեզու* (1888,3,35), *ռամկազիր, ռամկախօս գրութիւն* (1888,2,19), *ռամկաբարբառ գրութիւն* (1888,7,123), *հասարակօրէն լեզու* (1888,10,171), *խառնադարու հայերէն* (1903,8,226) և այլն:

¹ Յր. ֆոն Կրեյց-Գրայֆենհորստ, Հայ-թաթարերէնը Լեհաստանի մէջ, էջ 706:

բ) Բարբառային տարրի առկայության կամ բացակայության հիմքով նշվում են լեզվի ներփուլային՝ գլխական ու ժողովրդական ձևերի միախառնումով կամ անխառն տարբերակներ. *ռամկախառն լեզու* (1890,11,250), *ռամկախառն բարբառ* (1888,7,123) *ռամկախառն գրութիւն* (1888,2,19), *ռամկաձեւ* (1889,5,85), *զուտ ռամկօրէն* (1889,1,2), *ռամկախառն գրաբար* (1889,1,2), *զուտ գրաբար* (1888,2,19), *անխառն գրաբար* (1889,1,2), *ստորին լեզու* (1890,11,250) և այլն:

գ) Գործածվում են միջին հայերենի բառապաշարի գրաբարյան շերտը ներկայացնող բառերի անվանումներ. *հնակերպ բառեր* (1889,2,24), *գրաբարաձեւ բառեր* (1889,2, 24) և այլն:

Լեզվաբանական տերմինների կազմության եղանակները և կադապարները

Հանդեսի նոր տերմինների կազմության սկզբունքների նկարագրությամբ հնարավոր է պարզել դրանց առանձնահատկությունները: Սա օրինաչափ մոտեցում է, քանի որ բառային նորակազմություններն են բառապաշարի զարգացման տվյալ շրջանում գործող բառակազմական միջոցների ու եղանակների նախապատվության ցուցիչ¹:

Հաշվի առնելով, որ ածանցման դրսևորումները բաշխված են ածանցավոր, բարդ ածանցավոր ու բառակապակցական տերմիններում, և տարբերակված նկարագրությունը կմասնատեր այդ եղանակի տերմինակազմական դերը, այն ներկայացված է իրացումների ամբողջական հիմքով: Բաղադրյալ կազմությունները ուսումնասիրված են՝ ըստ համադրականության և վերլուծականության, բաղադրիչների՝ տերմինային, ձևաբանական, սեռատեսակային, լրացական հարաբերությունների ընդհանրացման, տիպերի ու ենթատիպերի տարանջատման միջոցով:

1. Պարզ տերմինների կազմության ուղիները

Հնչյունական նոր կազմով պարզ տերմիններ չեն կազմվում, արմատական բառեր չեն հորինվում, այլ եղածները զուգորդվում են, երբ նոր հասկացություն արտահայտելու պահանջ է լինում²: Նոր պարզ տերմիններ կարող են գոյանալ բաղադրյալ տերմինների փոխանվանական կրճատման հետևանքով, երբ տեսակային տերմինատարրը փոխանվանաբար կրում է սեռայինի իմաստը և համատեքստի շնորհիվ ինքնին արտահայտում կրճատված տերմինի ամբողջական նշանակությունը:

Ստոր (1898,5,133) - ԼԲ՝ ստորակետ, ստորին, ստորատ:

Սեպ (1887,10,145) - սեպագիր:

¹ Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990, էջ 129:

² Տե՛ս Լ. Ղազանյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, ԼՈՀ, 4, Երևան, 1977, էջ 275:

Բենե (1887,1,8) - բևեռագիր:

Կրճատման օրինակ են մաս ածանցավոր բառի անաժանց գործածությունները.

Վերջ. «լատիներեն *re վերջ*» (1890,5,152)- վերջավորություն:

Փոխ. «գառառական լեզուի մէջ խ/հ *փոխ* մը» (1907,6,182)- հնչյունական փոխանակություն:

Պարզ տերմինի կազմության ուղի է մաս իմաստային պատճենումը, եթե նկատի է առնվում օտար տերմինի արմատը.

Եզր. «բուն հայերէն *եզրներ* (termini), օր. սեռ, բայ, քերական, քերթող» (1913,12, 723):

Պարզ բառերը լեզվաբանական կիրառության դեպքում կարող են տերմինային նշանակություն ստանալ. բառերուն *ծայր* (1890,5,100), բուններուն *ծայր* (1890,5,101): Սակայն այդ կիրառությունների տերմինային նշանակությունն իրադրային է՝ հատուկ տվյալ շարադրանքին, կայունությամբ չի բնորոշվում, քանի որ գոյակից է բառային հատկանիշին. հնդեր. *խարխս* (1904,3,94)- հնդեվր. հիմք, արմատ:

2. Ածանցումը որպէս տերմինակազմության եղանակ

Վերջածանցներն ավելի կիրառելի են, քան մախածանցները, որոնք ոչ միայն քանակային տեսանկյունից են զիջում, այլև իմաստային. դրանք առավելապես բառակազմական նշանակություն ունեն¹, մինչդեռ վերջածանցները, բառակազմական լինելով, հաճախ մաս խոսքիմասային ցուցիչ են²: Ածանցները կարող են իմաստային արտահայտությամբ փոխարինել արմատական բաղադրիչներով նկարագրությամբ³: Ածանցման այդ հատկության շնորհիվ կանխվում է բազմանդամությունը, հետևաբար մաս տերմինի անբարեհմչությունն ու երկարաբանությունը: Դա է պատճառը, որ երկարմատ կազմությունների բաղադրիչների ընդլայնումը հիմնականում կատարվել է ածանցման միջոցով⁴:

¹ Տե՛ս մ. տ., էջ 285:

² Տե՛ս Ռ. Սլրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, ԼՈՂ, 4, Երևան, 1977, էջ 155:

³ Տե՛ս Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 325:

⁴ Ըստ վիճակագրության՝ 500 բառային նորաբանությունների 48 տոկոսը բարդ ածանցավոր է, տե՛ս Կ. Բաղդիշյան, Բառային նորաբանություններ, ՏԽՄՀ, 2, Երևան, 1987, էջ 137:

Ածանցումը նկարագրելիս նկատի են առնվել ինչպես տերմինակերտման, այնպես էլ բառակապակցական տերմինների կազմում ոչ տերմինների կերտման դեպքերը, քանի որ վերջիններս ևս մասնակցում են կապակցության տերմինային իմաստի արտահայտմանը:

Ածանցների տերմինակազմական առանձնահատկությունները ներկայացված են ըստ նախածանց, վերջածանց և իսմածանց¹ դիրքերի, դրանց կիրառելիության ու բաղադրելիության հաշվառմամբ, այսինքն՝ թե որ ածանցը տերմինակազմությանը որքանով է մասնակից և ինչ նախատիպերի է միանում՝ Նկատի չեն առնված պատրաստի կաղապարներով գործածված տերմինները, քանի որ դրանց ածանցումը չի բնութագրում հանդեսի տերմինակազմությունը. օր.՝ արմատին *ներկայացուցիչ* (1906,11,343):

2.1. Նախածանցավոր տերմիններ և տերմինատարեր

Նախածանցավոր նոր կազմությունները հանդեսում սակավաթիվ են և միօրինակ. կազմված են միայն *նախ* ածանցով. *նախաբաղաձայն* (1906,5,133), *նախաբուն* (1914,1,57), *նախսինամի* (1905,9,278), *նախարմատ* (1906,11,346), նաև՝ *նախաարմատ* (1906,2,57), *նախիմաստ* (1908,5,153), *նախաստառ* (1899,7,207), *նախաձայն* (1888,12,221), *նախածե* (1893,11,339):

Իսկ որպես տերմինատարների ձևային, նախածանցները հիմնականում մասնակցում են բառակապակցական տերմինների կազմությանը: Այս դեպքում ևս նկատելի են ածանցների սակավաթիվ իրացումներ. *ան- անանջատ* նախդիրներ (1887,11,163), *անհաստատ* հոլովներ (1902,7,220), *անվանկ* ձայնադր, բաղաձայն (1905,1,1), *նախ- նախաբուն* նախալեզու (1901,5-6,178), *նախակից* ձեռ (1891,2,44), *նախընթաց* արմատ (1896,8, 225), *համ- համացեղ* լեզուներ (1890,5,151), *համարմատ* բառեր (1911,12,759), *համարմատ* լեզուներ (1901,5-6,178), նաև *արտ- արտուղի* հնչումներ (1898,4,100), *տար- տարականոն* հոլովմունք (1899,5,148), *անգործարան* լեզուներ (1896,3,76) և այլն:

¹ Համածանցավոր տերմինը գործածել է Վ. Համբարձումյանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 160:

* Տեսական մասը ներկայացնելիս օգտվել ենք ժամանակակից բառակազմության ուսումնասիրություններից՝ հաշվի առնելով, որ բառակազմական օրինաչափությունները «զգալիորեն կայուն են» (*Ս. Աբրահամյան*, Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, ՊԲՀ, ք. 3, Երևան, 1981, էջ 32):

Որոշ դեպքերում բաղադրվելով բառերին՝ նախաձայնները դրսևորում են տերմինակազմական թույլ արժեք. *ամ- անյոր* բառեր (1895,12,359), *համ- համագգի* լեզուներ (1890,5,151), *համագգի* ծայնաորներ (1896,8,226), *նախ- նախագիտ* գրեր (1892,1,9) և այլն:

2.2. Վերջածանցավոր տերմիններ և տերմինատարբեր

Ինչպես նշվեց, վերջածանցները զուգահեռաբար նաև խոսքիմասային ցուցիչներ են, և քանի որ լեզվաբանական տերմինների գերակշռող մասը գոյականներ կամ գոյականաբար գործածված ածականներ են¹, իսկ բառակազմակերպության տերմիններում երկրորդական բաղադրիչները հատկանշային բնույթ ունեն, տերմինների կազմությանը մասնակցում են գլխավորապես գոյականակերտ և ածականակերտ վերջածանցները:

ա. **Գոյականակերտ վերջածանցում:** Հանդեսում գոյական տերմիններ են կազմվում *-ուրին*, *-ում*, *-իչ* վերջածանցներով: *-Ուրին* ածանցի միջոցով հիմնականում արտահայտվում է կա՛մ սեռային տերմինի, կա՛մ տեսակային տերմինի վերացականություն. այս դեպքում սեռ-տեսակ հարաբերությունը որոշչայինից փոխվում է հատկացուցչայինի: Այս և նշված մյուս ածանցների միջոցով տերմինային գործողությունն առարկայանում է. կազմվում են բախմուններ:

Ածանցների տերմինակազմական նկարագրությունն՝ ըստ դրանց կենսունակության նվազման:

-Ուրյուն ածանցի լայն գործածությունը լեզվի պատմության ընթացքում բնորոշվում է կայուն կենսունակությամբ²: Իսկ լեզվաբանական տերմինա-համակարգում այդ ածանցը հատկապես կիրառելի է, քանի որ լեզվաբանական տերմինների մեծ մասն արտահայտում է վերացական հասկացություններ³:

Հանդեսում *-ուրյուն* վերջածանցը տերմինակազմության ամենակենսունակ միջոցն է և իրացումների ընդհանուր քանակով գերազանցում է մյուս ածանցների կիրառություններին:

-Ուրին վերջածանցը առավելապես գործում է բարդ ածանցավոր կառույցներում. *գրավոիտրին* (1907,4,120), *արմատակրկնություն*, (1906,11,343), *այլակերպություն* (differenzierung) (1904,1,12), *կրկնաձեռակցություն* (1907,6,184),

¹ Տե՛ս Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 285:

² Տե՛ս Մ. Մուրադյան, Բառագիտություն, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 94:

³ Տե՛ս Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 286:

ձայնագրություն (1902,4, 113) և այլն: Չուտ ածանցավոր կառույցներում գործածվում է հազվադեպ. *օտարություն* (1891,12,359):

Բառակապակցական տերմիններում *-ութիւն* ածանցը կենսունակությամբ գրեթե հավասար է *-ական* ածանցին, որն այս տիպի կազմություններում ակտիվ դրսևորվում է, քանի որ հիմք-հասկացության որևէ հատկանիշ կամ հատկանիշներ հաճախ գործածական անկախություն են ձեռք բերում ոլաշչի կամ որոշիչների դերով: Իսկ *-ութիւն*-ն այս հարաբերության մեջ, ինչպես նշվեց, տեսակային տերմինատարին կարող է վերացականություն հաղորդել. լեզուի *կցողություն* (1897,5,154), լեզուաց *այլազանություն* (1900,1,12), բաղաձայնի *հնչականություն* (*sonorité*) (1899,10,290) և այլն կամ տեսակի որոշչային հարաբերությունն արտահայտել հղովված ձևով. *այլանմանութեան* օրենք (1915,1-12,152), *մմանութեան* օրենք (*analogie*) (1904,7,196), *նոյնութեան* դերանուն (1906,10,289) և այլն, ինչպես նաև կցվել սեռային տերմինատարերին. յարաբերական *ձայնաշրջություն* (1900,3,68), *ձայնական-գուգադրություն* (1896,11,322) և այլն:

-ություն ածանցի խոսքիմասային նշանակությամբ բաղադրություններն ընդհանրացված են AR1, NR1, VR1 կաղապարներում¹: Հանդեսում իրացման հաճախականությամբ ակտիվ են VR1, AR1 կաղապարները, և համեմատաբար պասսիվ NR1 կաղապարը:

VR1 կաղապարի կենսունակությանը նպաստող հանգամանք է *զրեղ*, նաև *փոխել*, *խօսել* բայերի հաճախ հանդիպող վերջնաբաղադրիչ դիրքը. *քանդակագրություն* (1898,5,137), *եզերագրություն* (1898,8-9,234), *մմանագրություն* (*par assimilation*) (1895,12,371), *տառատեղափոխություն* (1906,5,130), *ձայնական կերպարանափոխություն* (1900,1,18), *հնչական այլափոխություն* (1900,3,70), բառերու *ցեղափոխություն* (1908,6,183), *հազագախօսություն* (1899,10,289), *ամենախօսություն* (*pasilalie*) (1887,-12,187), համեմատական *լեզուախօսություն* (1887,2,23), *ձայնական բնախօսություն* (1904,1,10) և այլն, ինչպես նաև՝ *աւելորդադրություն* (1902,1,22), *ձայնաորակազմություն* (1905,2,40), *ձայնաբախություն* (*hyatus*) (1910,8,230), *միջամխություն* (1906,3,70), *տառաշրջություն* (1913,7,402), *անուանառություն* (1888,5,77) և այլն: Այս կազմություններում որպես նախատիպեր գործածված են բայական բառակապակցությունները, որ առավել բնորոշ են հանդեսի բայական հիմքով կաղապարի իրացումներին: Բացի նշված բարդ նախատիպերից նվազ հաճախականությամբ գործածվում են նաև ածանցավոր նախատի-

¹ A ածական, N գոյական, V բայ, R1 գոյականական ածանց: Պայմանական այս նշանները գործածված են ըստ Ս. Գալստյանի. տես Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 19, 33, 167: Նկատի է առնված նաև նշվ. աշխ. մեջ կիրառված դասակարգման օրինակը:

պեր. *բաղադրություն* (1888,12,221), *ընդգրություն* (1902,4,115), որոնց հիմքում
ևս բայական բառակապակցությունն է: Բայարմատ մախատիպը հանդի-
պում է մեկ օրինակի հազվադեպությամբ. բառի *խնայություն* (1887,12,188):

AR1 կաղապարի մախատիպերն են՝ ա) արմատական ածականը. *մմա-
նություն* (analogie) (1904,8,245), ընտրողական *խնամություն* (wahlverwandts-
chaft) (1904,1,10), բառի *կարծություն* (1887,12,188), բ) ածանցավոր ածակա-
նը, որին *-ություն* ածանցը բաղադրվելով՝ կազմում է նշված կաղապարի կրկ-
նաձանց տիպը. լեզուին *գործարանատրություն* (1896,8,229), *յեղականություն*
(version) (1896,10,293), *րեականություն* (1896,8,226-227) և այլն, գ) բարդ ա-
ծականը. *ձայնանուարություն* (1890,2,43), *մմաներանգություն* (սուլաւտ)
(1906,1,21), *ձեռնաշատություն* (1898,10-11,297) և այլն, դ) հազվադեպ՝ բարդ
ածանցավոր ածականը. *կնրկնավերջատրություն* (1905,10,318):

NR1 կաղապարը ևս, գործածական բաղադրիչների առկայությամբ պայ-
մանավորված, դրսևորում է ակտիվություն, գլխավորապես *գիտ, բան* վերջա-
դիր բաղադրիչների դեպքում. *արձանագիտություն* (1899, 1,16), *բեռնագի-
տություն* (1899,1,19), *կերպագիտություն* (1887,2,22), *նշանակագիտություն*
(1906,8,236), *հազագաբանություն* (1899,10,289), *յատկաբանություն* (1894,3,83) և
այլն: Նշված օրինակներում բաղադրության մախատիպը բարդ գոյականն է:

Մյուս վերջածանցները կենսունակությամբ զիջում են: Դրանք ներկա-
յացնող կաղապարների իրացումների քանակը փոքր է:

-Ում ածանցը գործում է VR1 կաղապարում. այն բայանուն կազմող ամե-
նակենսունակ միջոցներից է¹: Հանդեսում այդ կաղապարի մախատիպերը
դրվում են մահ կատարյալի հիմքով. *ձայնատրոնցում* *հատասարացում*
(1894,3,84), *ձայնատրի տկարացում* (1896,8,227), հնչյուններու *ստուարացում*
(1888,6,102), արմատի *թեթեւացում* (1899,8,232) և այլն: Իսկ այլ կիրառու-
թյուններում, ինչպես մախորդ ածանցի կաղապարների իրացումներին էր
հատուկ, սովորական է անորոշի հիմքը. *յետաշրջում* (1906,4,110), *ձայնաու-
րի աղարտում* (1896,8, 228), բաղաձայնի *թօթափում* (1890,5,100) և այլն:

Նախատիպերը կազմությամբ կարող են լինել պարզ, ածանցավոր ու
բարդ. *ձայնատրի կրճատում* (1894,2,49), տառից *յեղատրում* (1896,3,75),
բառաբաժանում (1898,5,135) և այլն:

-Իչ վերջածանցը, որ և՛ գոյականակերտ է, և՛ ածականակերտ է, հանդե-
սում տեղմինակազմությանը մասնակցում է նշված երկու գործառույթով:
Նախ գոյականակերտման մասին. կաղապարն է VR1: Այս կաղապարի հա-
մար որպես մախատիպեր դրվում են պատճառական բայերի գրաբարյան
հիմքերը. *ձայնական ծանուցիչ* (1896,10,292), *ձայնական ամբողջացուցիչ*

¹ Տե՛ս մ. տ., էջ 178:

(1898,8-9,228), որպես նախատիպ կարող է դրվել նաև ներգործական բայա-
հիմքը. նոյնութեան (identité) *նշանակիչ* (1898,12,378) և այլն:

բ. Ածականակերտ վերջածանցում: Հանդեսում տերմինակազմությանը
մասնակցում են *-ական*, *-ային*, *-առոր*, *-ացի*, *-եան*, *-գոյն*, *-իչ*, *-ող*, *-ոտի*,
-սլատիկ, *-ուկ*, *-ուն* և այլ ածականակերտ ածանցներ: Դրանք ածականա-
կերտ նշանակությամբ գերազանցապես գործածվում են բառակապակցա-
կան տերմիններում՝ տեսակավորելով ու կոնկրետացնելով գոյականով ար-
տահայտված հիմք-հասկացությունը: Ընդհանրապես, ածականակերտ ա-
ծանցների կախյալ գործածությունը օրինաչափ է, դրանցով կազմված տեր-
մինատարրերը առանձին կարող են գործածվել փոխանվանաբար՝ ստանա-
լով գոյականի արժեք¹:

Ածականական կազմությունների մեջ ամենից կիրառելին *-ական* վերջա-
ծանցով կերտված տերմիններն են. «սա փաստորեն, «ածական-տերմիննե-
րի» ամենաբնորոշ և տարածված մասնավոր կաղապարն է»²: Ինչպես *-ուր/ուն*-
ը, *-ական* վերջածանցը ևս կայուն ակտիվությամբ է գործածվել լեզվի տար-
բեր փուլերում³:

Այս ածանցը հատկապես գործում է NR2 և VR2 կաղապարներում⁴ (R2-
ածականական ածանց): Հանդեսին առավել բնորոշ է NR2 կաղապարը: Այս
կաղապարում նախատիպերը գոյականական են՝ պարզ, ածանցավոր և
բայալ կազմությամբ:

ա) Գործածական ակտիվություն ունեն պարզ գոյական նախատիպ ու-
նեցող տերմինները. *գիտական* բառ (1896,9,280), *կերպական* տարր
(1896,5,150), *ժայնական* ոչնչացում (1896,3,76), *մասնական* լեզուներ
(1897,7,213), *արմատական* գիր (1896,10,292), *բառական*-գիր (1897,5,154),
տառական օրենք (1890,5,101) և այլն: Փոխանվանական կայուն կիրառու-
թյուն ունի *գաւառական* տերմինը. լեզուի *գաւառականք* (1888,10,165), Հա-
յաստանի ժամանակակից *գաւառականներ* (1888,1,8), *գաւառականներու* գի-
տություն (1898,8-9,253) և այլն:

բ) Սակավ դրսևորում ունեն ածանցավոր և բայալ գոյական նախատիպ
ունեցող տերմինները. *փայրկենական* գրեր (1900,1,14), *գրչական* փոխառու-
թիւն (1899,1,17), *անհնչական* բաղաձայն (1893,1,16), լեզուաց *ազգաբանա-
կան* խնամություն (1897,3,69), լեզուաց *ցեղաբանական* դասակարգություն
(1896,2,47) և այլն:

Հանդեսում VR2 կաղապարը նախորդի համեմատ քիչ գործում է: Այն
հիմնականում ունի բայական բառակապակցություններով նախատիպեր.

¹ Տես ն. տ., էջ 290:

² Լ. Ղազանչյան. նշվ. աշխ., էջ 290-291:

³ Տես Մ. Մորադյան. նշվ. աշխ., էջ 93:

⁴ Մ. Գալստյան. նշվ. աշխ., էջ 65:

լեզուաց *ճիղագրական* ծառ (1897,3,69), *աեղադրական* գրեր (1896,3,76), լեզուաց *կերպախօսական* կազմութիւն (1896,6,166), *յարաբերական* բառեր (1902,6,177) և այլն: VR2-ը մի քանի օրինակի հազվադէպութեամբ ունի նաև բայարմատ նախատիպ. *շարժական* հնչիւն (1903,7,221), *շրջական* բաղաձայն (1897,7,214), նաև փոխանվանական կիրառութեամբ՝ *բառ* շրջականներ (1897,7,214):

Բայախիմքերով նախատիպի մեջ գործածվում են նաև ենթակայականի և հարակատարի ձևերը. արմատի *կցողկան* աստիճան (1897,3,76), տառերու *փակողական* (occlusif) յատկութիւն (1899,10,293), լեզուներու *յօրինուածական* խումբեր (1896,1,2), *յաւելուածական* մասնիկով լեզուներ (1896,3,76) և այլն:

Բայական նախատիպ ունեցող տերմինների հիմքակազմությունը միատիպ է. կազմվում են անդուշի հիմքից, բացառությամբ կատարյալի հիմքով կազմության մեկ օրինակի՝ *գարմացական* մակբայներ (1903,11,337):

AR2 կաղապարը քիչ գործում է. նախատիպերը հիմնականում ածանցավոր, նաև պարզ ածականներ են. *միջնական* բայ (medial) (1904,1,12), արմատի *սաստկական* (emphatique) հնչիւն (1899,10,291), *պարզական* արմատ (1899,7,203):

Հազվադէպ իրացումներով հանդիպում են նաև հատկանշային այլ խոսքի մասերով բաղադրված կազմություններ. *կրկնական* դերանուն (1906,10,289), *երկրորդական* բաղաձայններ (1887,2,21) և այլն:

-Իչ ածանցով կազմվում են ածականներ VR2 կաղապարում¹: Ինչպես գոյականական կազմության, այնպես էլ այս կաղապարի համար որպես նախատիպեր հիմնականում դրվում են պատճառական բայերի գոյաբայյան հիմքերը. *սաստկացուցիչ* արմատ (1896,10,292), արմատի *մսծուցիչ* աստիճան (1896,3,76), *գորացուցիչ* ձայն (1899,7,205) և այլն: Այս կաղապարում որպես նախատիպ կարող են գործածվել նաև անդուշի հիմքերը. *կազմիչ* տարր (1896,5,150), *օժանդակիչ* նախդիր (1887,11,163) և այլն:

-Ատր ածանցով տերմինային բաղադրիչները համեմատաբար քիչ են և բնորոշվում են միայն ածանցավոր հիմքի կազմությամբ. *անյօղատր* ձայներ (1896,3,76), *գործարանատր* լեզուներ (1896,3,76), *արդիւնատր* (produktiv) մասնիկ (1903,12,359), *արուեստատր* մատենագրական լեզու (1898,10-11,312) և այլն, նաև փոխանվանական կիրառությամբ. «...ինչու՞ միայն վրայ բառն է որ կը տուժէ, եւ միւս *յ-ատրներն* ազատ են իրենց *յ-ին* պահելու...» (1889,1,9):

-Եւան ածանցը հանդեսում գործուէ է NR2 կաղապարում, ընդ որում հիմնականում բարդ կազմությամբ նախատիպով. *եռարմատեան* բայեր

¹ Տե՛ս ն. տ., էջ 139:

(1896,10,292), *միարմատեան* անուն (1894,7,211), *շորեքկերպեան* յարմարագրութիւն (1888,5,75), *միջինմեարպեան* տառեր (1897,3,68), փոխանվանական կիրառութեամբ՝ *երեքդիմեան* (1898,12,378), *շորեքկետեան* (1898,5,138):

-*Ող* ածանցը դրվում է բայափոխքերի վրա. նախատիպը հիմնականում ներկայի հիմքն է. *հնչող* գրեք (1900,1,15), *արմատընդարձակող* ձեւ (1903,12,381), *ձայնաօրինակող* բառ (1908,8,246), *նմանանշանակող* բառեր (1907,8,251). հազվադեպ է կատարյալի հիմքը. *թանձրացնող* նշան (1889,1,9): Բայափոխքից են կազմվում նաև տերմինների -*ած* ածանցով բաղադրվածները. *խտնուած* բառ (1905, 8,253), *կրկնուած* բառեր (1902,1,19), *նորոգուած* բառ (neuerung) (1903,12, 381) և այլն:

-*Ուկ*, -*ուն*, -*ային*, -*ուտի*, -*ացի*, -*պատիկ* վերջածանցները հանդեսում տերմինակազմութեանը մասնակցում են մեկ-երկու օրինակով. VR2 - *նորելուկ* բառ (1895,12,359), AR2 - *դիւրուկ* խօսք (1887,9,135), VR2 - *դուրդողուն* տառեր (1894,1,28), *լեցուն* վանկ (1888,10,167), NR2 - *խաղողկային* (uvulaire) բաղաձայն (1907,3,92), AR2 - *օտարուտի* կազմակերպութիւն (1888,3,35), NR2 - *գաւառացի* լեզու (1888,7,121), թվական նախատիպով՝ *երեքպատիկ* հնչումն (1888,10,166) և այլն:

-*Գոյն* վերջածանցը քերականական-բառակազմական ածանց է¹: Հանդեսում այդ ածանցի գերադրական իմաստով տեսակավորվում են տերմիններ. *թանձրագոյն* հնչիւն (1888,12,210), *թուլագոյն* գիր (1888,12,210), *տկարագոյն* ձայնաւոր (1894,5,156), *խստագոյն* հնչում (1888,12,209), *աղօտագոյն* ձայնաւոր (1894,5,156) և այլն, կամ սաստկացվում է դրանց նշանակութիւնը. *հեռագոյն* փոփոխութիւն (1906,3,73), *յետնագոյն* ձեւ (1905,11,348) և այլն:

Հանդիպում են նաև անվանական տերմինի կամ տերմինատարի բայական գործածութեան օրինակներ. «...հայերէն լեզուն ունի եւ կամ մեծ յարմարութեամբ կարող է *բարդել* համապատասխան բառեր...» (1889,1,7), «*տողելով* կը գրէ» (1891,7,198), բառախմբեր *տողել* (1894,5,155), «Յ որ միածեւ է, յաճախ կը հանդիպի եւ բառի վերջ իբրեւ նեցուկ կը գործածուի *ի* ձայնատրէն ետեւ՝ սակայն առանց զայն *երկարելու*» (1887,11,163): Սակայն բայացման ծայրահեղացումը հանդեսում քննադատված է. «...մենք այժմէն կրնանք ուրախանալ, որ որչափ արմատ բառ ունինք, այնչափ ալ բայեր ալիտի կազմուին մեր լեզուին եւ այնուհետեւ ալիտի ըսենք *որդիկն*, *աղջկեն*, *գառնեն*, *ուլեն*, *հորքեր*»:

¹ Տե՛ս Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերէնում, Երևան, 1963, էջ 140-141:

² Հ. Յ. Թովսիկեան, Բառարան Ֆրանսերէն Հայ աշխարհիկ, Նուպարեան Մ., էջ 182:

2.3. Համաժանցավոր տերմիններ և տերմինատարեր

Ի տարբերություն միաժանց կազմությունների, նախաժանցները համեմատաբար ակտիվ զուգորդվում են այլ ածանցների հետ՝ առավելապես դրսևորվելով համաժանցավոր կազմություններում: Չուգահեռ ածանցի առկայությունը վերջաժանցումը ո՛չ սահմանափակում է, ո՛չ ակտիվացնում. վերջաժանցի գործածության սահմանը, ինչպես առանձին կիրառություններին, այնպես էլ այլ ածանցի հետ զուգորդման դեպքերում, որոշվում է տվյալ ածանցի կենսումնակությամբ:

Համաժանցավոր կաղապարները հանդեսում շատ են, քիչ են դրանց իրացումները: Դրանք ներկայացնում ենք՝ զուգորդման հիմք ընդունելով համեմատաբար կայուն հարաբերակցվող ածանցները:

ա. Բարդ համաժանցավոր տերմինների ածանցային հիմնական զուգորդումները:

Նախ-, տար-, համ-, փոխ-, բաղ-, ամենա- + -ութիւն = նախաճանաչութիւն (1904,10-11,335), *տարածայնութիւն* (dissimilation) (1894,1,29), *համաճայնութիւն* (assimilation) (1894,1, 29), «թոյլ- թուլոյ... ոյ/ու *փոխանաչութիւն*» (1906,3,69), *բաղադրութիւն* (1888,12,221), *ամենախօսութիւն* (1887,12,187) և այլն:

Համ-, փոխ-, արտ- + -ում = համաճայնում (assimilation) (1894,5,157), *փոխաբերում* (= փոխադրում, 1888,5,75), *արտահնչում* (1899,10,291) և այլն:

բ. Բառակապակցական տերմինների համաժանցավոր տերմինատարերի ածանցային հիմնական զուգորդումները:

Ան-, համ-, յար-, վեր-, նախ- + -ական = անփոփոխական ձայներ (1896,3,76), *անքերական* նախադասութիւն (1888,12,215), *անհնչական* տառ (1893,3,84), *համաշխարհական* լեզու (1896,1,2), *համադրական* վանկ (1903,3,67), *համաճայնական* (syntaxique) ձեւեր (1898,3,79), *յարաբերական* գրեր (1896,3,76), *յարաբերական* մասնիկ (1896,9,268), *վերակցական* դերանուն (1906,10,290), *նախհայկական* լեզու (1907,6,188) և այլն:

Նախ-, ան- + -աւոր = նախաւոր հնչիւն (1906,5,130), *նախաւոր* կազմութիւն (1906,9,283), *նախաւոր* նշանակութիւն (1906,5,132), *անյօդաւոր* ձայներ (1896,3,76), բաղաձայններուն *անձայնաւոր* շարք (1887,2,21) և այլն:

Համաժանցավոր տերմինների և տերմինատարերի հազվադեպ կաղապարներ. *ան- + -արան = անգործարան* լեզուներ (1896, 3,76), *չ + ող = չհնչող* գրեր (1900,1,15), *ներ + իկ = ներդարձիկ* տառ (1897,7,214) և այլն:

Նշված օրինակներում տերմինակազմական նոյությունը հիմնականում արտահայտված է նախաժանցման միջոցով. *հնչական* տառ- *անհնչական* տառ, *գրութիւն- բաղադրութիւն*: Նախաժանցման և վերջաժանցման միա-

ժամանակյա նորության դեպքում աննախաձեռն կամ անվերջաձեռն նախատիպերն առանձին չեն գործածվում, օր.՝ *(ան)գործարան* լեզուներ- *ան-գործ(արան)* լեզուներ, *ներդարձ(իկ) տառ-* (*ներ*)դարձիկ տառ: Տեքմիմակագմական նորությունը կարող է արտահայտվել վերջաձեռնգման միջոցով, եթե սեռային տերմինը գոյականական վերջաձեռնգմանից ածականականին անցնելու հետևանքով տեսականին կիրառություն է ստանում. *համաձայնութիւն - համաձայնական* ձեւեր:

2.4. Ածանցման գրաբարյան նախատիպ հիմքերն ու գործածության օրինակները

Ինչպես տերմինակազմության նկարագրության ընթացքում ցույց տրվեց, ՀԱ-ում պատճառական բայերի գրաբարյան հիմքերը՝ որպես ածանցման նախատիպեր, գործածական են. բայերու *սաստկացուցիչ* ձեւ (1896,10,292), արմատի *մածուցիչ* աստիճան (1896,3,76) և այլն: Բացի այս, մի շարք կազմություններում ևս ածանցման բաղադրյալ նախատիպերը գրաբարյան են. ՆՀԲ՝ *երագագիր-* ՀԱ՝ *երագագրական* նշան (1903,1,7), ՆՀԲ՝ *աւելադրեմ-* ՀԱ՝ *աւելադրական* գրեր (1896,3,76), ՆՀԲ՝ *վաղնջուց-* ՀԱ՝ *վաղնջական* այբուբեն (1896,3,75), ՆՀԲ՝ *յառաջագայիմ-* ՀԱ՝ ձեւերու *յառաջագայական* զարգացում (1896,8,229), «կաղապար ուղղակի յունական *յառաջագայութիւն* է» (1920,10,324), ՆՀԲ՝ *այլազան* - ՀԱ՝ լեզուաց *այլազանութիւն* (1900,1,12) և այլն:

ՀԱ-ում մահ տերմինների մի շարք ածանցավոր բաղադրիչներ կիրառության նախադեպեր ունեն գրաբարում. արմատին ձայնատրին *որպիսութիւն* (1896,10,293), հին բառից *անայլայլակ* պահպանութիւն (1894,1,27), գրաբար տարերաց եւ ձեռոց *ընդելուզումն* (1889,1,2), բառի *զանազանակ* (1908,6,185) և այլն:

Այս բաղադրիչները, դրսևորվելով բառակապակցական տերմինների կազմում, կա՛մ տեսակավորում ու կոնկրետացում են հիմնային հասկացությունը, կա՛մ տերմինային արժեք չդրսևորելով՝ որպես հատկանիշ կապվում են գլխավոր բաղադրիչին:

ա) Տեսակավորող, կոնկրետացնող բաղադրիչներ. *յետուստ* փոխառութիւն (1902,7,200), *մախազիտ* գլիւ (1892,1,9), *յետսագոյն* հայերէն (1905,11,348), *երեքպատիկ* ուղղազրութիւն (1888,12,210), *անդրագոյն* կազմութիւն (1903,12,359) և այլն:

բ) Հատկանշային բաղադրիչներ. *կռապարիշտ* հայոց տառեր (1893,3,88), (լեզուի) *ուռուցիկ* ոճ (1888,5,79), *տգիտական* կոճատ բարդութիւնը

(1888,11,185), *խոտորած* ձայնաւոր (1888,12,208), *խոտորնակ* արտասանութիւն (1888,7,121), *խառնակ* յարմարագրութիւն (1888,7,118) և այլն:

Բացի նշված գործածություններից՝ գրաբարյան նախադեպեր ունեցող բառերը հանդիպում են նաև որպէս հիմնային տերմինատարբեր, որոնց բառային իմաստը հաճախ զգալի է. քերականական *կազմակերպութիւն* (1888,2,8), հնչական *այլակոխութիւն* (1900,3,70), օտարոտի *այլակերպութիւն* (1888,7,118) և այլն:

Երբեմն գրաբարյան բաղադրիչները կապակցվում են իմաստային այլ հարաբերությամբ. համեմատական *լեզուախօսութիւն* (1887,2,23)- ՆՀԲ՝ «ձիրք կամ շնորիք խօսելոյ յայլեայլ բարբառս», *նորանշան* բառ (1898,4,100), *նորանշան* տառադարձութիւն (1888,12,209)- ՆՀԲ՝ «նորահիաշ, նորասքանչ, հրաշափառ, անուովոր և օտար, այլանդակ, ախտոր կամ զարմացուցիչ»:

3. Բառաբարդումը որպէս տերմինակազմության եղանակ

Բառաբարդումը ածանցման համեմատ տերմինակազմությանը մասնակցում է հնարավորությունների մասնակի իրացումով, բացառությամբ հատուկեմտ օրինակների՝ կրկնավոր, հարադիր, կցական տիպի տերմիններ չեն կազմվում¹: Բառաբարդման միջոցով ձևավորվում են առավելապես իսկական բարդություններ:

Իսկական բարդության բաղադրիչների ներքին հարաբերությանը տիպական է ստորադասությունը՝ լրացյալի վերջադաս դիրքով²: Հետևաբար վերջին բաղադրիչն արտահայտում է սեռային հասկացություն, իսկ առաջինը՝ տեսակային հատկանիշներ: Սակայն իսկական բարդության բաղադրիչների շարահյուսական կապն այնքան էլ հստակ չէ, և այդ անհստակությունը բաղադրիչների շարահյուսության տարբերկալման պատճառ է դառնում³:

¹ Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 276-277:

² Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 201:

³ Տե՛ս Ա. Սուրիաթյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 280-281, 283: Բարդ, բարդ ածանցավոր տերմինների տերմինատարբերի շարահյուսական կապի մթազնսծ կամ համապատասխան վերջավորություններով չդրսերոված քննելու պատճառով այդ կապի բացահայտումը լիարժեք չի լինի: Առանց շարահյուսական կապի հստակ հիմքի՝ թերի կլինի նաև տերմինատարբերի սեռատեսակային կապի հստակեցումը: Այդ պատճառով միայն մասնակի են քննված նման հարաբերությունները, դրանց ամբողջական վերլուծությունը կատարված է բառակապակցական տերմինների նկարագրության ժամանակ:

3.1. Բարդ տերմինները

Հայերենում բարդությունը կարող է ունենալ մինչև քառանդամ կազմություն¹, սակայն բնորոշը երկանդամությունն է, որ լինում է հոդակապավոր կամ անհոդակապ:

Ըստ արմատական տերմինատարրերի քանակի՝ հանդեսի բարդ մութակազմ տերմինները գեղագանցապես երկանդամ են, բացառությամբ ներքին բաղադրության լրիվ կազմը չզիտակցվող մի քանի տերմինների, օրինակ՝ *բարբառ*-ով բաղադրված ստուգաբանորեն եռանդամ կազմությունները. *ստորաբարբառ* (1912,10,602), *բարբառախումբ* (1890,2,42): Ըստ տերմինատարրերի միացման միջոցի՝ բարդ տերմինները հիմնականում հոդակապավոր են. *լեզուացել* (1897,5,155), *արմատավանկ* (1906,4,108), *միջնաձայն* (1896,3,77), *յաեղատառ* (1899,7,203) և այլն: Հոդակապը երբեմն փոխարինվում է գծիկով, ինչը հանգեցնում է զուգաձևության. *պատկեր-գրեր* (1897,5,154)- *պատկերագիր* (1898,8-9,229), *արմատ-ձեռ* (1912,12,710)-*արմատաձեռ* (1909,5,160): Անհոդակապ բարդությունները, Լ. Ղազանչյանի ուսումնասիրությամբ, կազմում են լեզվաբանական բարդ տերմինների 12%-ը²: Հանդեսում դրանք ավելի հազվադեպ են. *արմատոգիր* (1896,6,168), *վանկեզը* (1905,11,340), *բառառաջ* (1887,10,145) և այլն:

Արդյունավետ բառաբարդող խոսքի մասերն առանձնացնելու համար ելակետ է ընդունվում բառի բազմիմաստությունը՝ որպես շարահյուսական բազմազան կապակցելիության էական պայման, ըստ այդմ բառակազմական արդյունավետությամբ բնորոշվում են գոյականը, ածականն ու բայը³: Դրանց զուգորդումները երկանդամ կազմություններում կարող են ձևավորել հավանական 16 և հնարավոր 10 կադապար⁴:

Հանդեսում բարդ տերմինների ձևաբանական մասնակադապարներում ակտիվ է հատկապես գոյական + գոյական զուգորդումը, համեմատաբար քիչ են ածական + գոյական կազմով տերմինները, իսկ մյուս մասնակադապարները հազվադեպ են հանդիպում: Այս հարաբերություններն օրինաչափ են ընդհանրապես լեզվաբանական տերմինահամակարգում⁵:

Հանդեսում կիրառված բարդ տերմինների ձևաբանական մասնակադապարներն ըստ ակտիվության.

¹ Տե՛ս Ս. Գալստյան, Արդի հայերենի բաղադրությունների և նրանց բանաձևերի հարցի շուրջը, ԲԵՀ, 3, Երևան, 1972, էջ 117-119:

² Տե՛ս Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 279:

³ Տե՛ս Ռ. Մկրտչյան, Խոսքի մասերի բառաբարդման կադապարները ժամանակակից հայերենում, ԱՀԲՏ, Երևան, 1982, էջ 141-142:

⁴ Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 105-109:

⁵ Տե՛ս Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 280:

Գ+Գ- գաղափարանիշ (1899,1,16), նշանատառ (1904,1,9), նշանածեւ (1902,7,201), բանածեւ (1909,2,54), գրագանձ (1910,8,233) և այլն:

Ա+Գ- լիափանկ (1906,4,108), մանրագիր (1897,4,109), կարմրագիր (1891,8,228), կրկնագիր (1897,11,326) և այլն:

Ա+Բ- սխալագիր (1895,12,371), ուղղագիր (1893,3,90), խտտորնագիր (1893,3,90), նաև անվանակարգային բաղադրիչի հետ զուգորդված. *հայա-բարդ* (իմա՝ հայերենի լեզվական միջոցներով բարդված) (1887,10,145), *հայա-գիր* (իմա՝ հայերեն գրված) (1888,7,120), Գ+Կ- տողամէջ (1897,6,181), *փանկամէջ* (1900,1,18), Գ+Բ- իմաստնակերտ (1914,8,514), *արմատնդարձ* (1907,10,304), մեկ օրինակի հազվադէպությամբ՝ Գ+Ա- բառազատ (1888,11,186), Մ+Գ- շուտածեւ (1907,10,303), Բ+Գ- դուրդողատառ (1894,3,87) և այլն:

Բարդ տերմինների բաղադրիչները, ըստ տերմինային կամ բառային բնույթի, հիմնականում տարասեռ են. տերմինատարրերից մեկը տերմին է, մյուսը՝ ոչ տերմին, ընդ որում առավել գործածական է ոչ տերմին լրացում և տերմին լրացյալ հարաբերությունը (-S+S)*: Այդպիսի ստորադասությունը բացատրվում է՝ հիմք-հասկացության տերմին, և տեսակավորող, կոնկրետացնող բաղադրիչի ոչ տերմին լինելով: Ակտիվ է նաև տերմին տերմինատարրի ղյուքային փոփոխությամբ տերմին- ոչ տերմին բաղադրությունը:

-S+S *դեռագիր* (1914,1,36), *շումագիր* (1914,1,36), *գաւառալեզու* (1887,2,20), *ռամկալեզու* (1891,9,259), *փքածայն* (1899,10,293) և այլն:

+S-S *ձայնաօրէնք* (1907,8,249), *ձայնանիշ* (1910,2,47), *լեզուատարր* (1894,2,49), *արմատանուն* (1908,7,213), *բառապատկեր* (1897,11,324) և այլն:

Տերմինատարրերի բնույթի ընդհանրացումը պարզում է նաև կայուն այլ դրսևորումներ. տերմին - տերմին (+S+S) և ոչ տերմին - ոչ տերմին (-S-S), որոնք սակայն համեմատաբար քիչ տարածում ունեն:

+S+S *տառաձայն* (1899,10,291), *արմատաբառ* (1907,6,183), *ձայնատառ* (1894,8,245), *արմատափանկ* (1906,4,108) և այլն:

-S-S *գուգատիպ* (1912,7,425), *անջատանիշ* (1898,5,137), *համառոտանիշ* (1898,5,134), *պատուանուն* (1898,8-9,236), *սկզբնածեւ* (1905,5,150) և այլն:

Բարդ տերմիններին բնորոշ է նաև տերմինաբանական շարքեր կազմելը, միևնույն բաղադրիչով տարբեր բաղադրություններ կերտելը: Այդ շարքերի առանձնացումը ելակետային բաղադրիչի նշումով հնարավորություն է տալիս վերհանել բարդությունների միջուկային տերմինները¹: Դրանցից հատկապես արդյունարար են հետևյալ տերմինատարրերը.

* Կադապարներում տերմինի առկայությունը պայմանականորեն նշված է S+, իսկ ոչ տերմինինը՝ S-:

¹ Միջուկային տերմին բառակապակցությունը գործածել է Լ. Ղազանչյանը, տե՛ս ն. տ., էջ 319:

Գիր - *քրմագիր* (1892,1,7-8), *ժողովրդագիր* (1892,1,7-8), *կտաւագիր* (1892, 2,55), *խորհրդագիր* (1892,1,7), *եզերագիր* (1898,8-9,238) և այլն:

Տառ - *տառածեւ* (1897,6,179), *բեւեռատառ* (1887,4,52), *տառակոյտ* (1891,3,70), *տառանկար* (1894,10,320), *տառասիր* (1897,4,109) և այլն:

Չայն- *մրմնջածայն* (1899,10,293), *ձայնանիշ* (1887,4,52), *ձայնատիպ* (1899,10,292), *ձայնագիր* (1899,10,289) և այլն:

Քառ - *քառամէջք* (1887,6,81), *քառառաջք* (1887,10,145), *սկզբնաքառ* (1887,6,81), *քառանջատ* (1910,10,313) և այլն:

3.2. Բարդ ածանցավոր տերմինները

Բարդ ածանցավոր տերմինների կազմությանը մասնակցում են միանգամից երկու բառակազմական միջոց՝ ածանցում և բառաբարդում: Ածանցման, դրանով կերտված կառույցների նկարագրությամբ ցույց տրվեց ածանցների ակտիվության հարաբերակցությունը, հաջորդիվ կներկայացվի բարդ ածանցավոր կազմությունները հատկանշող կիրառությունների ամփոփ պատկերը:

Բարդ ածանցավոր կառույցները, լինելով համադրական, առավելապես բաղադրվում են *-ութիւն* վերջածանցով. *արմատափոխութիւն* (1906,11,343), *քառագեղծութիւն* (1901,11-12,350), *քարքառաքննություն* (1914,2,127) և այլն: Այլ ածանցներ հազվադեպ են կիրառվում. *ծեսացուցիչ* (formans) (1906,2,56), *լեզուայիշատակ* (1907,6,182) և այլն: Ընդ որում որոշ ածանցներ հաճախ ուղղակիորեն չեն մասնակցում տերմինակազմությանը, այլ նախապես բաղադրված լինելով, որպէս պատրաստի կառույց, ներմուծվում են տերմինի կազմ, ինչպէս օրինակ՝ *ձայնաւոր* բաղադրիչի *աւոր* ածանցը *արմատաւոր* (1903,12,381), *միջնաձայնաւոր* (1914,8, 514) և նման այլ օրինակներում:

Բարդ ածանցավոր կազմություններում *-ութիւն* վերջածանցը շատ անգամ կիրառվում է բայանվանակերտ նշանակությամբ, ինչը պայմանավորում է ձևաբանական կաղապարներում գոյական + բայ գույությունն ակտիվությունը. *տառագրութիւն* (1889,2,26), *բեւեռաքննութիւն* (1887,2,21), *սաստկակրկնութիւն* (1907, 8,251) և այլն:

Ակտիվ է նաև Ա+Գ գույությունը. *քաջահնչութիւն* (1900,3,70), *հնաճեսութիւն* (archaïsme) (1902,6,169), *օտարաճեւութիւն* (1898,4,98) և այլն:

Գ+Գ մասնակաղապարի իրացմանը նպաստում է *գիր* հիմնաբաղադրիչի առկայությունը և *գիր-գրութիւն* սովորական ածանցումը. *վիմագրութիւն* (1893,3,88), *կնքագրութիւն* (1898,8-9,236), *դերձանագրութիւն* (1914,1,40), *նուիրագրութիւն* (1914,1,26) և այլն:

Բարդ ածանցավոր տերմինների կազմությանը երբեմն մասնակցում է մաս քվականը. Թ+Գ - *երեքդիմեաններ* (1898,12,378), *չորեքկէտեան* (1898,5,138), բնդ որում եթե առաջին օրինակում կա սեռը բնութաշոյ տերմինատարի կրճատում, ապա երկրորդ օրինակի փոխանվանական կիրառությունը կայունացել է, և դրա սեռ- տեսակ հարաբերությունը բարդության մեջ է:

Բարդ ածանցավոր տերմինային մասնակադապարհներում հատկապես գործում է ոչ տերմին- ոչ տերմին (-S-S) գուգուրումը. *այլակերտություն* (1907,1,16), *ծեսկցություն* (1908,1,25), *ներքնակազմություն* (1914,8,512), *մերձիմաստություն* (1908,2,35) և այլն: Նվազ ակտիվ են +S-S, -S+S մասնակադապարհները. *տառայաւելում* (1907,3,91), *տառազանություն* (1912,5,288), *նորածայնություն* (1908,6,185), *արտահնչում* (1899,10,291) և այլն, իսկ +S+S բաղադրությունը հազվադեպ է. *տառազարություն* (1889,2,26):

Բացի վերը նշված *գիր* հիմնային բաղադրիչից՝ բարդ ածանցավոր տերմինների շարքեր են կազմվում մաս *ժայն*, *նշան* տերմինատարների բաղադրությամբ.

Չայն- աղօտածայնություն (1899,10,292), *խառնածայնություն* (1888, 7,119), *տարածայնություն* (dissimilation) (1894,1,29) և այլն:

Նշան- բառանշան (1910,2,47), *քառանշան* (1910,2,52), *հնչանշան* (1913,12, 729), *ժայնանշան* (1910,2,47) և այլն:

3.3. Բարդ-բաղադրյալ տերմինները¹

Տերմինների բաղադրիչները, ինչպես ցույց տրվեց, հիմնականում ստորադաս հարաբերության մեջ են. սա համարվում է օրինաչափ դասավորություն: Սակավաքիվ են համադաս բաղադրիչներով կազմությունները: Դրանք բարդ-բաղադրյալ անվանումով առանձնացվում են մյուսներից, քանի որ բառերից ունեն ձևային տարբերություն. վերլուծական են, բառակապակցություններից՝ իմաստային տարբերություն. բաղադրիչները համադաս լինելով՝ պատկանում են միևնույն խոսքի մասին՝ գոյականին²: Այսպիսի բաղադրություններ հանդեսին բնորոշ չեն և հազվադեպ են հանդիպում. *բեռնագիրներ-նշաններ* (1899,1,16):

Հանդեսում բառակապակցական տերմինը կարող է ունենալ բարդ-բաղադրյալ կազմությամբ երկրորդական բաղադրիչ: Այս դեպքում բաղադրիչը չունի գործածական ինքնույույնություն, և խոսքիմասային մույնությունն ար-

¹ *Բարդ-բաղադրյալ տերմին* բառակապակցությունը գործածել է Լ. Ղազանչյանը, տես ն. տ., էջ 298:

² Տես Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 298-299:

տահայտվում է ամականով. *գարտողի-տարականոն* հոլովմունք (1899,5,148). *վերջադիր-կցող* լեզուներ (1897,5, 154), *գաւառական-ռամկական* բառեր (1898,4,99) և այլն:

4. Բառակապակցական տերմինները

Հանդեսում լեզվաբանական հասկացությունների վերլուծական կազմությունները¹ բառակապակցական տերմինները, բանականապես գերազանցում են մյուս կազմություններին: Այս կառույցի ակտիվ կիրառումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ այս կառույցին խիստ բնորոշ է համակարգայնության հատկանիշը, քանի որ դրա մի բաղադրիչը սովորաբար ընդհանուր է, իսկ մյուսը բնութագրում է հասկացության տարբերակող հատկանիշները: Այս կառույցը մասնորակազմության գործուն միջոց է, քանի որ տեսակային տերմինատարր կցելու միջոցով հաճախ վերաբաղադրվում են արդեն իսկ գործածական հիմնային տերմինները և կազմվում են նոր տերմիններ: Դրանց բաղադրյալ լինելը հնարավորություն է տալիս մասնկարագրել բախո հասկացություններ¹: Նշված հատկանիշներն առավելապես բնորոշ են երկանդամ բառակապակցական տերմիններին, որոնք կազմում են բոլոր տերմինների կեսից ավելին²: Եռանդամ և հատկապես բազմանդամ տերմինները մվազ կիրառելի են, քանի որ դրանց բաղադրիչների մեծ թիվը հակասում է տերմինի գործնականությանը:

4.1. Երկանդամ բառակապակցական տերմինները

Երկանդամները հանդեսում հաճախ են կիրառվում՝ կազմելով բառակապակցական տերմինների և ընդհանրապես հանդեսի ողջ լեզվաբանական մորակազմ տերմինների գերակշիռ մասը:

Բառակապակցական տերմինների կազմում տերմինատարրերը սեռատեսակային հարաբերության մեջ են: Սեռը բնորոշող տերմինատարրի լայն իմաստը կոնկրետանում է ստորադաս տեսակային բաղադրիչի միջոցով, արւյունքում առաջանում են լրացական հարաբերություններ՝ որոշիչ + որո-

¹ Տես մ. տ., էջ 302-303:

² Տես մ. տ.: Հ. *Ձաքարյան*, Մասնագիտական տերմինաբանության ստեղծման և յուրացման հասարակական պայմանները, ՏԽՄՀ, ք. 3, Երևան, 1988, էջ 101-102:

շյալ, հատկացուցիչ + հատկացյալ, գործողության օբյեկտ + գործողություն և այլ ստորադասություններ¹:

Բառակապակցական տերմիններում սեռ և տեսակ բնորոշող տերմինատարրերը կարող են արտահայտված լինել տերմինով և ոչ տերմինով: Դասակարգման երակետ ենք ընդունել սեռային հասկացության տերմինով կամ ոչ տերմինով արտահայտված լինելը, այնուհետև ըստ տեսակային տերմինատարրերի տերմին կամ ոչ տերմին լինելու՝ առանձնացրել ենք մասնակադասարանները: Սեռատեսակային նկարագրությամբ, քանի որ ճշտվում է տերմինատարրերի բնույթը, հնարավորություն է լինում պարզել նաև տերմինաբանական կադասարանների ներսում բաղադրիչների կենսունակությունը, այսինքն՝ սահմանել, թե տերմինն ու ոչ տերմինը ինչպիսի հարաբերակցությամբ են առավել գործում: Այս եղանակով հնարավոր է կատարել նաև ձևաբանական կադասարանում, քանի որ սեռը բնորոշող տերմինատարրն արտահայտված է գոյականով, իսկ տեսակը՝ հիմնականում ածականով ու գոյականով*: Տեսակային տերմինատարրերի խոսքիմասային երկակիությունը հստակեցված է համապատասխան նշումներով (A- ածական, N- գոյական):

Երկանդամ բառակապակցական տերմինների մասնակադասարաններն՝ ըստ կենսունակության նվազման.

(A) տ(-) S(+)* *աղօտ բաղաձայններ* (1899,10,290), *բեռնազարդ տառ* (1887,1,9), *բեռնաման գիր* (1892,1,8), *երկրորդական բաղաձայններ* (1887,2,21), *թանձր վերջավորություն* (1889,1,9), *անուշ ձայն* (1899,10,294), *կարծր բաղաձայն* (1896,7,215), *մակարոյծ տառեր* (parasitische laute) (1894,5,157), *բարդ բաղաձայններ* (1901,2,36), *լսիրժ տառ* (1890,5,100), *խնամի լեզուներ* (1897,3,69), *խստագոյն բաղաձայն* (1888,12,209) և այլն:

(N) տ(+) S(-) *արմատի-աստիճան* (1896,3,76), *արմատի թեթևացում* (1899,8,232), *վերջավանկի օրենք* (auslautgesetz) (1903,7,193), *բաղաձայնի քթափում* (1890,5,100), *լեզուի գիտակցություն* (sprachbewusstsein) (1895,9,261), *հնչյանց այլայություն* (1889,3,37), *հնչյան ընդարձակում* (1900,3,69), *հնչյուններու տեղափոխություն* (1894,5,157), *բառերու ցեղափոխություն* (1908,6,183), *բառի կերպարանափոխություն* (1903,12,362) և այլն:

(A) տ(+) S(-) *ձայնական-գուգադրություն* (1896,11,322), *ձայնական կերպարանափոխություն* (1900,1,18), *ձայնական ոչնչացում* (1896,3,76), *տառական փոփոխություն* (1900,3,69), *հնչական գուգադիրներ* (coefficientes sonanti-

¹ Ռ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 101-113:

* Կան նաև այլ խոսքի մասերով կադասարաններ (օրինակ՝ քվական + գոյական = երկորդ ապառնի), որոնք, սակայն, հանդեսի նորակազմ տերմիններին հաստով չեն:

* Մեծատառով նշված է սեռային հասկացությունը բնորոշող տերմինատարրը, փոքրատառով՝ տեսակայինը:

ques) (1907,3,92), *ձայնական յեղյեղմունք* (1909,11,333), *ձայնական յօրինութիւն* (système phonétique) (1910,8,231), *ձայնաորական դրութիւն* (vocaltheorie) (1910,5,143) և այլն:

(A) տ(-) S(-) *մեղմ շուն* (1888,12,221), *վերադիր փուշ* (1910,6,173), *յեւնագոյն ձեւ* (1905,11,348), *ժողովրդական տեղափոխութիւն* (1905, 10,318), *սլատկերածեւ նշան* (1892,1,8), *նախակից ձեւ* (formes proclitiques) (1891,2,44), *ստորին ռամկականութիւն* (1890,3,67), *օգնական ձեւ* (1898,10-11,327), *աղոնչական մասնիկ* (1896,9,268), *ազգաբանական ծառ* (1897,3, 69), *կերպական տարր* (1896,5,150) և այլն:

(N) տ(+) S(+) *արմատոյ-բառ* (1905,11,340), *արմատ լեզու* (1907, 10,306), *տառագիր սեպագրութիւն* (1887,4,52), *տառագիր այբուբեն* (1894,8,244), *ռամկաբարբառ գրութիւն* (1888,7,123), *բաղաձայնագիր այբուբեն* (1894,8,245) և այլն:

(N) տ(-) S(-) *այլանմանութեան օրենք* (1915,1-12,152), *համառոտութեան նշան* (1895,2,34), *արտասանութեան պէսպիսութիւնք* (variétés) (1888,9,153), *քոյր ձեւեր* (1899,8,235) և այլն:

Երբեմն հատկանշային որոշ դերբայներ ևս գործածվում են որպէս տեսակային տերմինատարբեր, ինչպէս օրինակ՝ *արգելող բացասութիւն* (1908,8,247), *ընդարձակող ձեւ* (1907,3,89), *նուաղած վանկ* (1906,11,341), *այլայլած ձեւ* (1887,4,53) և այլն:

Բառակապակցական տերմինների որոշչային և հատկացուցչային շարահյուսական հարաբերությունները ևս նշված մասնակադապարներում հիմնականում արտահայտված են: Ա - ածական նշումով մասնակադապարները արտահայտում են որոշիչ - որոշյալ, իսկ N - գոյական նշումով մասնակադապարները՝ հիմնականում հատկացուցիչ - հատկացյալ շարահյուսական հարաբերություններ, քանի որ հանդեսի բառակապակցական տերմինակազմության մասնակից այդ երկու խոսքի մասերից ածականը՝ լրացական հարաբերության մեջ որպէս երկրորդական բաղադրիչ, որոշիչ է,¹ և չի կարող ինքնին, առանց փոխանվանաբար գործածվելու հատկացուցիչ լինել, իսկ գոյականը նույն հարաբերության մեջ հիմնականում արտահայտում է հատկացուցչի իմաստ, բացառությամբ այն սակավաթիվ դեպքերի, երբ գործածվում է որպէս որոշիչ:

¹ Տերմինաբանական գրականության մեջ որոշչային հարաբերության կենսունակությունը պայմանավորվում է ածականների բառակազմական ճկունությամբ, տես К. Левковская, Именное словообразование в современной немецкой общественно-политической терминологии и примыкающей к ней лексике, Москва, 1960, стр. 145-155:

4.2. Եռանդամ և բազմանդամ բառակապակցական տերմինները

Եռանդամ տերմինների սեռային հասկացության տեսակային սահմանափակումը ևս կատարվում է որոշչական և հատկացական հարաբերությամբ: Բառակապակցական տերմինների կազմում լրացումների բնույթի և ներքին կապակցման միջոցների տարբերությամբ կարելի է առանձնացնել բաղադրիչների հարաբերության մի քանի տիպեր:

ա) Կախյալ բաղադրիչները գլխավորի հետ կապակցվում են հատկացական և որոշչային հարաբերությամբ՝ ձևավորելով գոյական + ածական + գոյական մասնակադասարար: Սա ամենագործուն կառույցն է. *բառի ընկերական նշանակություն* (1911,12,757), *գոյականներու յայտարար նշան* (1903,12,360), *գրերու անդամական բաժանում* (1901,2,40), *լեզուացեղերու նախնական տիպար* (սրտypս) (1901,5-6,179), *բառի հոգեկան նշանակություն* (1892,9,279) և այլն:

բ) Ածական + գոյական + գոյական մասնակադասարարը ձևավորվում է, երբ կախյալ բաղադրիչները միմյանց կապակցվում են որոշչական, իսկ գլխավորի հետ՝ հատկացական հարաբերությամբ. *գոտ տառերու գիր* (1914,1,34), *համր բաղաձայններու անհետացում* (1889,3,38), *լեզուական հնչմանց փոխանակություն* (1900,1,16), *հնդեվրոպատոհմ նախամօր սերունդներ* (1892,1,5), *միջին ժամանակաց լեզու* (1887,9,138) և այլն:

գ) Ածական + ածական + գոյական մասնակադասարարում գործում են միայն որոշչական հարաբերություններ՝ լրացական հետևյալ տարբերություններով. 1) որոշիչ բաղադրիչները, միմյանց հետ ունենալով համադաս հարաբերություն, ինքնուրույնաբար լրացնում են որոշչային. *սոսկ-աղօտ բաղաձայններ* (1899,10,291), *նոյնաձայն ալլաձե բաղաձայններ* (1887,4,52), *ազգակից խնամի լեզուներ* (1897,3,69) և այլն, 2) առաջնային որոշիչ բաղադրիչն անմիջականորեն կապակցված է գլխավորին, իսկ մյուս բաղադրիչը լրացնում է որոշիչ-որոշյալ կապակցությանը. *միջին ատամնական գիր* (1900,1,13), *գորատուր հազագային տառեր* (1901,2,40), *մեղմագոյն հազագային բաղաձայններ* (1901,2,40), *կէս-հոլովական լեզուներ* (1896,11,322) և այլն:

Հազվադեպ են դերբայի մասնակցությամբ մասնակադասարաները, որոնք կապվում են գլխավորին՝ մյուս կախյալ բաղադրիչի հետ լինելով կա՛մ համադաս, կա՛մ ստորադաս հարաբերության մեջ. *վերջադիր-կցող լեզուներ* (1897,5,154), *միջին-հնդդ-ժայն* (1897,7,212), *բացառական շինող նախդիր* (1887,6,81), *աղերս ցուցընող մասնիկներ* (1896,5,150), *ածանցներ ձևացընող մասնիկներ* (1888,1,7) և այլն:

Ի տարբերություն երկանդամների, որոնցում տերմինի վերջադիր դիրքը սովորական է, եռանդամ կառույցներում տերմինն առավելապես նախադաս

է. քանի որ տերմինի տեսակային կոնկրետացումը հիմնականում տեղի է ունենում հատկացական հարաբերությամբ: Ըստ այդմ գործուն է տերմին + ոչ տերմին + ոչ տերմին մասնակաղապարը. *գրեթե գործիական բաժանում* (1901,2,40), *ձայնադրաց յետախաղաց ներդաշնակություն* (1906,4,108), *արմատի հոլովական աստիճան* (1897,3,76), *լեզուներու յօրինաւածական խումբեր* (1896,1,2), *բառերու մասնական առումներ* (1899,5,145) և այլն: Ոչ տերմին + ոչ տերմին + ոչ տերմին մասնակաղապարի իրացումները հազվադեպ են. *ծեւերու յառաջագայական զարգացում* (1896,8,229), *ուժի տնտեսութեան օրէնք* (1912,1,17):

Որոշչային հարաբերությամբ մասնակաղապարներում առկա է հետևյալ հիմնական զուգոյքումը. ոչ տերմին + ոչ տերմին և վերջադիր սեռային բնութաւորումով տերմին. *նախարիական հայկական լեզու* (1907,6,188), *կամխագոյն ռամկական գրութիւն* (1888,7,125), *ազգաբանօրէն մերձաւոր լեզուներ* (1897,3,69) և այլն:

Հանդեսում չորս և ավելի անդամ ունեցող բառակապակցական տերմինները քանակով քիչ են. գործածությամբ՝ եզակի, քանի որ հատուկ են տվյալ համատեքստին որպէս դրա հասկացական, հաճախ մաւ ռճական անբաժանելի միավորներ: Այդ կառույցներին բնորոշ են տերմինային և ձևաբանական ներքին հագեցած հարաբերություններ, որոնք, հաճախ ունենալով մեկանգամյա իրացումներ, չեն կայունանում որևէ ընդհանրական կաղապարի ներքո: Միայն դրսևորման որոշ կայունություն է նկատվում տերմինատարների հարաբերություններում՝ տերմին բաղադրիչի դիրքով պայմանավորված: Ըստ այդմ տարբերակվում են տերմինային և բառային ներքին կապակցությունների հետևյալ հիմնական տիպերը:

ա) Սեռային բնութաւորում ունեցող նախադաս տերմին՝ ոչ տերմին բաղադրիչների հարաբերությամբ. *բառերու որդեգրական-ազգակցութեան քննութիւն* (1907,3,95), *ձայնադրութեան ներքին փոխանակութեան օրէնք* (1903,4,107), *տառերու կազմութեան բնախօսական քննութիւն* (1900,1,14), *տառից բնիկ հնչմանց վարդապետութիւն* (1888,6,102), *բայերու ալլազան բաղադրեալ ձեւափոխութիւններ* (1899,2,47) և այլն:

բ) Սեռային բնութաւորում ունեցող վերջադաս տերմին՝ կախյալ բաղադրիչների տերմին և ոչ տերմին կազմով. *միջին լեզուական-ատամնական թաղիր* (1900,1,13), *նախնական-քամեան-սեմական լեզու* (1896,2,46), *խօսքի կերպը ցոյց տուող մակբայներ* (1903,11,337), *գաւառացի հնաւանդ բնիկ ազգային ասութիւններ* (1887,9,134), *նախորդին սխալ խմաստը փոխանակող (substituer) բառ* (1895,12,360), *միահետքուն գրաբար նախադասութիւններ* (1888,10,171) և այլն:

Բազմանդամ բառակապակցական տերմիններին հատուկ է նկատագրականությունը, որին հաճախ մասնակցում են համագործածական անդամներ: Բառային բաղադրիչների կիրառման հետևանքով տերմինակազմ մուտք են

գործել այնպիսի խոսքի մասեր, որոնք նախորդ կառույցներում կա՛մ եզակի էին, կա՛մ չէին գործածվում. *խրաբու ազգակից խնամի մերձաոր լեզուները ներկայացրնող ձեեր* (1897,3,69), *առանց քերականական կազմութեան լեզուներ* (1896,3,76), *յաւերուածական մասնիկ ունեցող լեզուներ* (1896,3,76) և այլն, անդամների փոխկապակցման ծավալով պայմանավորված՝ կիրառվում են նաև նախորդ կառույցներում չհանդիպող հոլովածներ. *պարզ հնչումներէ կազմուած ձայնականութիւն* (1898, 5,145), *մէկ անգամէն հնչուող երկրորդական ձայն* (1900,1,13), *ժողովրդական յատակագծով լեզուի կազմութիւն* (1889,1,7) և այլն:

4.3. Բառակապակցական տերմինների շարքերը

Բառակապակցական տերմինները, քանի որ առաջանում են սեռային հասկացության սահմանափակման միջոցով, գրեթե միշտ ունեն հիմնային անդամով զույգեր կամ շարքեր: Ակտիվ կապակցելիությամբ հիմնային անդամների առանձնացումն, ինչպես արդեն նշվել է, օգնում է պարզել, թե հիմնականում և հատկապես ո՞ր միջուկային տերմինների տեսակավորմամբ են գոյացել հանդեսի լեզվաբանական տերմինահամակարգի բաղադրյալ տերմինները:

Բառակապակցական տերմինների բազմանդամ շարքեր են կազմվում հիմնականում հետևյալ միջուկային տերմինների բաղադրությամբ:

Լեզու- վերջադիր լեզուներ (1896,5,150), *հնդեւրոպատոհմ լեզուներ* (1890,5,151), *արմենական լեզու* (1911,12,752), *գրաբարածե լեզու* (1887,9,134), *հայաբուն լեզու* (1889,3,47) և այլն:

Քառ- կրկնակազմ քառ (1906,1,20), *գրաբարածե քառ* (1889,2,24), *եռարմատեան քառ* (1896,10,292), *այլածայն քառ* (1887,6,82), *մերձաոր քառեր* (1900,3,68) և այլն:

Այբուբեն- վաղմբական այբուբեն (1896,3,73), *նախ-մետրոպեան այբուբեն* (1889,5,86), *քաղածայն այբուբեն* (1891,3,70), *քաղածայնատառ այբուբեն* (1894,8,245), *քեւեռածե այբուբեն* (1887,1,9) և այլն:

Գիր- անցման գիր (1897,4,110), *աւելադրական գիր* (1896,3,76), *կռապաշտական գիր* (1892,2,55), *քառակուսի գիր* (1914,1,36), *նախագիտ գիր* (1892,1,9) և այլն:

Տառ- սկզբնական տառ (1901,7,217), *քեւեռածե տառ* (1887,4,52), *եռածե տառ* (1887,4,52), *ձայնատոյսնիշ տառ* (1894,8,245), *քմածայն տառ* (1887,6,81) և այլն:

Ձայն- միջնորդ ձայն (1900,1,16), *անվթար ձայն* (1887,6,81), *յարաքերական ձայն* (1896,3,76), *սկզբնագիր ձայն* (1889, 3,47), *նշանակալից ձայն* (1896,3,77) և այլն:

Հնչյուն- հնչակից հնչյուններ (1900,1,15), *վանկասկզբան հնչյուն* (1894,5,157), *յտառքնքաց հնչյուն* (1906,1,20), *արմատավերջ հնչյուն* (1908,7,213), *լիստե հնչյուն* (1905,1,2), *միջամուխ հնչյուն* (1914,8,514) և այլն:

Ճայնատոր- տկարագոյն ձայնատոր (1894,5,156), *նուրբ ձայնատոր* (1896,11,322), *աղօտագոյն ձայնատոր* (1894,5,156), *համազգի ձայնատորներ* (1896,8,226), *լեզուածայր ձայնատոր* (1905,11,345) և այլն:

Քաղածայն- նախնական քաղածայն (1887,2,21), *թաւ քաղածայն* (1901,2,36), *միածայն քաղածայն* (1887,4,52), *միածեւ քաղածայն* (1887,4,52), *հնչագործ քաղածայն* (1912,12,711) և այլն:

4.4. Ներքին փոխառությունները բառակապակցական տերմիններում

Արդեն նշվել է, որ ՀԱ-ում բառակապակցական տերմինների մի շարք ածանցավոր բաղադրիչներ կիրառության նախադեպեր ունեն գրաբարում: Բառակապակցական տերմիններում գործածվում են նաև գրաբարյան անածանց, հիմնականում բարդ բառեր: Դրանք բացառապես երկրորդական բաղադրիչներ են, ընդ որում հաճախ հատկանշային գործածությամբ: Դրանով պայմանավորված այդ բաղադրիչներն ունեն ոչ կայուն գործածություն. *նորագիտ* լեզու (1887, 12,188), *բազմադիմի* հոլովումներ (1887,12,187), *այլազան* հնչմունք (1888,9,149), *ինքնագործ* տառադարձություն (1889,3,40), *ինքնաստեղծ* բարդեր (1889,1,2), *ինքնակաց* արմատներ (1896,3,76) և այլն: Հատկանշային կիրառությունն ընգծվում է, երբ գրաբար բառերի միջոցով շարադրանքին հաղորդվում է պատկերավորություն. *ցայնվայր* գրութեան ոճ (1888,7,120), օտար բառից *շեղջակոյտ* (1890,5,104), լեզուի *գողտր մասունք* (1887,9,134) և այլն:

Հազվադեպ բառակապակցական տերմինները բաղադրվում են նաև պարզ բառերի միջոցով. *կոկ* լեզու (1891,8,230), *լալիք* տառ (1890, 5,100): Վերջին բաղադրիչը տերմինային գործածություն ունի և նշում է հիմնային հասկացության տեսակը: Կան նաև տեսակավորող այլ բաղադրիչներ, որոնք սակայն հիմնական չեն և ունեն հումանիշ տարբերակներ. օտար *ցեղի* բառ (1895,8,229), *եկամուտ* բառեր (1898,4,99), *առընթերակից* բառեր (1914,11,646), *նորընկալ* տարբ (1909,8,252) և այլն:

Հանդիսանում տերմինների բաղադրիչները երբեմն նաև բառաբարդվում են գրաբարյան բաղադրող հիմքերով. *յետսամուտ* բառ (1898,10-11,325)- *յետս* - ա - մուտ, *յետսադիր* յօդ (1898,10-11,296)- *յետս* - ա - դիր, *յետնամուտ* յառեւում բառ (1893,8, 254)- *յետին* - ա - մուտ և այլն:

Տերմինագործածությունը հանդեսում

1. Տերմինի պատճառաբանվածությունը

Պատճառաբանվածությունը տերմինը համագործածական բառից տարբերող հատկանիշ է և կիրառվում է նորակազմության ընթացքում, երբ նոր հասկացությունն արտահայտելու համար ընտրվում է համապատասխան ներքին ձև: Հասկացության անհրաժեշտ և բավարար հատկանիշների արտացոլումը պայմանավորում է պատճառաբանվածության բարձր աստիճանը¹, որ կենսունակությամբ օժտելով տերմինին՝ ապահովում է դրա հետագա գործածությունը և այդպիսով նպաստում, որ ոլորտարկվի լեզվի կանոնարկման հեռանկարայնությունը և զարգացման կանխատեսելիությունը²:

Հանդեսում շարադրված են պատճառաբանվածության իրացման կարևորագույն պայմանները՝ արտահայտված ինչպես ընդհանուր, այնպես էլ որևէ օրինակի առնչությամբ արված դիտողություններում: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ կետերում:

ա. Նոր տերմին ստեղծելիս բառի ներքին ձևի և հասկացության համապատասխանեցում ընդհանուր և էական հատկանիշի հիմքով³. «Եթե ուզենք այսօր նոր բառ մը հնարել եւ անուանել իր մը, կը քննենք այս իրին քանի մը յատկութիւններն եւ այս յատկութիւններէն մէկ հատը, որ կրնայ պայծառ կերպով մեր աչքին առջեւ բերել ամբողջը, կ'առնունք իբր հիմ եւ այս հիման վրայ կը հաստատենք մեր գաղափարը, միշտ ուշադրութիւն ընելով, որ նոր կազմուած գաղափարակսն բառը ճշիւի համապատասխանէ իւր առարկային»⁴:

¹ Լ. Ղազանչյան, Տերմինների պատճառաբանվածությունը գիտության լեզվում և տերմինաբանական համակարգերում, ԼՈՀ, ք. 8, Երևան, 1984, էջ 218-19:

² Տեն Ս. Աբրահամյան, Հայոց լեզվի կանոնարկման համակարգի և ելակետային սկզբունքների մասին, ՏԽՍՀ, ք. 3, Երևան, 1988, էջ 17: Ա. Սարգսյան, Խոսքի մշակույթի և տերմինաբանության արդի վիճակն ու զարգացման հեռանկարները, ՏԽՍՀ, ք. 2, Երևան, 1987, էջ 13, 23-24:

³ Տեն Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 240:

⁴ Հ. Գ. Մենելիշեան, Արդի լեզուագիտությունը, 1900, ք. 3, էջ 71:

բ. Պատճառաբանվածության իրացման նպատակը հասկացության հնարավորինս ճշգրիտ արտահայտումն է¹. «Լեզուի մը ճշուրթեան եւ կատարելութեան էական, մա մանաւանդ գլխաւոր պահանջմունքն է, որ սմէն բառի նշանակութիւնը ճիշդ եւ որոշ ըլլայ»²:

գ. Պատճառաբանվածության ապառնումը գիտակցված միջամտության հետեանք է, հակառակ դեպքում՝ տուժում է իմաստի արտահայտման որոշակիւթյունը. «Ամէն նորութիւն ինքնին իւր հետն անորոշութիւն եւ տարտամութիւն կը բերէ, երբ հիմնեալ չէ կանխաւ խորհրդածեալ եւ հաստատուն սկզբանց վրայ, չունի որոշ յատկագիծ. իսկ այս անորոշութիւնն առիթ ու պատճառ կու տայ անմիջականութեան, մա թէ խառնակութեան...»³:

դ. Նոր բառ ստեղծելիս կարևոր է լեզվական նյութի համակողմանի իմացոյթունը, որպէսզի բաղադրիչները ընտրոյթունը համապատասխանի հասկացոյթան էական հատկանիշներին. «Բարդութիւն ընդդէմ՝ պէտք է քաջ գիտնալ զրաբար եւ միանգամայն աշխարհաբար լեզուն, որպէս զի անոնց համաձայն յօրինէ բառ մը, ապա թէ ոչ դրսերեւոյթ, ներսերեւոյթ, գրեյակերպ, ընդդիմաբանեյակերպ եւն. եւն. բառերուն մման անյարիւր եւ անհեթեթ բարութիւններ մէջտեղ կ'ըլլեն»⁴:

ե. Բառիմաստի և տերմինացվող հասկացոյթան էական հատկանիշները միջև պետք է լինի համապատասխանութան եզր⁵. այդ սկզբունքով է կատարված տերմինակազմութան հետևյալ օրինակի հիմնավորումը. «Այս տառերուն շատ անյարմար անուն մըն ալ կու տան lingual «լեզուային»: Ամէնէն ճիշդն է անգղ. *inverted*. որուն վրայէն կազմեցինք շրջական, եւ կրնանք թերեւս ներդարծիկ ալ անուանակոչել: Այս տառերն... կ'արտաբերուին լեզուին ծայրը դէպ ի քիչ մը վեր դարձընելով եւ ծռելով...»⁶:

զ. Տերմինի պատճառաբանվածութիւնն անտեսող հանգամանք է մակարկազմութան մէջ սխալ կողմնորոշող արմատները գործածումը⁷. «մեքենամիտ բառը, որ՝ եթէ. բան մը նշանակէ՝ կըրնար *intrigant* բառին դիմացը

¹ Տեւ Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 219:

² Հ. Գ. Մենելիշեան, Հայերէն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը, էջ 40:

³ Հ. Ղ. Յովնանեան, Հետազօտութիւնք մախնեաց ոսմկօրէնին վրայ, 1888, ք. 3, էջ 33:

⁴ Հ. Թ. Կետիկեան, Բառաստեղծութիւն, թէ բառազեղծութիւն, 1901, ք. 10-11, էջ 350:

⁵ Տեւ Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 241:

⁶ Հ. Գ. Մենելիշեան, Արդի լեզուագիտութիւնը, 1897, ք. 7, էջ 214:

⁷ Սխալ կողմնորոշող տերմինների ժամանակակից ուղղումների և ուղղորդումների մասին տեւս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 10-11, 63-64, Էդ. Աղայան, Տերմինաբանութան մի քանի խնդիրների մասին, ԼՀԳ, ք. 1, Երևան, 1971, էջ 89-96, Լ. Ղազանչյան, Տերմինաբանութան մի քանի հարցեր, ԲԵՀ, ք. 3, Երևան, 1971, էջ 231-232:

դյուիլ՝ եւ ոչ թէ mecanicien, այսինքն՝ արուեստատու մը, որ իւր արուեստին մեքենական մասին տեղեակ է. եւ մեքենամիտ բառն երբեք նոյն իմաստը չի տար»¹ և այլն:

Այս տեսակետները հաստատում են, որ հանդեսում պատճառաբանված տերմինակազմության սկզբունքը գիտակցված է: Սակայն գործնականում այն թերի է իրացված: Հանդեսում գործածվում են սխալ կոլմնորոշող՝ տերմինատարրերի բառային իմաստի և դրանց ընդհանուր իմաստի անհամապատասխանությամբ տերմիններ: Այդպիսիք կարելի է համարել հետևյալները.

Գիտնական բառ (1892,6,180)- *գիտնական* և *գիտական* բառերի իմաստային շփոթը 1898 թ. հանդեսում՝ Հ. Տեր - Աբրահամյանի հայերեն-ռուսերեն բառարանի գրախոսականում, քննադատում է Ն. Ադունցը. «բառգիրքը չի ուղղում գիտական = научный, եւ գիտնական = ученый զանազանութիւնը»²: Այնչ այդ՝ 1896 թ., գործածված է տարբերակված կիրառության օրինակ. *գիտական բառ* (1896,9,280):

Филологическое Обозрение. Журнал Классической Филологии и Педагогике - *Լեզուարանական տեսութիւն. Հանդէս դասական լեզուագիտութեան եւ մանկավարժութեան* (1894,2,33)- *Ֆիլիոլոգիա* բառը թարգմանված է երկտարբերակ. *լեզվաբանություն* և *լեզվագիտություն*: Այդպիսի չտարբերակված կիրառության օրինակներ են նաև նույն խնդրին նվիրված հոդվածների ենթավերնագրերը՝ *լեզուաբանական*. ««Գինի»-ի ծագման խնդիրը» (1899,3,83)- *լեզուագիտական*. «Հայերէնի «գինի» եւ Բաբելաստանի նուիրական ծառը» (1896,9,267): Հոմանշային նշված զույգի փոխարինելիությունն այժմ մերժված է այն հիմնավորմամբ, որ *լեզվագիտությունը* լեզվի իմացությունն է, և հետևաբար անհամատեղելի է *լեզվաբանություն* հասկացությանը³:

Ատամնավերջ բուն (1890,5,100)- առաջին բաղադրիչը *ատամնական վերջին բաղաձայնի* կարճ տարբերակն է, սակայն կրճատված է սեռը բնորոշող տերմինատարրը՝ անդուշ դարձնելով բաղադրիչների ընդհանուր իմաստը:

Սկզբնաբառ (1887,6,81)- բառասկիզբ. տեսակային տերմինատարրը նախադաս դիրքում կատարում է իմաստային այն գործառույթը, որ սովորաբար վերջադաս դիրքին է հատուկ:

Կան նաև տերմիններ, որ գործածվել են իմաստային ավելորդ կոնկրետացումով: Ընդ որում սա ընդհանուր հատկանիշ է՝ հատուկ գրեթե բոլոր ո-

¹ Հ. Յ. Թովսիկեան, Բառարան Ֆրանսերէն Հայ աշխարհիկ, Նուպարեան Մ., էջ 181:

² Ն. Ադունց, Նոր բառգիրք հայերէն գրաբարէ՝ աշխարհաբար լեզուի, Տէր Աբրահամեան Յ., էջ 326:

³ Տե՛ս Լ. Ղազանչյան, նշվ. աշխ., էջ 231:

ճերին¹։ Այդ հատկանիշների կցումով տերմինը արհեստականորեն տեսակավորվում է. *նախադաս նախադրություններ* (1903,11,337), *գրական գրություն լեզու* (1900,1,17), *ընդհանուր նախալեզու* (1897,3,70), *միութական գրութիւն* (1889,3,39), նաև՝ *անկերպարան երկրի մի գրութիւն* (1888,7,120), որ կազմված է հոմանիշ *կերպարանք* ու *դեմք* բաղադրիչներից, որոնք, միևնույն հատկանիշը ժխտելով ու հաստատելով, տեսակավորում են տերմինը։

2. Ձևաիմաստային խմբերը լեզվաբանական տերմինահամակարգում

Ձևաիմաստային տարբերակները հանդեսում դրսևորված են հատկապես հոմանշությամբ, կան նաև բազմիմաստության օրինակներ, հաճախ են հանդիպում միայն ձևային տարբերակներ՝ ուղղագրական, կառուցվածքային զուգաձևություններ, կից մրցակցությամբ և փակագծում օտար համարժեքով թարգմանական տերմինների գործածություններ։ Բացառությամբ վերջինի, որը կարելի է գիտական հետադասականությանը վերագրել, զուգահեռ ձևերի գոյությունը բացատրվում է լեզվի փոփոխության օրինաչափ պահանջով. «Լեզվի ամեն մի փոփոխություն նախապես ենթադրում է զուգահեռ ձևերի ժամանակավոր համագոյակցություն»², և մասնավորապես, տերմինաբանության ձևավորման վաղ փուլի յուրահատկությամբ, երբ զուգաձևությունները նոր են, և դեռ չի հաստատվել նրանցից մեկի կենսունակությունը, և երբ միակենտրոն չէ տերմինագործածության արտաքին կարգավորումը³։

2.1. Տերմինային հոմանշություն

Լեզվաբանական ժամանակակից գրականության մեջ տերմինային հոմանշությունը մերժվում է, քանի որ տարաձևությունը տերմինին զրկում է կայուն իմաստից⁴։ Հոմանշությունը մերժելի է, բայց ընդհանուր և կոնկրետ դիտարկումների դեպքում համապատասխանաբար և՛ մշտական է, և՛ ժամա-

¹ Գ. Վահանյան, Բառագործածության ոճական սխալներ, ՏԽՄՀ, ք. 2, Երևան, 1987, էջ 88։

² Թ. Ղարաբյուրյան, Խոսքի մշակույթի մի քանի հարցեր, ՏԽՄՀ, ք. 1, Երևան, 1976, էջ 46։

³ Տես Մ. Кутина, Формирование терминологии физики в России, Москва, 1966, стр. 254. Формирование языка русской науки, Москва, 1964, стр. 203.

⁴ Տես Լ. Ղազանյան, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն, էջ 227-228։

նակավոր: Մշտական է՝ պայմանավորված անընդհատ փոխառությունների և դրանց ազգային համարժեքների ստեղծման զուգահեռամբ, ժամանակավոր է, եթե նկատի են առնվում փոխառություններին ազգային համարժեքներով հակազդելու, և դրանց մրցակցությամբ հիմնական տերմինի առանձնացման կոնկրետ դեպքերը¹:

Կառուցվածքային հատկանիշով հակադրված տերմինները համարվում են համանշտության մի դրսևորում, ելք զուգադրված են տերմինի լրիվ և կրճատված տարբերակները: Այս դեպքում զուգադրվածությունները հանձնարարելի են, քանի որ նույն տերմինի պարբարաբար կրկնությունը ծանրացնում է շարադրանքը²:

ա. Տերմինների համանշտության աղբյուրները: Հանդեսում համանշտության երկու հիմնական աղբյուր կա (օտար տառադարձված տերմինի և հայերեն համարժեքի գործածությամբ համանշտությունը հազվադեպ է. տերմին (1898,10-11,326)- *գիտական բառ* (1896,9,280), *փոլափիւք* (1887,12,187)- *աշխարհալեզու* (1887,12,187)):

ա) Զանի որ չի գործում արտաքին կարգավորում, նոր հասկացությունն արտահայտվում է զուգահեռ ձևերով՝ առաջացած բառակազմական միջոցների կիրառմամբ՝ 1) բառաբարդման³ հետևանքով. *լեզուաց խումբ* (1892,7,215)- *լեզուախումբ* (1897,5,155), *բառական-գիր* (1897,5,154)- *բառագիր* (1892,1,9), *լեզուական կազմութիւն* (1892,6,182)- *լեզուակազմութիւն* (1898,3,78) և այլն, 2) ամանցման հետևանքով. *երկձայն* (1896,8,231)- *երկձայնաւոր* (1898,5,137), *յոգնակերտ* (1899, 1,13)- *յոքնականակերտ* (1896,6,168), *տարտանիշ* (1898,5,138)- *աւարտանշան* (1898, 5,134) և այլն:

բ) Նույն պատճառով տերմինները վերանվանվում են⁴, ստեղծվում են հոմանիշ տարբերակներ, որոնք ունեն հետևյալ առանձնահատկությունները.

¹ Տե՛ս Ա. Սուրիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 196: Հայերեն տերմինները և նրանց հոմանշտության հարցերը, ԲԵՀ, ք. 3, Երևան, 1969, էջ 109:

² Տե՛ս Ա. Սուրիասյան,

³ Բառաբարդման միջոցով կազմված զուգահեռ ձևերը Գ. Սևակը դասում է տերմինների «սակարգապահ» գործածությունների շարքում (տե՛ս Հանում տերմինաբանական կարգապահության, ՏԽՄՀ, ք. 1, Երևան, 1976, էջ 10):

⁴ Այս միտումը բնորոշ է վաղ ու արդի տերմինակազմությանը: Հմմտ. Գ. Մենկիշյան. «Ինչո՞ւ՝ արդեօք մերմինները կը խորշին, կը քաշուին գործածել այլոց մեզի աւանդածն, ըլլան հնաւանդ, ըլլան սովորութեամբ հաստատեալ նորերոյկ բառեր: Ինչո՞ւ՝ իւրաքանչիւր որ անձին իշխանութեամբ կը ժտի, իւր բոլորտիքն կ'արականածե բոլորեալ սահմանը ցատկել անցնի, իսպառելով լեզուի մը թէ՛ բառական եւ թէ՛ համաձայնական համբարուց մթերքն...» (Աշխարհաբար լեզուին արդի վիճակը, էջ 359): Ա. Աբրահամյան. «Նոր բառեր կազմելիս ու գործածելիս ո՞մանք երբեմն (քյորիմս-ցարար կամ զուցե և նորի բոռն ձգտումով) շրջանառության մեջ են դնում (կամ ցան-

1) ստեղծվել են տերմինների տարանուն գործածությամբ. *ծայնաբախտություն* (hyatus) (1910,8,230)- *ծայնադրաց հանդիպում* (hiatus) (1894,5,156), *նուիրագրություն* (1914,1,26)- *մեհենագրություն* (1914,1,26)- *պատկերագրություն* (1892,1,7), *գրի տեղափոխություն* (metathese) (1905,2,38)- *տառափոխություն* (metathesis) (1894,5,157) և այլն, 2) ստեղծվել են համագործածական բառի կամ բաղադրյալի տերմինային գործածությամբ¹. «...կը սխալիմ՝ եթե իմ տառերովս նոյն հնչյունքն հաւատարմաբար *անդրադարձրենմ* հայերէն...» (1888,5,74)- «...բարձր դասական գրչաւ յունածեւ կամ լատինածեւ ուզած են *փոխաբերել* հայ անուններն...» (1888,5,75)- «Բեւեռագիրը եւրոպական տառերով *փոխագրելով*...» (1899,1,19), *հայասերմ* լեզու (1889,3,47)- *հայաբուն* լեզու (1889,3,47) և այլն:

բ. Հոմանիշ տերմինների դասակարգումը: Իմաստային մույնության ու մերձավորության հաշվառմամբ՝ հոմանիշ տերմինները դասակարգվում են համապատասխանաբար մույնանիշների և համանիշների: Նույնանիշների զգալի մասը տերմիններ են ու տերմինաբանական բառեր²: Այս հատկացումը պայմանավորված է դրանց իմաստային մույնությամբ և տերմինի մենիմաստ բնույթով: Սա նկատի ունենալով՝ Լ. Ղազանչյանը առաջարկում է տերմինային հոմանշության փոխարեն գործածել տերմինային մույնանշություն³:

Դասակարգման ընթացքում տերմինները համարված են մույնանիշ, եթե իմաստային ճշգրտությունը պահպանված է, և փոխադարձ փոխարինելի են, դրանով էլ պայմանավորված՝ հաճախ հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ կամ հոդվածում, որը ցույց կտրվի հետագա շարադրանքի ընթացքում, և համանիշ, եթե տերմինների իմաստային կապին մասնակցում են բառային հատկանիշներ: Այսինքն՝ մույնանշությունը տերմինային հոմանշության բուն արտահայտությունն է, քանի որ մենիմաստության հատկանիշ ունեցող տերմինները կարող են միայն մույնանիշ հարաբերության մեջ լինել, իսկ համանշությունը տերմինին ոչ բնորոշ հարաբերություն է՝ դրսևորվող բառային հատկանիշների առկայության դեպքում:

կանոն են դնել) այնպիսի կազմություններ, որոնց դիմաց լեզվի մեջ շատ վաղուց ընդունված ու սովորական դարձած բառեր կան» (Մի քանի դիտողություններ ժամանակակից հայերենի բառային նորարարությունների վերաբերյալ, ԼՀԳ, ք. 12, Երևան, 1970, էջ 42): Տե՛ս նաև Գ. Սևակ, նշվ. աշխ., էջ 8, Բ. Շալունց, նշվ. աշխ., էջ 174-175:

¹ Ա. Մուրվալյանը բառերի մասնագիտացումը համարում է բառիմաստի նեղացման դրսևորում և այդ դրսևորման մեջ բառիմաստի նեղացումն ու տերմինային իմաստի առաջացումը մույնացնում է (տե՛ս Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 112-113):

² Տե՛ս Ա. Ստրասսյան, նշվ. աշխ., էջ 113:

³ Տե՛ս Լ. Ղազանչյան, Տերմինաբանության մի քանի հարցեր, էջ 228:

ա) Նույնանիշ տերմիններ. *կերպասխօսություն* (1896,2,47)- *կերպագիտություն* (1887,2,22), *տարածայնություն* (*dissimilation*) (1894,1,29)- *անմանաձայնություն* (*dissimilation*) (1900,3,69), *բարբառ* (1896,2,46)- *գառառաբարբառ* (1898,8-9,253)- *գառառալեզու* (1887,2,20) և այլն:

բ) Համանիշ տերմիններ. *ձայնական նշնչացում* (1896,3,76)- *ձայնաւորի կորուստ* (1894,3,84), *օտար ցեղի բառ* (1895,8,229)- *օտարազգի բառ* (1888,5,73)- *օտարատոհմ բառ* (1892,1,6), *նորայօղ բառեր* (1892,9,279)- *նորեղ բառ* (1895,12,359), *ռուսակերպ բառ* (1888,7, 118)- *ռուսայատուկ բառ* (1889,1,8), *ձայնական կերպարանափոխություն* (1900,1,18)- *ձայնական յեղեղմունք* (1909,11,333)- *հնչմանց ալլալություն* (1889,3,37) և այլն:

Հոմանիշ տերմինների դասակարգման համար հիմք կադող է լինել մաս բառակազմական հատկանիշը:

Պարզ տերմիններ լեզվի մոր շրջանում չեն ստեղծվում, հետևաբար մաս հոմանշային հարաբերության մեջ չեն լինում: Կան հնից եկող սակավ հոմանշային գույգեր. *հայ գրեր* (1893,3,89)- *հայկական տառեր* (1893,3,89), ոլոնք, ընդհանրական կիրառություն ունենալով, հանդեսի տերմինագործածության առանձնահատկությունները չեն լրացնում: Հանդեսում տերմինի կրճատման հետևանքով գործածվել է արմատական տերմինների հոմանշային երկու գույգ. *քեռն* (1887,1,8)- *սեպ* (1887,10,146), «լատիներեն *re վերջ*» (1890,5,152)- բառերում *ծայր* (1890,5,100):

Հանդեսում գերակշռում են բառակապակցական կազմությամբ հոմանիշները: Բառաբարդումը, ամանցի հավելումն ու տարածանցումը¹ ևս հոմանշային հարաբերություն են ստեղծում և կիրառելի են հանդեսում:

Ըստ բառակազմական հատկանիշի՝ կարելի է ոլոշել տերմինի հոմանշային ներքին հարաբերությունը, ըստ այդմ հոմանիշ գույգի տերմինատարների ձևախմաստային գուգադրության տեսակները: Հոմանշությունն իր լրիվ արտահայտությունն ստանում է պարզ արմատական տերմինների դեպքում, որոնք միաբաղադրիչ են և այդ բաղադրիչի միջոցով էլ դառնում են հոմանշության արտահայտիչ: Մինչդեռ բարդ, բարդ ամանցավոր և բառակապակցական տերմինները հոմանշային հարաբերության մեջ են մտնում իրենց կազմում ունեցած ոլոշ տերմինատարների միջոցով: Այդ տերմինների հոմանշային բուն հարաբերությունը պարզելու համար հարկ է հոմանշությունը դիտարկել ըստ այն կյտող տերմինատարների հարաբերության և ըստ հաս-

¹ Այս գուգաձևությունների նկարագրությունը լեզվաբանական գրականության մեջ միատիպ չէ, ինչն արտահայտված է դրանց տրված անվանումների տարբերությամբ. Ռ. Շալունց՝ տերմին-տարբերակներ (տե՛ս նշվ. աշխ., էջ 149-150), Ա. Սուքիասյան՝ հոմանիշներ (տե՛ս նշվ. աշխ., էջ 169), Լ. Պետրոսյան՝ համանիշներ (տե՛ս Հայերեն գրականագիտական տերմինաբանություն, ԼՈՎ, ք. 8, Երևան, 1984, էջ 97):

կացության սեռային ու տեսակային բնորոշումների տարբերակման: Նման հարաբերության պարզումը հնարավորություն է տալիս ճշտել նաև տերմինի կազմում համանիշ տերմինատարերի գերադաս կամ ստորադաս բնույթը:

ա) Բառակապակցական հոմանիշ տերմիններ: Այս կազմությամբ տերմինների հոմանշային առատ հարաբերություններում արտահայտված են սեռատեսակային տարատեսակ ներքին կապեր:

1) Տերմիններ, որոնք հոմանիշ են տեսակային տերմինատարերի հարաբերությամբ. *նմանաձայն բառեր* (1887,12,188)- *նմանահինչին բառեր* (1897,3,69), *դասական* (classique) *գրություն* (1888,5,74)- *նախնեաց* (classique) *գրություն* (1888,7,120), *փաղնջական այբուբեն* (1896,3,75)- *նախնական այբուբեն* (1888,10,166), *նոսրադողշմ բառ* (1913,10,626)- *նոսրատիպ բառ* (1913,8,489), *հասարակաց լեզու* (1887,12,187)- *ժողովրդական լեզու* (1900,1,19), *զխատոր արմատ* (1896,8,227)- *բուն արմատ* (1899,7,203)- *խկական արմատ* (1899,7,205) և այլն:

2) Տերմիններ, որոնց սեռային տերմինատարերը նույնական են, իսկ տեսակայինները իմաստով համարժեք չեն, բայց տերմինի լնդիսանույր կազմի մեջ մասնակցում են հոմանշային հարաբերությանը. *դուստր լեզուներ* (1900,1,13) - *քոյր լեզուներ* (1890,5,151), *ոսկեդար հայերեն* (1898,8-9,254)- *դասական հայերեն* (1895,8,229), *չրջական բաղաձայն* (1897,7,214)- *ներդարձիկ բաղաձայն* (1897,7,214) և այլն:

3) Տերմիններ, որոնց հոմանշային հարաբերության կրողը սեռային տերմինատարերն են. *ծայնաւոր նշան* (1888,6,101)- *ծայնաւոր տառ* (1894,8,244), *համեմատական լեզուախօսություն* (1887,2,23)- *համեմատական լեզուագիտություն* (1896,1,1)- *համեմատական լեզուաբնություն* (1890,3,54), *ձեռախօսական դասակարգ* (1896,5,151)- *ձեռախօսական դաս* (1896,3,76), *նորագիտ բառ* (1908,7,193)- *նորագիտ տարր* (1909,8,252), *հնչման անկում* (1900,3,69)- *հնչման զեղչում* (1900,3,69), *ծայնաւորներու տկարացում* (1898,3,80)- *ծայնաւորի աղարտում* (1896,8,228) և այլն:

4) Տերմիններ, որոնց սեռային, տեսակային տերմինատարերը տարբեր են, և հոմանշությունն արտահայտվում է բաղադրիչների լնդիսանույր կազմով. *բեւեռանման գիր* (1892,1,8)- *բեւեռագարդ տառ* (1887,1,9), *նորաստեղծ բառեր* (1892,6,180)- *նորարուր անուններ* (1888,7,119) և այլն:

Բառակապակցական տերմինների հոմանշությունն արտահայտվում է նաև ածանցի միակողմ առկայության կամ ածանցների երկկողմ հարաբերության միջոցով: Ընդ որում այս դեպքերում հոմանիշ են միայն տեսակային տերմինատարերը:

1) Տերմինային զույգեր, որոնք հոմանշային հարաբերության մեջ են ածանցի հավելումով. *պարզ արմատ* (1899,8,234)- *պարզական արմատ*

(1899,7,203), *ժամանիշ տառ* (1894,8,244)- *ձայնավորանիշ տառ* (1894,8,245), *ոսկեդար հայերեն* (1898,8-9,254)- *ոսկեդարեան հայերեն* (1895,11,326), *նոյնանիշ բառ* (1900,3,72)- *նոյնանշան բառ* (1890,5,103) և այլն:

2) Տերմինային զույգեր, որոնք հոմանիշներ են տարածանց հարաբերությամբ. *միջակ գրեր* (1888,6,103)- *միջին գրեր* (1890,2,42), *ռամկական ձևեր* (1891,3,82)- *ռամիկ ձևեր* (1891,12,361), *գրութեան լեզու* (1888,5,77)- *գրաւոր լեզու* (1888,7,122)- *գրական լեզու* (1898,3,79), *ձայնական նշան* (1896,10,292)- *ձայնատուր նշան* (1888,6,101), *ժողովրդեան բարբառ* (1899,10,295)- *ժողովրդական բարբառ* (1890,2,41) և այլն:

բ) Բալդ հոմանիշ տերմիններ: Այս տերմիններն, ըստ նշված հատկանիշների, նույնպես կարելի է բաժանել մի բանի խմբերի:

1) Տերմիններ, որոնք հոմանիշ են տեսակային տերմինատարրերի հարաբերությամբ. *նախատառ* (1910,7,212)- *սկզբնատառ* (1910,7,216), *նախածեւ* (1893,11,339)- *սկզբնածեւ* (1905,5,150)- *շուտածեւ* (1907,10,303), *սեպագիր* (1892,1,8)- *բեւեռագիր* (1887,4,52) և այլն:

2) Տերմիններ, որոնց կազմում հոմանշային հարաբերության մեջ են սեռային հասկացություն բնորոշող տերմինատարրերը. *միջնատառ* (1905,1,3)- *միջնածայն* (1896,3,77), *հայատառ* (1890,9,219)- *հայագիր* (1888,7,120), *արմատաբառ* (1907,6,183)- *արմատանուն* (1908,7,213), *այլահնչիւն* (1897,3,69)- *այլածայն* (1887,6,82), *գաղափարագիր* (1893,3,88)- *գաղափարանիշ* (1899,1,16), *գաւառաբարբառ* (1898,8-9,253)- *գաւառայեզու* (1887,2,20), *ռամկալեզու* (1891,9,259)- *ռամկաբարբառ* (1888,7,123) և այլն:

3) Սեռային, տեսակային տերմինատարրերի տարբերությամբ տերմիններ, որոնց հոմանշությունն արտահայտվում է բաղադրիչների ընդհանուր կազմով. *կրկնակետ* (1898,5,133)- *աւարտանիշ* (1898,5,138), *մեհենագիր* (1892,1,7)- *նշանադրոշմ* (1903,1,7), *պատկերագիր* (écriture figurative) (1892,1,7)- *նշանածեւ* (1902,7,201) և այլն:

Հոմանշային նաև այնպիսի զույգ, որի կողմերը իմաստային հարաբերության մեջ են բաղադրիչների շարադասության տարբերությամբ. *ձայնատառ* (1894,8,245)- *տառածայն* (1899,10,291):

գ) Բալդ ածանցավոր հոմանիշ տերմիններ: Այս տերմինները, հոմանշային ներքին հարաբերությունների հիմքով, բաժանվում են հետևյալ խմբերի:

1) Տերմիններ, որոնք հոմանիշ են տեսակային տերմինատարրերի հարաբերությամբ. *տառաշրջութիւն* (1913,7,402)- *տառադարձութիւն* (1888,5,77), *ձայնավորութիւն* (1890,2,43)- *ձայնաշրջութիւն* (1888,9,153)- *ձայնանուաղութիւն* (1890,2,43), *արձանագրութիւն* (1888,1,11)- *վիմագլութիւն* (1893,3,88)- *քանդակագրութիւն* (1898,5,137), *ձեւախօսութիւն* (1896,2,47)- *կերպախօսութիւն* (1896,2,47), *տերմինաբանութիւն* (1911,12,752)- *յատկաբանութիւն* (1912,10,599) և այլն:

2) Տերմիններ, որոնց համանշային հարաբերության կրողներն են սեռային տերմինատարները կամ որոնց համանշայությունն արտահայտվում է դրանց տարբերությամբ. *նմանագրություն* (1895,12,371)- *նմանաձայնություն* (1906,4,107)-*նմաներանգություն* (1906,1,21)- *նմանափոխություն* (1905,1,4), *հագագաբանություն* (1899,10,289)- *հագագախօսություն* (1899, 10,289), *բեռնագիտություն* (1899,1,19)- *բեռնաքննություն* (1887,2,21) և այլն:

դ) Ածանցավոր հոմանիշ տերմիններ: Ածանցավոր տերմինները ներքին սեռատեսակային բաժանման ենթակա չեն: Դրանք հոմանշային հարաբերության մեջ են գտնվում հիմնականում տարածանք կամ տարարմատ հատկանիշով:

1) Նույնական արմատներով տերմիններ, որոնք հոմանիշ են տարածանք հարաբերությամբ. (*լեզուի*) *կցում* (1897,5,154)- (*լեզուի*) *կցողություն* (1897,5,154), *հնչումություն* (1900,1,13)- *հնչականություն* (1899, 10,293), *շեշտականություն* (1896,10, 292)- *շեշտադրություն* (1896,8,228) և այլն:

Ածանցների տարբերությամբ կարող են արտահայտվել նաև նույն իմաստի տարբեր իրացումներ. *հնչիւն* (1887,2,22)- *հնչական* (= հնչյունի տեսակ՝ ձայնեղ) (1899,10,290)- *հնչում*. «նոր-հայկական *վո հնչումն*» (1894,1,25):

2) Նույնական ածանցներով տերմիններ, որոնք հոմանիշ են տարարմատ հարաբերությամբ. *բաղադրություն* (1888,5,76)- *բաղադրություն* (1888,12,221), *հոլովականություն* (1896,10,293)- *յեղականություն* (1896, 10,293), *փոխադրում* (1899,1,19)- *փոխաբերում* (1888,5,75) և այլն:

գ. Հոմանիշ տերմինների կից գործածությունը: Համոզեում նկատելի է տարածության ձգտում, որ շարադրանքը հետաքրքրացնելու ոճական մոտեցման հետևանք է: Դրա դրսևորումներից է հոմանիշների կից գործածությունը՝ միևնույն նախադասության մեջ կամ հոդվածում:

Հոմանիշ տերմինները միմյանց հարաբերվում են կա՛մ բաղադրիչների ամբողջ կազմով, կա՛մ մասնակի փոփոխությամբ՝ արմատի, ածանցի տարբերությամբ, հավելումով ու կցումով, ինչպես նաև բառակապակցական տերմինների բառաբարդումով, ըստ այդմ նշված կից գոգաձևություններում հոմանշությունն արտահայտվել է բառերի, արմատների, արմատի ու ածանցի հարաբերությամբ:

ա) Կից հոմանշություն՝ բառերի հարաբերությամբ: «Մշոյ եւ քէ՛ Վանայ *բարբառներն* երկու տարբեր *գաւառականներ* կը կացուցանեն...» (1898,10-11,312): «Յոյնք նոյն իսկ այն ժամանակներն արդէն սկսած էին դժուարութիւն զգալ *նախնական* բ (լատ. Բ) *ձայնն* հնչելու եւ իրենց բառերուն մէջ ալ իւր *սկզբնական հնչիւնը* կորսցնելու մօտ էր» (1888,12,221): «...Ի եւ ու ձայնաւորաց խնամի *յեմարաններն*՝ յ եւ վ, թերես զանոնք երկարելու կը ծառայէին: Այս հաւակնութեան վրայ աւելի կլրնայինք պնդել՝ եթէ նոյն *նեցուկնե-*

ըր բառամեջքին ալ հանդիպելին» (1888,11,186) և այլն: Մինևոյն հոլովածում գործածված հոմանիշ տարբերակներ. *տառադարձութիւն* (1888,5,74)- *յարմարագրութիւն* (1888,5,75), *տառական փոփոխութիւններ* (1900,3,69)- *հնչմանց փոփոխութիւններ* (1900,3,70), *ներքին հոլովականութիւն* (1896,8,227)- *ներքին փոփոխութիւն* (1896,8,229), *ձայնաւոր տառ* (1891,3,69)- *ձայնաւոր նշանագիր* (1891,3,69), *նշանակալից գիր* (1896,3,76)- *նշանակալից ձայն* (1896,3,76), *սեպածե գիր* (1892,1,8)- *քերտանման գիր* (1892,1,8) և այլն:

բ) Կից հոմանշություն՝ արմատների հարաբերությամբ: «Եթե այժմեան այլեւայլ *գաւառաբարբառները* մեր նախկին մայր լեզուին հետ համեմատենք, ստուգիւ շատ տեղ մեծ տարբերութիւն կը նշմարենք. նաեւ այն *գաւառալեզուներն*, որոնք մեր հնագոյն լեզուին հետ տակաւին բաւական մնացորդիւն կը ցուցնեն ...» (1892,1,5): «*Լեզուաբանական տեսութիւն*. Հանդէս դասական *լեզուագիտութեան* եւ մանկավարժութեան» (1894,2,33): «*Այլազան եւ այլահնչիւն ձայներ*» (1896,3,73) և այլն: Նոյն տեքստում գործածված հոմանիշներն ավելի գործածական են. *վերջածայն* (1905,5,157)- *վերջատառ* (1905,5,157), *կերպախօսութիւն* (1896,6,166)- *ձեւախօսութիւն* (1896,6,166), *բաղաձայնագիր* այբուբենք (1894,8,245)- *բաղաձայնատառ այբուբենք* (1894,8,245), *յունածե գրել* (1888,6,100)- *յունակերպ գրել* (1888,6,100), *լեզուաց ազգաբնակիւն դասակարգութիւն* (1897,3,69)- *լեզուաց ցեղաբանական դասակարգութիւն* (1897,3,71), *համագգի լեզուներ* (1890,5,151)- *համացեղ լեզուներ* (1890,5,151) և այլն:

Արմատները կարող են նաև ուղղակիորեն չհարաբերվել, բայց տերմինների կազմում արտահայտել հոմանշություն. «Ներքոյականի *հոլովակերտն* է *ի*, որ *ա* վերջաւորած բուններուն ծայրն *այ* ձեռք կ'առնու. իսկ եթէ բունն *ի* կամ *ու* վերջաւորի, *հոլովանշանն* անհետ կը կլլուի» (1890,5,101):

գ) Ածանցի և արմատի հարաբերությամբ. *նախատառ* (1900,3,69)- *սկզբնատառ* (1900,3,69), *համագգի ձայնաւորներ* (1896,8,226)- *նոյնագգի ձայնաւորներ* (1896,8,226), *համանիշ բառ* (1897,3,70)- *նոյնանիշ բառ* (1897,3,69) և այլն:

Հանդեսում տերմինային կից հոմանշության ալլ արտահայտություններ եւ կան:

ա) Որպէս իմաստային լրացում փակագծում նշված է տերմինի հոմանիշը. *լեզուաբանական համեմատութիւն (ստուգաբանութիւն)* (1898,12,378), *սուղ (կարծ) ձայնաւոր* (1896,8,229), *փոխագրութիւն (տառադարձութիւն)* (1898,10-11,312), *տառադարձութիւն (հնչմանց այլալոյնութիւն)* (1889,3,40), «...*լերկ (անձայն)* անուանուած բաղաձայնները...» (1900,1,14), «...*ձայնաւորաց սաստկութիւնը, տկարանալը (փոփոխութիւնը)*...» (1896,8,228), «...*պարզ (միարմատեան)* բնիկ հայ անուանց մեջ...» (1894,7,211), *նախնական հայ*

լեզուի (այսինքն ընդհանուր հայերեն լեզուի) առանձնայատկությունները (1898,10-11,309) և այլն:

բ) Մրցակցող ձևերը ներկայացված են կից՝ «կամ»-ով շաղկապված. շրջական կամ ներդարձիկ հնչումներ (1900,1,14-15), օտար բառերու փոխադրություն կամ տառադարձություն (1900,1,20), պատիւ կամ համառօտման նշան (1898,5,133), «...միջակ տառերը միշտ թոյլ կամ կակուղ հնչելու են...» (1888,10,167), խնամի կամ մերձաւոր լեզուներ (1897,3,69), և այլն: Երբեմն փակագիծն ու շաղկապը գործածված են միաժամանակ. *յետ-դասական (կամ յետնադարեան) լեզու* (1897,5,154), *ժայնաւորին աղօտանալ (անուշ-նալ կամ ժայնաշրջիլ)* (1896,8,227):

Հաճախ գործածվում են նաև կառուցվածքային տարբերությամբ զուգաձևություններ, որ առաջացել են բառաբարդման, տերմինատարրի կրճատման կամ հավելման միջոցով:

ա) Կից գործածված զույգեր՝ առաջացած բառակապակցական տերմինների բառաբարդման միջոցով. *արմատական ժայնաւոր* (1903, 12,381)- *արմատաժայնաւոր* (1903,12,381), *ժայնական օրէնք* (1907, 8,249)- *ժայնաօրէնք* (1907,8,249)- *ժայնաւորաօրէնք* (1907,8,250), *հոլովի* ընդհանուր *նշան* (1890,5,101)- *հոլովանշան* (1890,5,101), «Բ *կրկին է ձեռով...*» (1887,6,81)- «*Ջ կրկնածու է...*» (1887,6,81), «Ս-ն միայն *մեկ ձեռ ունի...* Ծ կամ Ս (ատամ-նական) նոյնպէս *միածու է...* Զ ալ *մեկ ձեռ ունի...* յիշենք վերջապէս *միածու* շնչական *հ-ն* ալ...» (1887,11,164), *օտար լեզու* (1898, 12,379)- *օտարալեզու* (1898,12,379), *լեզուական եւ ատամնական հնչիւն* (1900,1,15)- *լեզուատամ-նային հնչիւն* (1900,1,16) և այլն: Զուգաձևություններ են առաջանում նաև բառաբարդման և կրճատման հետևանքով. «Ինչպէս ուրիշ հնդեւրոպատոհմ լեզուներն, այսպէս իմն պարսկերէնն ալ ունեն *բայարմատի* այլեւայլ *ձեւեր*: Այս *բայածեւք*, որոնցմէ զանազան լծորդութիւնք, յառաջ եկած են...» (1890, 5,151), բաղադրիչի փոփոխությամբ բառաբարդման հետևանքով. *ժայնական փոփոխութիւն* (1900,1,12) - *ժայնաշրջութիւն* (1900,1,13):

բ) Տերմինատարրի կրճատման հետևանքով առաջացած կից զուգաձևություններ. *անուանական արմատ* (1895,8,230)- *անուան-արմատներ* (1897,7,212), *արմատական բառ* (1902,1,20)- *արմատ բառ* (1902, 1,20), *հին-հայերէն ռամկական բարբառ* (1900,1,19)- *հին-հայ ռամկօրէն* (1900,1,19), *մենրոպեան-հին-արտաբերութիւն* (1900,1,14)- *մենրոպեան արտաբերութիւն* (1900,1,14), *նախարիական հայկական լեզու* (1907, 6,188)- *նախհայկական լեզու* (1907,6,189)- *նախ-հայկական լեզու* (1907, 6,188) և այլն:

գ) Բաղադրիչի հավելման հետևանքով առաջացած կից զուգաձևություններ.¹ *ժայնական փոփոխութիւն* (1900,1,12)- *ժայնական կերպարանափո-*

¹ Բաղադրիչի հավելումը Գ. Սևակը համարում է ավելորդություն, որից տուժում է տերմինի միաձևությունը, տե՛ս նշվ. աշխ., էջ 10:

խութիւն (1900,1,18), բնիկ ծայն (1896,3,73) - հայաբուն ծայն (1896,3,73), քն-դարձակ ծայնատորներ (1904,5,132)- բնդարձագոյն ծայնատորներ (1904,5,132) և այլն:

Կառուցվածքային տարբերություններ կարող են առաջանալ նաև բարդ բառի բաղադրիչների տարրալուծման հետևանքով. «Կրատորականի եւ հասարակի *դիմանշանք* միաձեւ են: ...Կրատորականը ներգործականի *դիմակերտ նշաններն* ալ կլինայ առնուլ...» (1890,5,151):

Զուտ ձևային հակադրության օրինակ են տերմինների շարադասական տարբերակները. *միջին կոկորդային-պայքուցիկ կ* (1901,8,235)- *կոկորդային միջին պայքուցիկ կ* (1901,8,236), *հայերէն-աշխարհաբար* (1899,10,294)- *աշխարհաբար հայերէն* (1894,1,27), *երկաթգիր-գլխագիր* (1897,6,181)- *գլխագիր-երկաթագիր* (1898,4,106) և այլն:

դ. Հոմանիշ տերմինների քերականական դրսևորումները: Եթե նկատի չունենանք տեսակային բաղադրիչների որոշչային բնույթը և հիմք ընդունենք հիմնային և հատկապես համադրական կազմությամբ տերմինները, ապա համոզեալով զլիսավորապես գործածված են գոյական, և երբեմն էլ՝ բայ տերմիններ: Խոսքի մասերի սահմանափակ բաշխումը մույնանշությամբ բնորոշ հատկանիշ է¹:

ա) Գոյական հոմանիշներ. *ստորաբարբառ* (1912,10,602)- *ենթաբարբառ* (1912,10,609), *գաւառալեզու* (1887,2,20)- *ռամկալեզու* (1891,9,259)- *գաւառաբարբառ* (1898,8-9,253), *նախատառ* (1910,7,212)- *սկզբնատառ* (1910,7,216) և այլն:

բ) Բայ հոմանիշներ. «...շեշտ ունեցող ծայնատորը *կը սաստկանայ* (կը գործնայ) (1896,8,228), «...բարձր դասական գրչաւ յունաձեւ կամ լատինաձեւ ուզած են *փոխաբերել* հայ անուններն...» (1888,5,75)- «Բուեռագիրը եւրոպական տառերով *փոխագրել*...» (1899,1,19) և այլն:

ե. Տերմինների հոմանշային շարքերը: Նույնանիշները գուրկ են իմաստային և ոճական տարբերություններից և հետևաբար հարաբերվելու ճկունությունից: Այդ պատճառով համոզեալով տերմին մույնանիշներից կազմված շարքերը սակավանդամ են՝ մի քանի միավորից բաղկացած: Այդ շարքերում, մույնանշության առանձնահատկությամբ պայմանավորված, հիմնաբար չկան²:

Արդյունաբեր վերջաորոշիւն (1906,4,109)- *արդիւնատոր* (produktiv) *մասնիկ* (1903,12,359)- *արգասաբեր ձեռակերտ* (1906,9,282):

Ձայնատորի տկարացում (1896,8,227), *ծայնատորի աղարատում* (1896,8,228)- *ծայնատորներու նուագում* (1904,5,131):

¹ Տե՛ս Ա. Ստրիասյան, նշվ. աշխ., էջ 174:

² Տե՛ս մ. տ., էջ 159-160:

Նորաստեղծ բառ (1892,6,180)- նորակերտ բառ (1894,3,83)- նորակազմ բառ (1889,2,27):

Գրական լեզու (1898,3,79)- գրաուոր լեզու (1888,1,8)- գլոց լեզու (1887,9,133) և այլն:

Ի տարբերություն մույմանիշների՝ համանիշների շարքերը բազմազան են «անլամների իմաստային, բառաքերականական, ոճական և հուզարտահայտչական, կիրառական զանազան կապերով ու առանձնահատկություններով...»¹: Այս տարատեսակ կապերի ու առանձնահատկությունների համար հաճախ կա ելակետ՝ իլմնաբառ, որի հարաբերությամբ ձևավորվում է հոմանշային շարքը:

Գրաբար հայերեն (1898,8-9,254), ոսկի դարու լեզու (1887,9,138), ոսկեդար հայերեն (1898,8-9,254), դասական հայերեն (1890,2,41), հին-դասական հայերեն (1901,1,15), հին դասական ընտիր լեզու (1899,7,202), հինգերորդ դարում լեզու (1888,1,10), հին-մատենագրական լեզու (1898,10-11,309), հին-հայերեն մատենագրական լեզու (1898,10-11, 310), նախնեաց բուն հարագատ լեզու (1887,9,138), նախնեաց հարագատ հայերեն (1887,9,139), մեսրոպեան հայերեն (1887,9,139), մեսրոպեան լեզու (1893,3,89), նախնական մեսրոպեան լեզու (1891,12,361), հնագույն մեսրոպեան հարագատ լեզու (1887,9, 138), մագաղաթեայ հայերեն (1897,3,66), ծխական եւ մատենագրական լեզու (1898,3,80):

Բնիկ լեզուներ (1890,2,43), հնդեւրոպատոհմ լեզուներ (1890,5,151), հնդեւրոպատոհմ նախամօր սերունդներ (1892,1,5), հնդեւրոպականներ (1899,8,235), նախատոհմներ (1892,1,7), համագգի լեզուներ (1890,5,151), համացեղ լեզուք (1890,5,151), նոյնցեղ լեզուներ (1897,3,69), մերձաւոր լեզուներ (1897,3,69), ազգակից լեզուներ (1898,10-11,298), խնամի լեզուներ (1897,3,69), դուստր լեզուներ (1900,1,13), քոյր լեզուներ (1890,5,151):

Հնդեւրոպական նախալեզու (1898,5,145), հնդեւրոպական նախաւոր լեզու (1899,8,234), նախկին մայր լեզու (1892,1,5), նախնական- հնդեւրոպական լեզու (1896,2,46):

2.2. Տերմինային հականշություն

Ի տարբերություն հոմանիշների՝ տերմինների իմաստային հակադրությունը մերժելի չէ: Հականշությունը ոչ միայն չի վնասում տերմինների մենիմաստութեանը, այլև ընդգծում է կողմերի իմաստային ինքնուրույնությունը:

¹ Ն. տ., էջ 146:

Հականշությունը, տերմինաբանության համար լինելով չեզոք հատկանիշ, առնչվում է հանդեսի տերմիններին, քանի որ, ինչպես ցույց տրվեց, տերմինային և բառային հատկանիշները սերտ հարաբերված են: Բացի այդ համդեռում գործածված հականիշների առանձնացումը կարևոր է, եթե տերմինի ժխտումը, հանգեցնելով մոր տերմինի գործածության, դիտվում է որպես նորակազմության միջոց: Այդ ուղիով հիմնականում ստեղծվել են բառային հակադրություններ, որանց ժխտված եզրը դիտվածային է՝ հատուկ տվյալ համատեքստին:

Տերմինների ժխտումը կատարվում է մասնիկավորման և ածանցման միջոցով:

ա. Մասնիկով ժխտում. *գրական լեզու* (1898,3,79)- *ոչ-գրական լեզու* (1900,1,17), «Հաստատուն եզրեր կազմում են, որոնց մեջ իսկոյն կարելի է՝ մեքրոպեան հայերէն մը՝ ոչ-մեքրոպեանէ ապահովալէս զանազանել...» (1898,8-9,254), *արիական (ինդիկ-երոսպական) լեզու* (1892,7,215)- *ոչ-արիական լեզու* (1899,1,18), *կիլիկեան բարբառ* (1900,1,17)- *ոչ-կիլիկեան բարբառ* (1900,1,20), «*նորամուտ ֆ...*» (1888,12,210)- *ոչ նորամուտ ժայն* (1895,10,318) և այլն:

բ. Ածանցով ժխտում. *հնչական տառ* (1894,2,48) - *անհնչական տառ* (1893,3,84), *գործարանատր լեզուներ* (1896,3,76)- *անգործարան լեզուներ* (1896,3,76), *մմանսձայնութիւն* (1900,3,69)- *անմմանսձայնութիւն* (1900,3,69), *վանկական ժայնատր* (1905,1,1)- *անվանկ ժայնատր* (1905,1,1), *ժայնատր տառ* (1891,3,69)- *անձայն տառ* (1894,1,29), *հնչող գրեր* (1900,1,14)- *չհնչող գրեր* (1900,1,15) և այլն:

2.3. Տերմինային բազմիմաստություն

Լեզվաբանական տերմինի բազմիմաստությունը համեմաբարելի չէ, քանի որ հակասում է նրա մենիմաստ բնույթին. «Տերմինաբանությունը չի թույլատրում ներհամակարգային բազմիմաստություն»¹: Սա պատճառաբանվում է նաև համատեքստի իմաստատարբերակիչ նշանակության սահմանափակությամբ, որովհետև գիտական ոճի բառային միջավայրը գուրկ է բազմիմաստությունը կարգավորելու այն դերից, որ հնարավոր է բառային միջոցներից ազատ և առատ օգտվող այլ ոճերի դեպքում²:

Տերմինային բազմիմաստությունը հատուկ է կանոնակարգման փուլում գտնվող տերմինագործածությանը: Հանդեսի հիմնադիր Ա. Այտընյանի լեզ-

¹ Էդ. Աղայան, Տերմինագիտություն, Երևան, 1978, էջ 46:

² Ա. Սուրիսյան, նշվ. աշխ., էջ 98:

վաքանական հայացքները ուսումնասիրած Ա. Աբրահամյանը որևէ տեսակետ պարզաբանելիս գուգահեռ հստակեցրել է մահ որոշ տերմինների նշանակություններ, մասնավորապես նկատել է *քերականություն* տերմինի նեղ ու ընդհանուր իմաստներ¹, տարբերակել է *գավառական* տերմինի *բարբառ* և *բարբառախումբ* իմաստներ² կամ *լեզու* տերմինի *լեզվի հասարակական տարբերակ* նշանակությունը³: Տերմինների բազմիմաստությունը հեղինակը բացատրում է ծանոթագրությամբ՝ անհստակության պատճառ նշելով տերմինաբանության անբավարար ուսումնասիրությունը և մշակվածությունը⁴:

Հանդեսում ներհամակարգային բազմիմաստությունը ներկայացված է գրեթե բոլոր կազմություններով՝ բացառությամբ նախածանցավորի (նախածանցները հանդես են գալիս վերջածանցների գուգաղմամբ):

ա) Պարզ և ածանցավոր բազմիմաստ տերմիններ:

Տառ- «գիր» (1893,3,90) և «հոդ» (1898,5,134) իմաստներ:

Չայն- այս տերմինի դիմաց նշված են «ծայնաուր, երկբարբառ, բաղաձայն» (1898,4,100):

Գիր- արտահայտում է տառի՝ *նախամեարդպեան գիր* (1891,3,69) և հնչյունի՝ *թույլագլոյն գիր* (1888,12,210), *վայրկենական գրեր* (1900,1,14) իմաստներ:

Սեպ- որպես սեպագիր. «Հին պարսկական սեպագրութիւնք յատուկ *սեպ* մըն ալ կ'ընծայեցնեն...» (1887,10,146), և սեպագրի կազմիչ տալր. «Նշանագիրներու կազմիչ տարբերու չափազանց միօրինակութիւնը (*սեպ*, սեպագլուխ, անկիւն)...» (1910,2,50):

Համաձայնութիւն- առնմանում. «Իսկ դ տառը ն տառէն յառաջ եկած է տալաձայնութեամբ (dissimilation), ինչպէս որ *համաձայնութեամբ* (assimilation) յառաջ եկած է աղաբողոն բառին մէջ...» (1894,1,29), ձայնաուրի *համաձայնութեան* օրէնք (1894,2,47), *համաձայնումն* (assimilation) (1894,5,157), և «շարահյուսություն» իմաստով. *համաձայնութիւն* (syntaktisch) (1903,12,360), *համաձայնական* (syntaxique) ձե (1898,3,79):

Հնչիւն- բացի հնչյունային միավոր լինելուց (1900,1,13)՝ համարժեք է նաև «արտասանությամբ». «...մեր արդի լեզուն...բաղաձայններու արտասանութեամբ երկու գլխաւոր մասի կը բաժնուի, այսինքն Արեւելեան եւ Արեւմտեան *հնչիւն*, կամ Ռուսահայոց եւ Տաճկահայոց արտասանութիւն» (1896,12,355):

¹ Տես Ա. Աբրահամյան, Արսեն Այոբյանի լեզվաբանական հայացքները, Երևան, 1984, էջ 34-35:

² Տես ն. տ., էջ 105:

³ Տես ն. տ., էջ 122:

⁴ Տես ն. տ., էջ 203:

Գրութիւն - գործածվում է բուն իմաստով (1888,7,123) և իմաստի ընդլայնմամբ. «*գրութեան (տառադարձութեան) կանոն*» (1888,5,75):

Բառարան - գործածվում է նեղ՝ «հավաքագրված բառեր» (1889,5,85, 1895,8,229) և լայն՝ «լեզվի բառապաշար» (1898,3,79) իմաստներով:

Փոխանակել - բառի տերմինային գործածությամբ՝ «տառադարձել» (1890,3,54) և «հնչյունափոխել» (1900,1,16) իմաստներ:

բ) Բարդ և բառակապակցական բազմիմաստ տերմիններ:

Չայնանիշ - խեթական գրի նշան. «*Չայնանիշները ընթերցանութիւնը դիւրացնող տառածներ են*» (1910,2,47): Սեպագրի ձայնավոր նշան. «*հետեւորդ ձայնաւորը նշանակելու համար ձայնանիշ առանձին նշանք ալ գործածուեցան*» (1887,4,52): Չայնի գաղափար արտահայտող. *ձայնանիշ* բառը (1887,4,53), օր.՝ խօսիլ: Չայնավորներն արտահայտելու սղագրական նշան. «... *հայ հեղինակի մը հնարած բառական ճարտարամիտ սղագրական մէկ դրութիւնը, որ կը հիմնուի գլխաւորապէս հայերէն ձայնաւորները ձայնանիշներով նշանակելու վրայ*» (1910,6,173):

Լեզուացեղ - լեզվաընտանիք. Հնդեւրոպական *լեզուացեղ* (1897,3,72), և որպէս լեզվաճյուղ. օտար *լեզուացեղ* (1896,11,323):

Կրկնաձայն - գործածական նշանակությամբ՝ «երկբարբառ». (1888, 12, 222) և որպէս կրկնավոր բառերում տարբերվող հնչյուններ (1899, 7,207), օր. խաբէս-խութէս:

Նմանաձայնութիւն - «առնմանում» նշանակությամբ. (*assimilation*) (1896,8,228) և «համահնչունություն» իմաստային տարբերակով. «...*հայերէն գիւնի եւ գի բառերուն նմանաձայնութիւնը կարելի չէ այսուհետեւ պատահական համարիլ...*» (1899,3,83):

Յարմարագրութիւն - գործածական նշանակությամբ՝ «ուղղագրություն». *դասական յարմարագրութիւն* (1888,5,77), և որպէս «տառադարձություն». *օտար բառից հայերէն յարմարագրութիւն* (1888,9,155):

Յետադիր մասնիկ՝ որպէս վերջածանց (*suffix*) (1902,2,49) և որպէս կապային հետադրություն. «...*համար, իբր յետդիր (postposition), օրինակ՝ եղբօրս համար*» (1908,10, 342):

Հնչմանց ալլալութիւն (1889,3,37)- հնչյունափոխություն. «*Հնչման փոփոխութեան գլխաւոր մէկ պատճառն է՝ հնչման ալլալութիւնն եւ կրճատումն...*» (1900,3,69): Տառադարձություն. «բնական ինքնագործ տառադարձութիւն (*հնչմանց ալլալութիւն*)» (1889,3,40):

Տերմինային բաղադրիչները ևս բազմիմաստ կիրառություն ունեն. *նախաւոր* լեզու (1906,7,198), *նախաւոր* ձեւ (1905,11,348), *նախաւոր* կազմութիւն (1906,9,283), *նախաւոր* նշանակութիւն (1906,5,132) կազմություններում *նախաւոր* տերմինատարրը գործածված է «նախնական, սկզբնական» իմաստներով, իսկ *նախաւոր* հնչիւն (1910,6,173) կազմության մեջ՝ որպէս

նախահար, սկզբից կցվող: Նաև *նախնեաց* (classique) գրություն (1888,7.120), բայց *նախնեաց* ռամկօրեն (1888,1.5)՝ որպես միջին հայերեն:

Տերմինային բազմիմաստության շփոթը ակնհայտ է հատկապես, երբ իմաստային տարբերակները գործածվում են միևնույն նախադասության մեջ.

Ձեռ- «Հատեան տառերը բաղկացած են 1. Գաղափարներու համապատասխանող տառերէ... 2. Ձեռերէ՝ որոնք հնչում մը կամ հնչումներու խումբ մը կը ցուցնեն: 3. Ձեռերէ, որ միայն իբրեւ օգնական ձեւեր՝ կարողալը դիւրացրնելու կը ծառայեն: Առաջին տեսակներն են՝ 1. Ձեռեր, որ կը կարգացունեն, 2. Ձեռեր, որ չեն կարգացուիր...» (1898,10-11,327):

Մասնիկ- «...այս մասնիկներն ոմանք բաղադրութիւն են մէկէ աւելի մասնիկներու. այսպէս՝ անի (= ան-ի)...» (1899,2.48):

Բազմիմաստներն ու համանունները, ունենալով ընդհանրություններ, տարբերակման փուլ են անցել մինչև հստակեցվել է, որ բազմիմաստությունը տարբեր իմաստների առկայությունն է մեկ բառում, իսկ համանունությունը՝ տարբեր բառերի հնչյունական զուգադիպությունը¹: Բազմիմաստությունը համանունների առաջացման կարևոր գործոններից է, քանի որ բառի իմաստները ժամանակի ընթացքում կալուղ են այնքան հեռանալ նախնական նշանակությունից, որ խզվի դրանց իմաստային կապը՝ հանգեցնելով համանունության²:

Հանդեսում լեզվաբանական համանուն տերմիններ չկան: Դրանց գիտական գործածությունն ընդհանրապես հազվադեպ է³.

2.4. Տերմինային զուգաձևություններ

Զուգաձևությունները հատուկ են լեզվի զարգացման ընթացքին և նաև պայմանավորում են այն, քանի որ դրանց հարաբերակցությունը հանգեցնում է լեզվական տեղաշարժերի⁴: Տարբերակայնությունը նաև լեզվի զարգացման ցուցիչ է, քանի որ հիմնում ու նոր նորմաների համատեղ գործածությունը բնորոշում է ընթացիկ այն վիճակը, երբ հաղթահարվում է հինն ու արմատավորվում է նորը:

¹ Տե՛ս Ռ. Շալոմց, Համանուն բառերը ժամանակակից հայերենում, ԼՈՀ, 4, Երևան, 1977, էջ 13-27:

² Տե՛ս Ա. Սուրխասյան, Ժամանակակից հայոց լեզու, էջ 134:

³ Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, էջ 352: Ա. Սարգսյան, Կանոնի և կիրարկության հարաբերությունը հայ տերմինաբանության մեջ, ՏԽՄՀ, 3, Երևան, 1988, էջ 31:

⁴ Տե՛ս Ն. Պառնսայան, Ձևաբանական զուգաձևությունները ժամանակակից գրական հայերենում, ՏԽՄՀ, ք. 1, Երևան, 1976, էջ 24-25:

Հանդեսում գործածվում են տերմինների քերականական, ուղղագրական տարբերակներ և փակագծում օտար համարժեքով զուգաձևություններ: Տառադարձական տարբերակները հանդեսի տերմինագործածությամբ բնորոշ չեն, բայց առնչվում են հարաբերակից միավորներին, մասնավորապես, միասնական սկզբունք չի գործում՝ ա) անվանակարգային միավորները տառադարձելիս. *աքքադերեն* (1896, 9,269)- *ակկադերեն* (1896,10,289) և այլն, բ) լեզվաբանների անունները տառադարձելիս. *Մէյե* (1898,10-11,307)- *Մէյենե* (1898,12,377)- *Մէյե* (1900,2,43), *Սուփուս Բուգգե* (1892,4,102)- *Սոփուս Բուգգե* (1892,5,148)- *Սոփուս Պուկկե* (1895,8,227), (1895,9,259) կամ չտառադարձված՝ *Bugge* (1899,7,204): Տառադարձական տարբերակները հատուկ են նաև ժամանակակից արևմտահայերենին¹, որ բացատրվում է լեզվի միակենտրոն նորմավորման բացակայությամբ:

ա. **Քերականական տարբերակներ:** Հանդեսը սկսել է իրատարակվել հայոց լեզվի պատմության այն ենթաշրջանում, որի Գ. Ջախուկյանը երկնյոտ աշխարհաբար է անվանում²: Այս փուլում գրաբալյան տարրերը իմնականում հաղթահարվում են և դուրս մղվում գրական գործածությունից: Նորմավորմը համեմատաբար դանդաղ է ընթանում գրական լեզվի արևմտահայ տարբերակում: Ենթաշրջանի այս բնութագրումը վերահաստատվում է ՀԱ-ում: Այստեղ հնի մնացորդային ու համեմատաբար նոր կանոնների համատեղումը դառնում է տերմինային զուգաձևության պատճառ՝ իմնականում քերականական արտահայտությամբ:

ա) Հոլովական զուգաձևություններ. «...*բառերու* մասնական նշանակություններն ու առումները...» (1899,5,145)- «...յաճախութիւն այնչափ հնակելոյ եւ գրաբարածե *բառից*...» (1889,2,24), «...հայ *տառերու* ձեւափոխութիւնը...» (1891,3,70)- «...հայ *տառից* հարագատ հնչումն...» (1888,9,150), *մասնիկներով* ածանցված (1899,2,48)- «...«արտ, գեր, վեր» եւ նման *մասնկամբք* բաղադրութիւնը...» (1891,12,361) և այլն:

բ) Դերբայական զուգաձևություններ. *մեռած* լեզուներ (1888,6,98)- *մեռեալ* լեզուներ (1888,7,122), *փոխառնում* բառ (1889,8,159)- *փոխառեալ* բառ (1893,1,17), փոխ *առնել* (1891, 5,147)- փոխ *առնուլ* (1890, 5,103) և այլն:

Գրաբարի բաղադրյալ ժամանակների կազմությամբ երկրորդաբար կառույ է մասնակցել *ունիմ* բայը³, այդպիսի մի կիրառություն ընդօրինակված է ՀԱ-ում. *ածանցած ունի* (1887,4,53):

գ) Հոգնակի թվի զուգաձևություններ. *դիմանշաններ* (1890,5,151)- *դիմանշանք* (1890,5,151), *կէս ծայնաւորներ* (1887,2,21)- *կէս-ծայնաւորք* (1887,11,163),

¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Անգլերեն տերմինների փոխառությունն ու պատճենումը արևմտահայերենում և արևելահայերենում, ՏԽՍՀ, 3, Երևան, 1988, էջ 176:

² Տե՛ս Գ. Ջախուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 64:

³ Տե՛ս Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1992, էջ 177:

նշանագիրներ (1890,5,151)- *նշանագիրք* (1890,5,151) և այլն: Ինչպես երևում է թվագրումից, այս զուգաձևությունները ևս կախող են կից գործածվել՝ միևնույն նախադասության մեջ կամ հոդվածում:

բ. Ուղղագրական տարբերակներ: Ուղղագրական տարբերակների պատճառը ևս անբավարար նորմավորումն է: Հանդեսի հիմնադիր Ա. Այտընյանը աշխարհաբարի քերականության մեջ գծիկը՝ «միտքեան գիծը», որպես փոխառյալ նշան, հիմնական շարադրանքից առանձնացնում է մանրագրով¹, ապա հակիրճ ճշտում է դրա կիրառությունները և որոշ օրինակների դեպքում հնարավոր համարում երկձևությունը՝ կից գրությամբ²: Այդ երկձևության անդրաշ սահմաններով ազատությունը նաև հանդեսում է:

ա) Գծիկով կցված և վերլուծական զուգաձևություններ. *սկզբնական-բառ* (1894,1,26)- *սկզբնական բառ* (1889,8,159), *ձայնաւորի-փոփոխութիւն* (1896,8,225)- *ձայնաւորի փոփոխութիւն* (1896,11,322), *հին-հայերէն* (1894,10,318)- *հին հայերէն* (1890,2,43), *նոր-հայերէն* (1893,8,254)- *նոր հայերէն* (1893,3,82), *ձայնաւորաց- ներդաշնակութիւն* (1896,8,228)- *ձայնաւորաց ներդաշնակութիւն* (1900,3,68), *ձայնաւորի-սաստկանալ* (1896,11,322)- *ձայնաւորի սաստկութիւն* (1896,8,227) *արմատ-բառ* (1896,11,321)- *արմատ բառ* (1896,8,225) և այլն:

բ) Գծիկով կցված և համադրական զուգաձևություններ. *արմատ-ծել* (1912,12,710)- *արմատածել* (1909,5,160), *միջին-մետրոպէան տառեր* (1897,8,229)- *միջինմետրոպէան տառեր* (1897,3,68), *նախ-հայկական լեզու* (1907,6, 188)- *նախհայկական լեզու* (1907,6,188) և այլն:

Հանդեսում գործածվում են նաև գրային տարբերությամբ զուգաձևություններ. *յետսամուտ բառ* (1898,10-11,325)- *յետնամուտ բառ* (1893,8,254), *յոքնակի վերջաւորութիւն* (1896,8,226)- *յոգնակիի ձեւեր* (1899,1,13), *կետադրութիւն* (1896,7,216)- *կիտադրութիւն* (1898,5,136)- *կետադրութիւն* (1891, 11,326), *նտորագիր* (1888,5,87)- *նօտր գիր* (1897,8, 226) և այլն: Նաև մեկ տառի տարբերությամբ օրինակներ. *միջնատառ* (1905,1,3)- *միջատառ* (1905,5,158), *նախարմատ* (1906,2,57)- *նախարմատ* (1906, 11,346), *բառամէջք* (1887,10,145)- *բառամէջ* (1900,3,69) և այլն:

գ. Ազգային և օտար համարժեքների կից գործածությամբ զուգաձևություններ: Հանդեսում բազմաթիվ տերմինների գործածված են օտար համարժեքի նշումով: Սա, ըստ ամենայնի, տերմինի իմաստային որոշակիությունն ապահովելու հավելյալ միջոց է՝ սկզբնաղբյուրի հետ համեմատության հնարավորությամբ:

¹ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, էջ 351:

² Տե՛ս ն. տ., էջ 356:

Այդպիսի կից բացատրություններով գործածությունները հատուկ են ոչ միայն հանդեսին, այլև ընդհանրապես 19-րդ դարի վերջին տասնամյակների աշխարհաբարին¹:

Հանդեսում օտար բառերը, ըստ թարգմանական նյութի կամ տերմինի սկզբնաղբյուր-լեզվի, տարալեզու են: Տարբերակման այդ հիմքով առանձնանում են հետևյալ խմբերը:

ա) Հաճախ գործածվում են ֆրանսերեն բառերի կից գործածությունները. «Գաղղիացիք (սոսկ) «աղօս» կը կոչեն (*les sourdes non aspirées*)» (1899,10,290), *խաղողկային* (*uvulaire r*) *բաղաձայն* (1907,3,92), *հնչականք* (*les sonores*) (1899,10,290), *համրասիակ նշանագիրք* (*les occlusives sourdes*) (1891,2,44), *սրատկերագիր* (*écriture figurative*) (1892,1,7) *վանկագիր* (*écriture syllabique*) (1892,1,9), *արգելող բացասություն* (*la négation prohibitive*) (1908,8,247) և այլն:

բ) Համեմատաբար քիչ են գերմաներեն բառերի կից գործածությունները. «Հնածեն (*das alterthümliche*) արժեք ունի լեզուագիտներու՝ բայց ոչ երբեք խօսողներու համար» (1888,7,122), *գիտնոց լեզու* (*gelehrtensprache*) (1888,7,122), *լեզուի գիտակցություն* (*sprachbewusstsein*) (1895,9,261), *մակաբոյժ տառեր* (*parasitische laute*) (1894,5,157), *կազմութեան ձայնաւոր* (*kompensationsvokal*) (1904,6,185), *ձայնաշրջություն* (*lautverschiebung*) (1913,12,726), «բառերուն սկիզբն (*anlaut*), մէջն (*inlaut*), վերջը (*auslaut*)» (1913,12,727) և այլն:

գ) Հանդիպում են նաև անգլերեն բառերի զուգադրումներ. «անգղ. *inverted*, որուն վրայէն կազմեցինք *շրջական*» (1897,7, 214), «ճաներէն լեզուն բաժանուում է երկու բարբառների՝ կոկորդային (*guttural*) եւ շնչաւորական (*spirant*)» (1912,10,612), «...համար, իբր յետոյի (*postposition*)» (1908,10,342) և այլն:

դ) Երբեմն զուգադրված են լատիներեն բառեր. *ձայնաւորաց հանդիպումն* (*hiyatus*) (1894,5,156), *հնչման անկում* (*aphaeresi*) (1900,3,69), *կարողական* (*potentialis*) *եղանակ* (1890,5,151), «ասորերէնի սաստկական ձեւ (*status emphaticus*), բացարձակ ձեւ (*status absolutus*), բաղադրեալ ձեւ (*status constructus*)» (1893,1,15-16) և այլն:

Երբեմն միևնույն տերմինը նշված է տարալեզու համարժեքներով, օրինակ՝ ֆրանս. *միջձայնաւորակա* (*intervocalique*) (1914,6,340), գերմ. *միջձայնաւորային* (*intervocalische*) (1914,6,340), կամ մեկ տերմինի դիմաց տրված է երկու օտար համարժեք. *ժողովրդական տեղափոխություն* (*umstellung, metathèse*) (1905,10,318):

¹ Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԼԸ-ծԹ, էջ 61:

Կան նաև կրկնակի բացատրության օրինակներ, երբ տերմինի իմաստը ոչ միայն օտար համարվեցով, այլև համատեքստով ու հոմանիշ տերմինով է տրված. «...ծայնափոխության մեկ ելույթին, որուն կ'ըսենք *ռեականություն* (*rothacisme* *pt* *գրին փոխույլը*)» (1896,8,226), *ծեախություն* (*կերպախություն*, *morphologie*) (1896, 2,47), «Նիւթին եւ ձեւին յարաբերութիւնն է՝ *աղընթերադրութիւնը* (*juxtaposition*). *այսինքն՝ քովէքով գրուած են...*» (1896,3,77), «*Բազմահամադրութիւն* (*polysynthesisme*) քանի մը հնդկիկ լեզուաց յատուկ է, եւ յայնմ կը կայանայ որ գրեթէ *մախադասութեան մ'ամբողջ բառերը ձուլելով բայ մը կը կազմեն...*» (1896,5,151) և այլն:

Տերմինին օտար համարվեք է կցվում՝ հիմնականում պատճենման կամ քարգմանության սկզբնաղբյուրը նշելու համար, որը, սակայն, ոչ միշտ է հետևողական կատարված:

Հանդեսին հատուկ տարածությունը նկատելի է նաև նույնական բառերի կից համարվեքների համեմատությամբ, մասնավորապես օտար միևնույն բառի դիմաց հայերեն մի քանի տարբերակ է նշվում. *մակդիր* (*suffixe*) (1909,11,334), *յետադիր* (*suffixes*) *մասնիկներ* (1902,2,49), *հոլովական մասնիկ* (*suffix*) (1892,6,164) և այլն:

Իսկ ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ օտար բառի նշումը հատուկ է տվյալ հոդվածին, և այն չպետք է ընկալվի այլ հոդվածների տերմինների հետ փոխկապակցված հարաբերությամբ: Սա բխում է ամսագրի բնույթից, որ, լինելով տարբեր հոդվածների համահավաք, չունի միագլիժ համակարգվածություն: Այդ է պատճառը, որ օտար համարվեքով տերմիններին հաճախ նախորդում են նույն տերմինների առանց գուգորդման գործածություններ. *գրատոր լեզու* (1888,1,8)- *գրատոր լեզու* (*schriftsprache*) (1888,7,122), *շրթնականը* (1887,10,146)- *շրթնականներ* (*labiale*) (1892,5,151), *բեռնագիր* (1887,4,52)- *բեռնագիր* (*caractere cunéiforme*) (1892,1,8), *համեմատական լեզուագիտություն* (1890,2,41)- *համեմատական լեզուագիտություն* (*la linguistique comparee*) (1896,1,1) և այլն:

3. Շարադրանքի գեղարվեստականացումը

Երբ միևնույն հասկացության համար ստեղծվում է մի քանի անվանում, շրջանառության մախնական փուլում դրանց կազմում հաճախ հանդես են գալիս արտահայտչական հատկանիշով բաղադրիչներ: Դրանք ունեն տերմինալին փորձնական գործածություն և գիտական լեզվի յուրահատկությամբ չհամապատասխանելով՝ գործածությունից դուրս են մղվում կամ պատկերավորության հատկանիշի կորստի դեպքում՝ պահպանվում: Այդ անցումը

տեղի է ունենում, երբ բառ-տերմինատարրը, տերմինի կազմում միաձույլ լինելով տերմին-տերմինատարրին, չի գիտակցվում համագործածական նշանակությամբ. «պատկերավոր բառը, փոխաբերությունը աստիճանաբար կարող է կայացնել իր պատկերավորությունն ու արտահայտչականությունը, դառնալ միանշանակ, վերածվել տերմինի և արտահայտել տվյալ գիտական հասկացության իմաստը»¹: Մրցակից ոչ կենսունակ տարբերակներում պահպանվում է բառային իմաստը. հմմտ. *ցեղակից լեզուներ- համացեղ լեզուներ, քույր լեզուներ, խնամի լեզուներ*:

Հանդեսի լեզվաբանական այն հոլովածներում, ուր գուգորդված են հիմնավորումն ու պատկերավորումը, տերմիններն ստացել են արտահայտչական հատկանիշներ: Հեղինակները խոսքը ազդեցիկ, հասցեական դարձնելու համար հաճախ դիմել են պատկերավորման միջոցների՝ տերմինները գործածելով բառային ոճավորված միջավայրում: Ըստ այդմ կարելի է տարբերակել հետևյալ խմբերը:

ա. Փոխաբերական մակդիրներ². գրաբնրի համեմատությամբ բարբառային բառերը բաժանվում են *ոսկի, արծաթ, կապար, ցեխ, տիղմ* տեսակների (1908,6,18485): Նաև *դեռածին լեզու* (1895,12,358), *նորսքողքոջ աշխարհաբար* (1895,12,358), *նորածին աշխարհաբար* (1895,12,359), *դեռաբոյս աշխարհաբար* (1895,12,358), *դիւրադարձ, ծաղկալից լեզու* (1895,9,262), *ամմոմը լեզու* (1895,12,358), *բուզմակնճիւղ լեզու* (1892,1,26), *խառնածին լեզու* (1887,9,135), *խոնարհագոյն հայերէն* (1887,9,139), *մուրացածոյ գրեր* (1888,1,5), *տգեղ, խղորդրտական բառեր* (1895,9,263), *խեղած բառ* (1888,6,99), *անհամ հնչում* (1895,10,293), *անհամ եւ գրական մաքրութեան դէմ մեղանշող բառեր* (1898,10-11,326) և այլն:

բ. Համեմատություն. «...ժողովուրդեան մեծի մասին գրաբար հասկընալն՝ այն կէս ի կէս բժշկեալ կուրին տեսութեան մման էր, որ քայլող մարդիկն իբրեւ ծառ կը նշմարէր...» (1888,5,78): «...Հիւանդ եղունգն քիչ մը ատեն կպած կը մնայ նորաբոյս եղունգին ծայրին վրայ, մինչեւ որ մսին սահմանն անցնի եւ ինքնիյրեն ծանրութեամբն եւ կեղտոտութեամբը ստիպէ ձեռքը, որ այն յաւելածոյ մասն ի բաց կտրուի. նոյնը պիտի տեսնենք աշխարհաբարին վրայ. ամէն նորութիւն ժամանակ մը հաճելի կ'երեւայ, բայց նորութեան հրապոյրն դիւրաւ կ'անցնի եւ ամէն բան իւր հին կերպարանաց կը դառնայ...» (1895,10,293): «Հազիւ թէ ծնաւ մեր արդի լեզուն եւ իբր ժառանգակալ դուստր իւր հարստ մօրը ժառանգութիւնն վայելելու կոչուեցաւ...» (1895,9,263) և այլն:

¹ Օ. Բարսեղյան, Փոխաբերությունը գիտական ոճում, ՏԽՄՀ, 3, Երևան, 1988, էջ 118:

² Տարբերակումն ըստ Ֆ. Խլղաթյանի, տե՛ս Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 115:

գ. Փոխաբերություն. «...ի դարման աղքատության ձեռք եւ ասացուածոց այժմու բարբառոյս, հանել առնուլ մեր սեպիական յորդաբուլիս ակնադրերէն. որ այնպէս ձեւաշատ է» (1888,1,5): «Լեզուի մը հին գրականութեան մէջ պահած անմահութիւնը մեռելապատկեր մահատիպ անմահութիւն մըն է, որ միշտ գուրկ է կեանքէ, վասն զի չի խօսուիր...» (1892,1,5): «Այստեղ կ'իջնայ հայերէն տառադարձութեան ժամանակակից դիպումնոց տեսարանին առաջին վարագոյրը» (1888,6,104): «Զիչ շատ ծերայեցաւ վարագոյրն որուն ետեւէն կը սպասուէր նորանշան տեսարան մ'աղմկալից, եւ աւելի փոքրկեալ քան ուրչափ նիւթոյն բնութիւնն ու պատշաճութիւնը կը տանէր. եւ այնու առաւել՝ որ ամէն դիպց ինքնակամ դերասաններ. ինքնակոչ լմբիշներ յասպարեզ իջան նոյն ազգային հանդէսը կազմելու: - Տարօրինակ անակնկալ յատելուած հայերէն գրագիտութեան պատմութեանն» (1888,9,149) և այլն:

դ. Անձնավորում. «Եւ որպէս զի բոլորովին մմանութեան հետքը ջնջուի, այնպիսի վիրահատութեանց եւ անդամահատութեանց սկսան, որ բոլորովին անիրան ու անկերպարան դառնալու վտանգի մէջ ինկաւ խեղճ աշխարհաբարը» (1895,10,293): «Եթէ այս բոտն փոփոխութիւնն հայ լեզուաց շրջանակին մէջ կատարուէր, *վաղ* մայրն անշուշտ մինչեւ հիմա բոլորովին մեռած եւ անգործածական մնացած պիտի ըլլար, եւ *կիւ* դուստրը միայն պիտի ապլլէր կամ գործածուէր» (1892,1,6): «Մայր լեզու, որուն պարարտացուցիչ առատ հիւրովն պիտի սնանի դուստրը, պիտի կազմուի նորը, պիտի ոռճանայ ճիւղն» (1895,10,292) և այլն:

Շգրակացություններ

1. «Հանդէս ամսօրեայ» ամսագրում գործածված նորակազմ տերմիններն, ըստ ձևային և հասկացական հիմքի, բաժանվում են երկու խմբի. ա) բովանդակային նորություն արտահայտող տերմիններ, բ) ձևով նոր տերմիններ: Այդ տարբերակումը պայմանավորված է նաև ուսումնասիրության ուղղությունների բնույթով: Պատմահամեմատական լեզվաբանության հարցերին նվիրված հոդվածներում համեմատական մեթոդի և նրա առարկայի բովանդակային նորության թելադրանքով գործածվել են տերմիններ, որ արտահայտում են հասկացական մակարդակում բոլորովին նոր իրողություններ (օրինակ՝ սեպագրերի անվանումներ- *բառագատ, եռածն տառ, բացա-յայտիչ ձեռ* և այլն): Հասկացությունները ձևակերպելիս համեմատաբար ազատ բաորնություն է կատարվել նաև բարբառագիտական հոդվածներում, հատկապես երբ տվյալ բարբառն ուսումնասիրված է առաջին անգամ և տերմինների գործածությունը նախադեպով կարգավորված չէ (*ոճածն բա-յեր, բառ բաղաձայններ, հնչագուրկ բաղաձայններ* և այլն): Այլ ուղղվածու-թյան հոդվածներում նորակազմությունը տարբերակող հիմնական հատկա-նիշը ձևային հակադրությունն է (*նորայօդ բառ- նորելուկ բառ, ձայնատոր տառ- ձայնատառ, բնիկ ձայն- հայաբուն ձայն* և այլն):

2. Հանդեսում հասկացական նությունը, որոշ բացառությամբ, արտա-հայտվում է տեսակային տերմինատարրերի միջոցով. հիմնային տերմին-ներն ու տերմինային բառերը՝ որպես այդպիսին, մինչև հանդեսը գործածվել են: Դրանցից առավել կիրառելիները այն բաղադրող միջուկներն են, որոնց հարաբերությամբ կազմվել են բազմանդամ շարքեր: Բաղադրող այդ տեր-մինները հետևյալն են. *լեզու, այբուբեն, բառ, տառ, արմատ, ձեռ, մասնիկ, գիր, հնչիւն, ձայն, ձայնատոր, բաղաձայն*:

3. Հանդեսի նորակազմ տերմինները հիմնականում բառակապակցական են և երկանդամ (*բաղաձայնավերջ բուն*), սակավ են եռանդամ կառույցները (*բաղաձայններում անձայնատոր շարք*): Ավելի մեծ թվով բաղադրիչ ունեցող կիրառությունները տերմինի արժեք հազվադեպ են դրսևորում (*միջին լե-զուական-ատամնական բառ գիր*), առավելապես բնորոշվում են որպես տեր-մինային իմաստի բառային նկարագրություններ (*իրարու ազգակից խնամի մերձատոր լեզուները ներկայացրնող ձեռեր*):

Բառաբարդման միջոցով հանդեսում ձևավորվել են տերմինային իսկա-կան բարդություններ, որոնց բաղադրիչների ներքին հարաբերությունն ունի սովորական շարադասություն՝ ստորադասական է, լրացյալի վերջադաս

վիլլըքով: Ըստ արմատական տերմինատարրերի քանակի՝ բայա նորակազմ տերմինները երկանդամ են, ըստ տերմինատարրերի միացման միջոցի՝ հիմնականում հոդակապավոր (*արմատականի, յառելատառ* և այլն), երբեմն անհոդակապ (*վանկեզր, բառառաջ* և այլն) կամ կցված գծիկով (*պատկեր-գրեր, արմատ-ծե* և այլն):

Հայերենում բավական գործուն *-ութիւն, -ական* ածանցները հանդեսում ևս տերմինակազմությամբ մասնակցում են ակտիվորեն: Ածանցման նախատիպ հիմքերից առավել կենսունակ են VR1 (*հագագախօսութիւն*), AR1 (*ընտրողական խնամութիւն*), NR2 (*բառական-գիր*) մասնակադապարները:

4. Նորակազմ տերմինների տերմինաբանական և ձևաբանական գործուն մասնակադապարներն ունեն օրինաչափ ստորադասություն և կազմ: Սեռային տերմինատարրը՝ տերմին թե ոչ տերմին, հետադաս է և որոշչային կամ հատկացուցչային հարաբերությամբ բաղադրվում է տեսակային տերմինատարրին (*կարմրագիր, քրմագիր, բառերու ցեղափոխութիւն*): Ձևաբանական կազմը ևս բնդիանրանում է նշված շարահյուսական կապերով (*Գ+Գ տառաձայն, Ա+Գ աղօտ բաղաձայն, Գ+Ա+Գ լեզուացեղներու նախնական տիպար* և այլն):

Բազմանդամ կառույցները չեն կայունանում որևէ ընդհանրական կադապարի ներքո. քանի որ ունեն տերմինային և ձևաբանական ներքին հագեցած հարաբերություններ, հետևաբար՝ մասնակադապարների առատություն և դրանց իրացումների հազվադեպություն:

5. Գրաբարյան բառեր հանդիպում են բառակապակցական տերմիններում՝ հիմնականում դիպվածային, ոչ կայուն գործածությամբ և առավելապես առանց տերմինային իմաստավորման (*ցայնվայր* գրութեան ոճ): Գրաբարյան կարող են լինել նաև ածանցման հիմքերը: Այս դեպքում ներքին բաղադրիչը լիարժեք մասնակցում է տերմինային իմաստի արտահայտմանը (*ՆՀԸ՝ երագագիր-ՀԱ՝ երագագրական* նշան):

6. Լեզվաբանական տերմինները հանդեսում հիմնականում չունեն բառային հարաբերություններից լիարժեք ինքնուրույնություն՝ կայունացած միաձև գործածությամբ: Սա նախ դրսևորվում է հոմանշությամբ: Նկատելի է, որ մի կողմից տերմինների հոմանշակիր բաղադրիչներն արտահայտում են ա) տեսակային հարաբերություն (*տառագիր- նշանագիր*), բ) սեռային հարաբերություն (*հագագաբանութիւն- հագագախօսութիւն*), գ) սեռատեսակային հարաբերություն (*ձայնատառ այբուբենը- ձայնական այբբենարան*), մյուս կողմից՝ տերմինների հոմանշությունն արտահայտվում է կառուցվածքային տարբերությամբ. ա) ածանցի հավելումով (*պարզ արմատ- պարզական արմատ*), բ) տարածանց հարաբերությամբ (*շեշտականութիւն- շեշտաւորութիւն*), գ) բառակապակցական և բառաբարդված տարբերակների

առկայությամբ (*դողդողուն տառեր- դողդողատառեր*), այլև կից գործածությամբ՝ միևնույն նախադասության մեջ կամ հոդվածում («Մշոյ եւ թէ՛ Վանայ բարբառներն երկու տարբեր գառառականներ կը կացուցանեն...»):

Ընդհանուր բառապաշարում գոյություն ունեցող բառային հարաբերություններից հանդեսի լեզվաբանական տերմիններին փոխանցվել է մաս բազմիմաստությունը, ընդ որում ներհամակարգային բնույթի (*ձայնանիշ՝ խեթական գրի նշան, սեպագրի ձայնավոր նշան, ձայնավորներն արտահայտելու սղագրական նշան, համաձայնություն՝ առնմանում, շարահյուսություն և այլն*):

7. Հանդեսի տերմինագործածությունը բնորոշ է մրցակից ձևերի առկայությամբ: Դրանք կայաղ են ունենալ կայուն դրսևորումներ, երբ ա) հոմանիշը տրված է փակագծում՝ որպես իմաստային լրացում (*փոխազրույթին (տառադարձություն)*), բ) հոմանիշ տարբերակները գործածվել են «կամ»-ով շաղկապված (*խնամի կամ մերձադուր լեզուներ*):

8. Ոչ ճշգրիտ ձևերից հրաժարումը կատարվում է դրանց անմապատկահարմարության հիմնավորումից հետո. տերմինի գիտականության հիմնական սլաշմանը՝ իմաստային ճշգրտությունը, թեև ձևաիմաստային տարբերակայնությամբ վնասված է, բայց որպես տեսական սլահանց գիտակցված ու առաջադրված է: Տերմինի ներքին ձևի ու հասկացության համապատասխանությունը՝ պատճառաբանվածության հատկանիշը, բառագործածական ուղղորդումներում հաճախ է նշվում:

9. Հանդեսի գիտական լեզուն, ունենալով ընդհանուր լեզվական հիմք, արտացոլել է նորմավորվող աշխարհաբարի չմիօրինականացված որոշ գործածություններ: Ժամանակաշրջանին հատուկ լեզվական իրողություններից հանդեսին փոխանցվել են. ա) գուգաձևություններ՝ առաջացած աշխարհաբար և գրաբար քերականական ձևերի համատեղ կիրառումից (*փոխառնուած բառ- փոխառեալ բառ*), բ) ուղղագրական տարբերակներ՝ հատկապես գծիկի անկանոն գործածությամբ (*ձայնատորաց- ներդաշնակություն, ձայնատորաց ներդաշնակություն*), մաս գրային տարբերակներ (*կետադրություն, կետադրություն*):

10. Բառային հարաբերությունները կանխտոշել են մաս հանդեսի գիտական լեզվի ոճական անմիօրինակությունը: Հոդվածներում հաճախ զուգուղված են հիմնավորումն ու պատկերավորումը, ինչի հետևանքով տերմիններն ստացել են արտահայտչական հատկանիշներ (*դիրտադարձ, ծաղկայից լեզու*) կամ գործածվել են գեղարվեստականացված բառային միջավայրում (*«այնպիսի վիրահատութեանց եւ անդամահատութեանց սկսան, որ բոլորովին անիրան ու անկերպարան դառնալու վտանգի մէջ ինկաւ խեղճ աշխարհաբարը»*): Ըստ այդմ հանդեսում գիտական անխառն ոճ ձևավորված չէ, և

վերլուծություններն ու տեսակետները հաճախ ներկայացված են ոճական խառնուրդով:

Այսպիսով, «Հանդես ամսօրեայի» լեզվաբանական տերմիններին քննորոշ հատկանիշներն են՝ նորակազմությունների՝ հիմնականում պատմասիամեմատական ուսումնասիրության աղբյուր, ձևային տարբերակայնության միտում, բառային հարաբերությունների ազդեցությամբ տերմինների ոչ կայուն. առավելապես հոմանշային գործածություն, ոճական ազատություն, ներքին փոխառությունների տերմինային արժեքի սահմանափակ կիրառում, տերմինի մենիմաստության տեսական պահանջ և կիրառության ոչ լիարժեք համապատասխանություն, տերմինաբանական, ձևաբանական կադապրների, ածանցման մախատիպ հիմքերի օրինաչափ դրսևորում:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՆԿ

«Հանդես ամսօրեայի» լեզվաբանական հոդվածների

Ադոնց Ն.

(մտնիս.) Տեր Աբրահամեան Յ., Նոր բառգիրք հայերեն գրաբարե՝ աշխարհաբար լեզուի, ռուսերեն թարգմանությամբ, 1898, ք.10-11, էջ 323-327:

Ալիմեան Հ. Ն., նույնն է՝ Ն.Ա., Հ.Ն.Ա.

(մտնիս.) Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, 1914, ք.2, էջ 126-128:

(մտնիս.) Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, 1914, ք.2, էջ 124-126:

Բառեր Տիմոթէոս Կուզի հականառնության մէջ, *այլեւայլ*, 1908, ք.12, էջ 383-384:

Վրթանէս վարդապետ Քերդող եւ իւր երկասիրութիւնները, *մատենագրական*, 1910, ք.1, էջ 8-11, ք.2, էջ 37-46:

Օտար բառեր Չաքարիա Գնունեցոյ տաղերուն մէջ, *այլեւայլ*, 1910, ք.1, էջ 30-32:

(մտնիս.) Fink Fr., Atlas zum Katalog der armenischen Handschriften, 1907, ք.5, էջ 143-145:

Աճառեան Հ.

(մտնիս.) Արթինեան Յովհ., Տունկերը եւ անոնց հայերեն անունները, 1908, ք.12, էջ 379-381:

Թղաւարերէն եւ հայերէն, *լեզուաբանական*, 1912, ք.1, էջ 37-40:

Խ եւ Կ ձայներուն լծողութիւնը, *լեզուաբանական*, 1909, ք.5, էջ 159-160:

Խաղդերէն ic եւ e եւ հայերէն ե եւ ձայները, *հնախօսական*, 1903, ք.3, էջ 67-69:

Խաղդիերէնը երկար ձայնաւորներ ունէ՞ր, *լեզուաբանական*, 1913, ք.8, էջ 491-496:

Խաղդիերէնը o ունէ՞ր, *հնախօսական*, 1907, ք.3, էջ 93-94:

Հայերէն ստուգաբանութիւններ*, *լեզուաբանական*, 1908, ք.4, էջ 120-124:

Հայերէն նոր բառեր նորագիտ մնացորդաց գրոց մէջ, *մատենագրական*, 1908, ք.7, էջ 193-202:

Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի հականառնության մէջ, *մատենագրական*, 1908, ք.12, էջ 367-372, 1909, ք.2, էջ 44-47, ք.5, էջ 148-153:

Հայերէնի բնածայն եւ կրկնատր բառերը (630 բառի քննութիւն), *լեզուաբանական*, 1899, ք.7, էջ 202- 207, ք.8, էջ 232- 236:

Հայկականք, *բառաբանական*, 1914, ք.9, էջ 563-566:

* Հ. Վրթ. Բունկուցյանի «Ընդհանուր ցանկ «Հանդես ամսօրեայ» ուսումնաբերքի 25 տարիներուն (1887-1911)» մատենագիտական ցանկում նշված է «ստորագրութիւններ» «ստուգաբանութիւնները» փոխարեն, տե՛ս ն. տ., ք. 6, էջ 377:

Հայոց գրերը՝ *մատենագրական*, 1910, ք.2, էջ 46-52, ք.6, էջ 171-176, ք.7, էջ 212-216, ք.10, էջ 311-315, 1911, ք.4, էջ 231-242, ք.6, էջ 348-365, 1912, ք.3, էջ 134-147, 1913, ք.3, էջ 137-158, 1914, ք.5, էջ 299-319, 1915, ք.1-12, էջ 135-172:

(*մտնիսս.*) Նավասարդեանց Տ., Բառագիրք Արարատեան քարառի (մօտ 5000 բառ ու ոճ), 1903, ք.12, էջ 382-383:

Նոր ձայնական օրենք մը նձ=զ, *լեզուաբանական*, 1905, ք.11, էջ 346:

Նուիրակ եւ Շարսաղար բառերը, *լեզուաբանական*, 1910, ք.4, էջ 119-120:

(*մտնիսս.*) Պեղերսըն Հ., Նպաստ մը հայ լեզուի պատմութեան, 1904, ք.10-11, էջ 335-336:

Զմականներու կոկորդական մնալը, *լեզուաբանական*, 1905, ք.8, էջ 254:

1.Օ՛ն, 2. Չորեքշաբթի. *լեզուաբանական*, 1906, ք.5, էջ 129-130:

(*մտնիսս.*) Maxudiantz M., Le parler armenien d'Akn, 1912, ք.4, էջ 248-253:

(*մտնիսս.*) Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 1903, ք.4, էջ 105-110:

Այծեամն

Նմոյշ մը Արամօ գիւղին հայ լեզուէն, *թղթակցութիւն*, 1907, ք.1, էջ 27:

Այտընեան Հ. Ա.

Գոյներու բաղադրութեան եղանակ ըստ հնոց, *հնագիտական*, Յաւելուած, Տեղեկութիւնք հաստուածիս այլեայլ բառերուն վրայ, 1895, ք.12, էջ 370-371:

(*մտնիսս.*) Մէլէ Ա., Հետազօտութիւնք ի վերայ համեմատական համաձայնութեան հայերէն լեզուի, 1898, ք.12, էջ 377-379:

Նորագոյն հայերէն լեզուն. *բանասիրական*, 1887, ք.9, էջ 133-135:

Տառադարձութեան խնդիր, *բանասիրական*, 1888, ք.5, էջ 73-77, ք.6, էջ 97-103, ք.7, էջ 117-122, ք.9, էջ 149-155, ք.10, էջ 165-168, ք.12, էջ 208-213, 1889, ք.3, էջ 37-40:

Աւգերեան Հ. Ն., նույնն է՝ Հ.Ն.Ա.

Ալեմալուի սեպածեւ արձանագրութիւնը, *հնախօսական*, 1894, ք.3, էջ 69-71:

Այրարատեան արձանագրութիւնը, *հնախօսական*, 1894, ք.5, էջ 140-141:

Վաղեմար Բէլկին նոր գտած սեպագիր արձանագրութիւնները, *հնախօսական*, 1893, ք.1, էջ 23-25:

Ուսուցչապետ Լեման՝ Վաղեմար Բէլկին գտած սեպագիր արձանագրութեանց վրայօք, *հնախօսական*, 1893, ք.2, էջ 47-50, Շամիրամ-սու, Քեշիշ-կէօլ եւ Թօփրազ գալէ, ք.3, էջ 84-87:

Անտիսեան Հ. Ա.

Հայերէն Աստուած բառը, *լեզուաբանական*, 1907, ք.9, էջ 277-285:

Ուղղագրութեան խնդրոյ առթիւ, *գրական*, 1908, ք.11, էջ 321-324, 1909, ք.1, էջ 21-24:

(*մտնիսս.*) Finck Fr., Die Sprache der armenischen Zigeuner, 1908, ք.3, էջ 87-88:

Նշվ. մատենագիտական ցանկում այս հոդվածաշարը հիշատակված չէ, միայն դրա երկու հատվածի տպագրության տարեթիվն ու էջերն են տեղ գտել «Հայերեն ստորագրութիւններ» վերնագրի ներքո, տես մ. տ.:

Բաղրուպանեան Ղ. (Պաղրուպանեան Ղ.)

Լեզուսբանասկանք, *լեզուսբանասկանք*, 1908, ք.10, էջ 312-315, ք.11, էջ 341-344, 1910, ք.3, էջ 93-94, ք.4, էջ 118-119:

Լիւկերէնն եւ հայերէնը ըստ Sophus Bugge-ի, *լեզուսբանասկանք*, 1907, ք.4, էջ 115-117, ք.6, էջ 182:

Ստուգաբանական հետազոտութիւնք, *լեզուսբանասկանք*, 1903, ք.5, էջ 150-152, ք.7, էջ 220-222, ք.12, էջ 380-382, 1904, ք.3, էջ 94, ք.6, էջ 184-185, ք.10-11, էջ 334, 1905, ք.5, էջ 158-159, ք.8, էջ 253-254, ք.10, էջ 316-319, 1906, ք.1, էջ 23-25, ք.2, էջ 55-58, ք.3, էջ 71-73, ք.6, էջ 172-174*, ք.11, էջ 341-347, ք.12, էջ 366-368, 1907, ք.1, էջ 16-17, ք.3, էջ 89-90, ք.10, էջ 303-306, 1908, ք.1, էջ 23-27, ք.3, էջ 85-86, ք.5, էջ 151-155, ք.6, էջ 186-189, ք.7, էջ 212-215, ք.8, էջ 245-247, ք.9, էջ 274-276:

Բասմաջեան Կ. (Պասմաճեան Կ.)

Երկու խօսք Նախակիլիկեան հաքեան նշանագրով կնիքներու մասին, *հնախօսականք*, 1899, ք.2, էջ 51-52:

Ետրուակացիք եւ իրենց նորագիտ յիշատակագիրն, *հնախօսականք*, 1892, ք.4, էջ 101-102:

Կեղծ կնիք մը, *հնախօսականք*, 1899, ք.6, էջ 186:

Հաքեան արձանագրութեանց մասին դիտողութիւնք, *հնախօսականք*, 1894, ք.12, էջ 383-384:

Բիւզանդացի Ն.

Նորայր Ն. Բիւզանդացի առ մեծարգոյ Հ. Ներսէս Ալիմեան, *բղբակցութիւն*, 1908, ք.5, էջ 155-156:

Բուզգէ Ս., Պուկէ Ս.

Հայերէն լեզուին գորարէնի** վրայ ըրած ազդեցութիւնը, քրգմ. Ա. Վոյստրովեան, *լեզուսբանասկանք*, 1895, ք.8, էջ 227-231, ք.9, էջ 259-261:

Բունկուցեան Հ. Վրթ.

(մտնխա.) Եմինեան ազգագրական ժողովածու, հտ. Ը., Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, 1912, ք.11, էջ 686-687:

Գաքինեանց Վ.

Albaniaca (Աղուանք)***, *լեզուսբանասկանք*, 1907, ք.6, էջ 187-189:

Գաքրիէլեան Մ.

Ալկմայ գատուսբարբառը****, *լեզուսբանասկանք*, 1908, ք.6, էջ 181-186, ք.7, էջ 207-212, ք.8, էջ 248-252, ք.9, էջ 279-288, ք.10, էջ 315-319, ք.11, էջ 344-350, 1909, ք.2, էջ

* Այս եւ մախորդ էջերը (71, 172) Հ. Վրթ. Բունկուցեանի ցանկում բվագրված են 91, 142 (տե՛ս ն. տ., ք. 8, էջ 508), իսկ ՀԱ-ի 1907թ. տպագրութեան «Յանկ նիւրց»-ում՝ 41, 142:

Նշվ. մատենագիտական ցանկի մեջ «գորարէնի» փոխարէն գրված է «հաքերէն».

տե՛ս ն. տ., ք. 6, էջ 380:

*** Այս հոդվածը Հ. Վրթ. Բունկուցեանի ցանկում բվագրված չէ, տե՛ս ն. տ.:

**** Հոդվածաշարի մասերից մեկը (1910, ք. 12, էջ 365-368) Հ. Վրթ. Բունկուցեանի մատենագիտական ցանկում նշված չէ:

54-61, ք.3, էջ 91-96, ք.4, էջ 120-124, ք.5, էջ 155-159, ք.6, էջ 190-192, ք.7, էջ 221-224, ք.8, էջ 252-256, ք.9, էջ 267-273, ք.12, էջ 376-379, 1910, ք.3, էջ 91-93, ք.4, էջ 114-118, ք.8, էջ 234-238, ք.10, էջ 298-301, ք.11, էջ 343-347, ք.12, էջ 365-368, 1911, ք.2, էջ 103-109, ք.7, էջ 410-419, ք.10, էջ 585-596:

Հին դասական հայերենն էւ արդի գաւառաբարբառները, *լեզուաբանական*, 1912, ք.1, էջ 15-37:

Գագանճեան Յ.

Եղովկիոյ Հայոց գաւառաբարբառը, *լեզուաբանական*, 1898, ք.4, էջ 97-103, ք.5, էջ 146-147, ք.6, էջ 174-175, ք. 7, էջ 208-210, ք.10-11, 298-306, 1899, ք.1, էջ 11-14, ք.2, էջ 46-49, ք.5, էջ 145-147, ք.6, 176-177, ք.7, 207-210, 1909, ք.11, էջ 336-341:

Սահմանական ներկան հայ բարբառներու մէջ, *լեզուաբանական*, 1910, ք.2, էջ 55-57:

Գաթրճեան Հ. Յ.

Մաշտոցեան լեզուն, *գրական*, 1913, ք.12, էջ 719-723:

Գալէմքեարեան Հ. Գր., նույնն է՝ Հ.Գ.Գ.

Դիտողութիւնք Ն. Մառի յօդուածին վրայ, 1891, ք.9, էջ 271-272:

Ոսկեդարեան ու ոչ ոսկեդարեան հայերէններ, *գրական*, 1903, ք.9, էջ 257-272:

Գրէն Ա.

Ստուգաբանութիւն Կովկաս անուան, թրգմ. Խ. Յովհաննիսեան, *բանասիրական*, 1894, ք.2, էջ 33-34, խմբ. էջ 34-35:

Եւնսէն Պ.

Հատերէն եւ հայերէն, *հնախօսական*, 1904, ք.6, էջ 180-184, ք. 9, էջ 271-276:

Հետիտներն ու հայերը, թրգմ. Գր. Գալէմքեարեան, *պատմական*, 1897, ք.11, էջ 321-325, ք.12, էջ 362-367, 1898, ք.8- 9, էջ 225-239, ք.10- 11, էջ 327-328:

Նոյազլուտ հաթեան արծանագրութեան առթիւ, *հնախօսական*, 1894, ք.11, էջ 335:

Եղիայեան Հ. Ս.

Ակնարկ մը ընդհանուր գրերու պատմութեան վրայ, *պատմական*, 1914, ք.1, էջ 21-41:

Երկաթ Ա. քհ.

«Ընդ» նախդիրը եւ անով կազմուած քանի մը բառեր, *լեզուաբանական*, 1912, ք.11, էջ 656-657:

Զաքարեան Հ. Պ., նույնն է՝ Հ. Պ. Զ.

(մտնիս.) Թընգըր Ա. եւ Սինապեան Գ., Dictionnaire francais-turc des termes techniques etc.par A. Tinghir et Sinapien., Գաղղ.- տաճկ. բառարան արուեստական եւն եւն բառերու, 1896, ք.9, էջ 280-281:

(մտնիս.) Հիմղեան Յ. Թ., Հիմնական նոր եղանակ ֆրանսերէն շարադրութեան, 1890, ք.9, էջ 219:

Հ. Վրթ. Բունկուցյանի ցանկում նշված էջի 97 թվագրումը վրիպակ է (տե՛ս մ. տ., ք. 6, էջ 380):

(մտնիս.) Պոնտացի Մխ., Մայրենի լեզու, 1910, ք.9, էջ 286-287:

Թիրեաքեան Յ.

«Մեսրոպ» անուան շուրջը, *այլեսայք*, 1914, ք.4, էջ 245-246:

Նորիակ, շարսաղար, *լեզուաբանական*, 1912, ք.7, էջ 424-428:

«Պատգարհեք», *բանասիրական*, 1912, ք.5, էջ 286-290:

(մտնիս.) Վարդանեան Ա., Բառաքննական դիտողութիւններ, 1914, ք.1, էջ 55-58:

Թուխիկեան Հ. Յ., նույնն է՝ Հ.Յ.Թ.

(մտնիս.) Գաբամանեան Ա. Նոր բառագիրք հայերէն լեզուի, 1892, ք.9, էջ 277-280:

Գիր եւ գրութիւն, *լեզուաբանական*, 1892, ք.1, էջ 6-10:

(մտնիս.) Դաթեան Ա., Տարրական քերականութիւն, 1891, ք.12, էջ 370-372:

(մտնիս.) Նուպարեան Մ., Բառարան ֆրանսերէն հայ աշխարհիկ, 1892, ք.6, էջ 179-183:

(մտնիս.) Պօզանեան Բ. Մ., Տեսական եւ գործնական քերականութիւն աշխարհիկ լեզուի, 1892, ք.5, էջ 148-151:

Թումանեան Հ. Յ., նույնն է՝ Հ.Յ.Թ.

Ա. Շվայկեր-Լերիտենֆելտ եւ երկիր հայոց, *մանտենագրական*, 1888, ք.1, էջ 8-11:

Յ. Հանուշ Լեհացի հայագէտ եւ Կալիցոյ հայոց գաւառալեզուն, *մատենագրական*, 1887, ք.2, էջ 22-24:

Թուրչայեան Հ. Մ., նույնն է՝ Հ.Թ.Մ.

Յանձնելի դասագիրք, *դպրոցական*, 1887, ք.9, էջ 138-139:

Լիսիցեան Ստ.

(մտնիս.) Ն. Մառի նոր ուսումնասիրութիւնները, 1911, ք.11, էջ 696-700, ք.12, էջ 749-759:

Խալաթեանց Բ.

(մտնիս.) Լիդեն Ե., Հայերէն ուսումը, 1906, ք.11, էջ 333-337, Հայերէն ուսումնասիրութիւնը, 1908, ք.3, էջ 86*-87:

Մի դպիմեայ պսակ Պ. Կ. Բասմաջեանի ճակատին, *ընդդիմախօսութիւն*, 1902, ք.12, էջ 396-399:

Խմբագր.

Ծաղկեպտունց, *այլեսայք*, 1. Պրոֆ. Հ. Պեղերսընի պատասխանները, 2. Դոկտ. Կարստ- ուսուցիչ հայագիտութեան, 1906, ք.4, էջ 128:

Հայերէնի դիրքն ու կարեւորութիւնը համեմատական լեզուագիտութեան մէջ, *լեզուագիտական*, 1892, ք.7, էջ 215:

Խոշեան Ն.

Պոնտական գաւառաբարբառներէն նշխարք, *բոբականութիւն*, 1895, ք.6, էջ 183-186:

Կարստ Յ.

Հայերէնի -եր, -նի, -ուի, -տի յոգնակերտները, քրգմ. Բ. Պիլեզիքեան, *լեզուաբանական*, 1903, ք.1, էջ 10-14:

* Նույն ցանկում էջ 36 թվագրումը վրիպակ է (տե՛ս ն. տ., ք. 7, էջ 442):

Կէտիկեան Հ. Թ., նույնն է՝ Կ.

Ածուխի թէ ածուղ, *լեզուաբանական*, 1905, ք.11, էջ 346-348:

Լեզուական խնդիրներ, *գրական*, 1902, ք.7, էջ 199-201:

Ծաղիկփունջ, *այլեսայր*, Արմատական բառերու բառարան, 1901, ք.10-11, էջ 347, Բառաստեղծութիւն, թէ բառագեղծութիւն, 1901, ք.10-11, էջ 350-351, Պրոֆ. Ա. Մէյէ-հայերէնի ուսուցիչ, 1903, ք.2, էջ 63, Գրական նորութիւնք, 1903, ք.7, էջ 223-224, Հայերէն փոխառեալ բառեր, 1903, ք.11, էջ 350-351, Հատեան-հայկական նորագիտ արծանագրութիւն մը, 1904, ք.2, էջ 62-63, Գրական նորութիւններ, 1904, ք.6, էջ 192, «Հին հայկական տեղոյ անունները», 1904, ք.9, էջ 285-286, «Հայերէն եւ դրացի լեզուները», 1904, ք.12, էջ 380, Հին հայերէնի ծայնագիտութեան մասին, 1904, ք.12, էջ 384, Մէյէի «Ռուրագծին» եւ Թովչեանի «Սկզբնատրութիւն հայ վանականութեան» վրայ գերմ. գրութիւնք, 1905, ք.2, էջ 63, Հին հայերէնի «ընդ» նախադրութիւնք, 1905, ք.3, էջ 96, Հայ. «սայր» բառը, 1905, ք.6, էջ 191:

Հիւրշմանն եւ իւր նոր «Հայկականք»-ը, *լեզուաբանական*, 1901, ք.12, էջ 359-363:

Տօնէլեան Չ., Գործնական քերականութիւն արդի աշխարհաբարի, *այլեսայր*, 1897, ք.12, էջ 377:

Կրէից-Գրայֆէնհորստ Ֆր. (Գրէից-Գրայֆէնհորստ Ֆր.)

Հայ-թարգմանքներ Լեւոստանի մէջ, թրգմ. Ա. Վարդանեան, *լեզուաբանական*, 1912, ք.12, էջ 706-712:

Հայերէն փոխառեալ բառեր թուրքերէնի մէջ, թրգմ. Ա. Վարդանեան, *լեզուաբանական*, 1911, ք.5, էջ 258-268:

Հաճեան Հ. Մ.

Տայոյ աշխարհի խոտրջոյ գաւառաբարբառը, *լեզուաբանական*, 1915, ք.1-12, էջ 9-17:

Հիւաշման Հ.

Հայկական յատուկ անուանք, թրգմ. Յ. Տաշեան, *լեզուաբանական*, 1894, ք.6, էջ 175-178, ք.7, էջ 208-211:

Հայկականք, թրգմ. Յ. Տաշեան, *լեզուաբանական*, 1892, ք.12, էջ 353-356:

Հայկականք, թրգմ. Ղ. Բաղրուպանեան, *լեզուաբանական*, 1907, ք.6, էջ 183-187, ք.8, էջ 248-252:

Հին հայոյ տեղոյ անունները, թրգմ. Բ. Պիլէգիբեան, *աշխարհագրական*, 1904, ք.10-11, էջ 289-304, ք.12, էջ 372-379, 1905, ք.1, էջ 27-28, ք.2, էջ 53-63, ք.3, էջ 79-92, ք.4, էջ 122-127, ք.6, էջ 186-189, ք.8, էջ 245-252, ք.10, էջ 299-308, ք.12, էջ 376-382, 1906, ք.1, էջ 7-8, ք.3, էջ 79-86, ք.5, էջ 153-158, ք.6, էջ 187-191, ք.7, էջ 221-223, ք.8, էջ 248-250, ք.10, էջ 310-318, ք.12, էջ 361-366, 1907, ք.1, էջ 14-16, ք.2, էջ 54-60, ք.6, էջ 177-182, ք.7, էջ 211-212:

* Հ. Վրթ Բունկուցյանի ցանկում՝ էջ 49 (տես ն. տ., ք. 7, էջ 448):

Սեմական փոխստեղ բառեր հին հայերենի մէջ, թրգմ. Յ. Տաշեան, *լեզուաբանական*, 1893, ք.1, էջ 14-18, ք.3, էջ 81-84, ք.5, էջ 148-150, ք.6, էջ 187-189, ք.7, էջ 213-215, ք.8, էջ 253-255, ք.9, էջ 262-266:

Մառ Ն.

Սի տալանաբար Եօրնգետից հայերեն-ասորերեն արձանագրութեամբ, թրգմ. Ն. Ադոնց, *հնախօսական*, 1895, ք.2, էջ 33-36:

Սիսիրար անուան եւ միսիրարեալ բայի ստուգաբանութիւնը, թրգմ. Վ. Գաբի-նեանց, *լեզուաբանական*, 1907, ք.1, էջ 17-18:

(մտմխս.) Հայկական տեղեկութիւնը, 1893, ք.11, էջ 338-339:

Հայոց «սեպու» եւ վրացոց «սեփէ» բառերի ստուգաբանութիւնը, թրգմ. Տէր-Մով-սէսեան Փ., *լեզուագիտական*, 1892, ք.6, էջ 164-165:

Ճաներէն (լագերէն) լեզուի քերականութիւն, թրգմ. Լ. Լիսիցեան, *լեզուաբանա-կան*, 1912, ք.10, էջ 598-616:

Մատիկեան Հ. Ա.

Ուրարտական երկու անուններ հայ մատենագրութեան մէջ, *պատմական*, 1914, ք.12, էջ 706-708:

Մարկուարտ Յ.

Պատմութիւն հայերէն նշանագրերու եւ վարոց Ս. Մաշտոցի, թրգմ. Ա. Վարդա-նեան, *մատենագրական*, 1911, ք.10, էջ 530-544, ք.11, էջ 673-684, 1912, ք.4, էջ 200-216, ք.11, էջ 657-666, ք.12, էջ 742-750:

Մաքստէանց Մ.

Ալկմայ բարբառի փոխ առած բառերը օտար լեզուներից, *լեզուաբանական*, 1910, ք.2, էջ 57-63:

Չօկերէնի «ըման» շաղկապը, *լեզուաբանական*, 1909, ք.9, էջ 273-274:

Մէլիք-Դաւիթ պէկ Ս. (Մէլիք Դաւիթ-Բէկ Ս.)

Արաբկիրի գաառաբարբառը, *լեզուաբանական*, 1900, ք.8, էջ 248-252, ք.9-10, էջ 295-303, ք.11, էջ 328-335, ք.12, էջ 362-367, 1901, ք.2, էջ 36-42, ք.5-6, էջ 173-177, ք.7, էջ 213-217, ք.8, էջ 235-238, ք.10-11, էջ 338-342, 1902, ք.1, էջ 19-24, ք.2, էջ 48-53, ք.6, էջ 177-179, ք.7, էջ 219-224, ք.8, էջ 268-271, ք.10, էջ 326-330, ք.11, էջ 359-363, ք.12, էջ 393-396, 1903, ք.2, էջ 47-49, ք.4, էջ 125-127, ք.7, էջ 218-220, ք.11, էջ 335-338:

Չայնական ուսումնասիրութիւն Մարաշի բարբառին, *լեզուաբանական*, 1896, ք.2, էջ 43-45, ք.4, էջ 113-114, ք.8, էջ 229-232, ք.12, էջ 354-357:

Մէյէ Ա.

Հայերէն աւետարանի բանի մը հին ձեռագրաց գրչութեան վրայ դիտողութիւններ, թրգմ. Կոնստանտին Խ., *հնագրական*, 1904, ք.7, էջ 193-196, ք.8, էջ 253-256:

Հայերէնի մէջ փոխստեղ իրանեան բառերու վրայ, թրգմ. Մ. Սրապեան, *լեզուա-գիտական*, 1914, ք.6, էջ 339-350:

Հին հայերէնի լատիներէն ջրած բանի մը փոխառութիւններու վրայ ենթադրու-թիւններ, թրգմ. Մ. Սրապեան, *լեզուագիտական*, 1914, ք.4, էջ 228-232:

Քանի մը հայերէն բառերու ստուգաբանութիւն, քրգմ. Յ. Տաշեան, *լեզուաբանական*, 1891, ք.2, էջ 44:

Մենելիշեան Հ. Գ., նույնն է՝ Հ. Գ. Մ., Թաթուլ Վանանդացի, Բնապատում:

Աշխարհաբար լեզուին արդի վիճակը, *լեզուաբանական*, 1895, ք.9, էջ 262-264, ք.10, էջ 291-293, ք.12, էջ 357-360:

Արդի լեզուագիտութիւնը, *լեզուաբանական*, 1896, ք.1, էջ 1-4, ք.2, էջ 45-47, ք.3, էջ 76-77, ք.5, էջ 150-152, ք.6, էջ 165-168, ք.8, էջ 225-229, ք.10, էջ 292-294, ք.11, էջ 321-323, 1897, ք.1, էջ 21-24, ք.3, էջ 69-72, ք.5, էջ 153-155, ք.7, էջ 212-214, ք.10, էջ 302-304, 1898, ք.3, էջ 78-81, ք.5, էջ 144-146, ք.8-9, էջ 252-255, ք.10-11, էջ 294-298, 1900, ք.1, էջ 12-16, ք.3, էջ 68-72, 1901, ք.5-6, էջ 177-180:

Դիտողութիւն մը, *այլեւայլք*, 1912, ք.3, էջ 177-178:

(*մտնիսս.*) Լուսինեան Գր., Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, Ա հտ., 1901, ք.1, էջ 16-18, Բ հտ., 1903, ք.9, էջ 272-274:

Ծաղկեփունջը, *այլեւայլք*, Գաւառական բառեր, 1896, ք.2, էջ 63, ք.8, էջ 253, Գաղղիներէն բառագիրք մ'առփիւ, ք.8, էջ 253-254, Սահմանական ներկան գաւառաբարբառներու մէջ, 1897, ք.1, էջ 30, Պրոֆ. Հիւքշմանի հայերէն քերականութեան երկրորդ մասը, ք.2, էջ 59, Մահուեսի- ժողովրդական ստուգաբանութիւն, ք.4, էջ 125, Պրոֆ. Մառ, ք.6, էջ 187, Ուղղագրութեան խնդիր մը, ք.7, էջ 219-220, Յատուկ անուններու ստուգաբանութիւն. ք.10, էջ 283, Լեզուի խնդիրները, ք.10, էջ 319, Վանայ արձանագրութիւններու լեզուն, ք.11, էջ 350, Համեմատական հետազոտութիւն, 1898, ք.1, էջ 26, Գրուգներու գիրը, ք.1, էջ 29, Ըսփոն՝, թէ սքփոնէ, ք.5, էջ 156, «Բիւրակն» լրագիր եւ Ա. Մէյէի Հետազոտութիւնք, ք.12, էջ 382:

Հայ լեզուի ուղղագրութիւնը, *լեզուաբանական*, 1910, ք.5, էջ 139-143, ք.6, էջ 177-179:

Հայերէն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը, *լեզուաբանական*, 1887, ք.3, էջ 40-43:

(*մտնիսս.*) Հայերէն քերականութիւն ի Հիւքշմանէ, Մասն Ա, Հայերէն ստուգաբանութիւն, Հատուած Ա, Հին հայերէնի մէջ պարսկերէն եւ արաբերէն փոխառեալ բառեր, 1896, ք.6, էջ 182-184, Հատուած Բ, Հին հայերէնի մէջ ասորերէն եւ յունարէն փոխառեալ բառեր եւ բնիկ հայերէն բառերը, 1897, ք.8, էջ 243-249:

Հայերէնի «գինի» բառին ծագումը, *լեզուաբանական*, 1896, ք.10, էջ 289-292:

Հայերէնի դէմ յանդգնութիւն մը, *լեզուաբանական*, 1910, ք.4, էջ 113-114:

(*մտնիսս.*) Հանդէս հայագիտութեան, 1902, ք.6, էջ 167-169:

«Հերիսայ, կասկ եւ ձէթ» բառերն, *լեզուաբանական*, 1889, ք.8, էջ 158-159:

Հիւքշման եւ Արեւմտ. հայ արտասանութիւն, *բանասիրական*, 1888, ք.7, էջ 122:

(*մտնիսս.*) Ծաշակ ոսկեղէն դպրութեան, 1888, ք.9, էջ 158-160:

(*մտնիսս.*) Միսքեան Յովհ., Գանձարան հայերէն լեզուի ճոխութեանց, 1912, ք.2, էջ 78-79:

(*մտնիսս.*) Մսերեանց Լ., Ի. Հայերէն բարբառախօսութիւն, 1898, ք.7, էջ 214-215, 2. Ուսումնասիրութիւններ վասն հայ բարբառախօսութեան, 1902, ք.1, էջ 15-16:

(*մտնիսս.*) Նոր հայագետ մը, 1890, ք.3, էջ 53-54:

«Նոր հայագիտին» երկրորդ երկասիրությունը, *լեզուաբանական*, 1891, ք.3, էջ 70-71: Ոսկեդարեան հայերենի խնդիրը, *գրական*, 1903, ք.9, էջ 225-234:

Պոկկե հայերենագիտին մոր մը երկասիրությունը, *գրական*, 1892, ք.1, էջ 20-21:

Ստ. Մալխասեան «Ձախող՝ լեզուայարդար», *լեզուաբանական*, 1910, ք.8, էջ 225-234:

